Հայաստանի Հանրապետության

Կադաստրի կոմիտե

Հարավային Ամերիկայի խոշոր ֆիզաշխարհագրական օբյեկտների տեղեկատու-բառարան

ԵՐԵՎԱՆ

Հարավային Ամերիկայի

խոշոր ֆիզաշխարհագրական օբյեկտների

տեղեկատու-բառարան

Տեղեկատու-բառարանն ընդգրկում է Հարավային Ամերիկայի խոշոր ֆիզաշ-խարհագրական օբյեկտների ընդհանուր բնութագրերը: Տեղեկատու-բառարանը նախատեսված է գիտական և կրթական համակարգի, ինչպես նաև ընթերցող լայն շրջանների համար:

ՆԱԽԱԲԱՆ

Հարգելի ընթերցող, Ձեզ ենք ներկայացնում Հարավային Ամերիկայի խոշոր ֆիզաշխարհագրական օբյեկտների տեղեկատու-բառարանը:

Ներկայացված տեղեկատու-բառարանում փորձ է արվել ի մի բերել Հարավային Ամերիկա մայրցամաքի խոշոր ֆիզաշխարհագրական օբյեկտների անվանումների հայեցի գրելաձևը, ինչպես նաև տրվել են նրանց մասին կարևոր տեղեկություններ, որոնք առավելապես բնութագրում են իրենց:

Տեղեկատու-բառարանն ընդգրկում է Հարավային Ամերիկայի 320 խոշոր ֆիզաշխարհագրական օբյեկտների ընդհանուր բնութագրերը, այդ թվում՝

- ֆիզաշխարհագրական օբյեկտի անվանումը հայերեն և պաշտոնական լեզվով (լեզուներով)
- ֆիզաշխարհագրական օբյեկտի բնութագրումը

Ֆիզաշխարհագրական օբյեկտների անվանումների տեղեկատու-բառարանը ներկայացված է այբբենական կարգով:

Նյութը մշակվել է Կադաստրի կոմիտեի Գեոմատիկայի կենտրոնի աշխարհագրական անվանումների խմբի աշխատակիցների կողմից:

ՏԵՂԵԿԱՏՈՒ-ԲԱՌԱՐԱՆՈՒՄ
ԳՈՐԾԱԾՎՈՂ ԿՐՃԱՏՈՒՄՆԵՐԸ

մ	-	մետր
մ^3/ վրկ	-	խորանարդ մետր /վայրկյան
կմ	-	կիլոմետր
կմ^2	-	քառակուսի կիլոմետր
կմ^3	-	խորանարդ կիլոմետր

Ա

ԱԳԻԼԱ - իսպաներեն Islote Águila. կղզի Չիլիում, Դիեգո Ռամիրես կղզեխմբի ամենահարավայինը: Այստեղ է գտնվում Հարավային Ամերիկայի հարավային կղզային ծայրակետը (56′ 32′ 15″ S, 68′ 43′ 10″ W):
Անվանումն իսպաներենից թարգմանաբար նշանակում է *Արծիվ*:

ԱԼՊԱՄԱՅՈ - իսպաներեն Alpamayo, կեչուա Shuyturahu. լեռ Պերուում՝ **Անդերի** Կորդիլյեռա Բլանկա լեռնաշղթայի Սանտա Կրուս զանգվածում: Բացարձակ բարձրությունը՝ 5 947 մ, հարաբերականը՝ 447 մ:
Լեռան այժմյան անվանումը կեչուա լեզվից թարգմանաբար նշանակում է *Գետի երկիր:*
Մեկ այլ վարկածի համաձայն լեռն իր անվանումը ստացել է համանուն գյուղից, որի անունը կեչուա լեզվում բառացի նշանակում է *Պղտոր (տղմոտ) գետ*:
Հայտնի է նաև Shuyturahu (shuytu *նեղ, երկար* և rahu *ձնե լեռ, սառցադաշտ*) անվամբ:

ԱԼՏԻՊԼԱՆՈ - իսպաներեն Altiplano, այմարա Qullaw. լայնարձակ սարահարթ **Անդերում՝** Բոլիվիայում, Չիլիում, Պերուում ու Արգենտինայում: Երկարությունը՝ շուրջ 1 500 կմ: Մակերեսը՝ 170 000 կմ^2: Բարձր կետը **Իլիմանի** գագաթն է 6 462 մ:
Անվանումն առաջացել է իսպաներեն alto *բարձր* և plano *հարթություն* բառերի միացումից՝ *Բարձր հարթություն*:

ԱԿԱՄԱՐԱՉԻ - իսպաներեն Volcán Acamarachi. ստրատոհրաբուխ Չիլիի հյուսիսային մասում՝ Պունա դե Ատակամա բարձրադիր սարահարթում: Բացարձակ բարձրությունը՝ 6 046 մ, հարաբերականը՝ 608 մ:
Acamarachi անվանումն այմարա լեզվից թարգմանաբար նշանակում է *Քարե խխունջ,* մեկ այլ վարկածի համաձայն՝ *Սև լուսին*:
Հայտնի է նաև Pili *Բաղ* անվամբ:

ԱԿՈՆԿԱԳՈՒԱ - իսպաներեն Aconcagua. լեռ Արգենտինայում՝ **Անդերի** ամենաբարձր գագաթը: Բարձրությունը՝ 6 960,8 մ:
Անվանումը հավանաբար առաջացել է մապուդունգուն լեզվի aconca *մյուս կողմից եկող*, կամ կեչուա լեզվի ackon *մեծ քար* և cahuak *նայել* բառերից:
Հայտնի է նաև Janq'u Q'awa *Սպիտակ խանդակ* և Kon Kawa *Սպիտակ պահապան* անուններով:

ԱԿՈՏԱՆԳՈ - իսպաներեն Volcán Acotango, կեչուա Aqutanku. ստրատոհրաբուխ Բոլիվիայի արևմուտքում՝ Չիլիի հետ սահմանամերձ գոտում: Ումարատա և Սեռո Կապուրատա հրաբուխների հետ միասին կազմում է Կիմսաչատա (այմարա լեզվում՝ *Երեք եղբայր*) հրաբխային խումբը: Բացարձակ բարձրությունը՝ 6 052 մ, հարաբերականը՝ 1 000 մ:
Անվանումը հավանաբար առաջացել է կեչուա լեզվի aqu (ego) *ավազ* և tanku (tambo) *իջևան* բառերի միացումից:

ԱՄԱԶՈՆ - պորտուգալերեն Rio Amazonas, իսպաներեն Río Amazonas. աշխարհի խոշորագույն գետը: Կազմավորվում է **Մարանյոն** ու Ուկայալի գետերի միախառնումից, հոսում արևելյան ուղղությամբ և կազմելով ավելի քան 100 000 կմ^2 մակերեսով դելտա,

թափվում Ատլանտյան օվկիանոս: Վտակներն են՝ **Ժուրուա**, **Պուրուս, Մադեյրա**, **Տապաժոս**, **Շինգու**, Իսա, **Ժապուրա**, **Նեգրու** և այլ գետեր: Երկարությունը՝ 6 992, 06 կմ (**Մարանյոնի** հետ), 7 062 կմ (Ուկայալիի հետ): Ջրի ծախսը 180 000-340 000 մ^3/վրկ: Ջրահավաք ավազանը՝ 7 000 050 կմ^2:
Նախկինում հայտնի էր Սանտա Մարիա դե լա Մար Դուլսե, Մար Դուլսե, Ռիո Գրանդե ի Օրելյանա անուններով:
Գետն իր անվանումը ստացել է նրա ափերին բնակվող հնդկացի կանանց անունից, որոնք հիացրին իսպանացիներին իրենց դեմ ուս ուսի մարտնչելով տղամարդկանց կողքին և աչքի ընկնելով քաջությամբ ու ռազմատենչությամբ: Դա իսպանացիներին հիշեցրել է *ամազոնուհիների* ցեղերի մասին հին հունական առասպելները և դրանց շնորհիվ գետը կոչվել է *Ամազոն* :

ԱՄՊԱՏՈ - իսպաներեն Ampato, այմարա Jamp'atu, կեչուա Hamp'atu (Waypuna) urqu. երկգագաթ ստրատոհրաբուխ Պերուի հարավում՝ Սաբանկայա լեռնաշղթայում: Բացարձակ բարձրությունը՝ 6 288 մ, հարաբերականը՝ 1 997 մ:
Անվանումն առաջացել է լեռան այմարա լեզվի Jamp'atu *Դողոշ* անունից:

ԱՆԳԼԻԱԿԱՆ ՆԵՂՈՒՑ - իսպաներեն Angostura Inglesa. նեղուց Չիլիի հարավային մասում՝ չիլիական **Պատագոնիայում**: Երկարությունը՝ 20,4 կմ:
Անվանումը ստացել է բրիտանացի ծովագնացների կողմից *Անգլիա* երկրի պատվին:

ԱՆԴԵՐ - իսպաներեն Cordillera de los Andes, կեչուա Antikuna, այմարա Andes. երկրագնդի ամենաերկար և բարձր լեռնահամակարգերից մեկը՝ Հարավային Ամերիկայում: Ձգվում են Վենեսուելայի, Կոլումբիայի, Էկվադորի, Պերուի, Բոլիվիայի, Չիլիի և Արգենտինայի տարածքներով: Երկարությունը՝ շուրջ 7 240 կմ, լայնությունը՝ մինչև 500 կմ: Մակերեսը՝ 3 370 794 կմ^2: Բարձր կետը **Ակոնկագուա** գագաթն է 6 960,8 մ:
Մեծ հավանականությամբ լեռների անվան հիմքում ընկած է կեչուա լեզվի anti *արևելք* բառը, ինչպես օրինակ ինկերի կայսրության 4 շրջաններից մեկի արևելյան Antisuyo շրջանի անունը:
Մեկ այլ վարկածի համաձայն, Andes անվանումը այմարա լեզվից բառացի նշանակում է *Բարձր կատար* :

ԱՆԽԵԼ - իսպաներեն Salto Ángel. ազատ անկմամբ աշխարհի ամենաբարձր ջրվեժը Վենեսուելայում՝ համանուն գետի վրա: Ունի 2 սանդղավանդ: Անկման բարձրությունը՝ 979 մ (մեկ այլ տվյալի համաձայն՝ 1054 մ), լայնությունը՝ 107 մ: Ջրի ծախսը՝ 300 մ^3/վրկ: Անվանվել է ամերիկացի օդաչու Ջեյմս Քրոուֆորդ Էյնջելի (անգլ. James Crawford **Angel**) պատվին:
Ջրվեժի հնդկացիական Kerepakupai-merú անվանումը պեմոն լեզվից բառացի նշանակում է *Ցատկել ամենախորը տեղից* :

ԱՆԿՈՆ ԴԵ ՍԱՐԴԻՆԱՍ - իսպաներեն Ancón de Sardinas. Խաղաղ օվկիանոսի ծոց Կոլումբիայում ու Էկվադորում:
Անվանումն իսպաներենից թարգմանաբար նշանակում է *Սարդինաների* (ձկան տեսակ) *ծովախորշ* :

ԱՆԿՈՈՒՄԱ - իսպաներեն Ancohuma, այմարա Janq'u Uma. լեռ Բոլիվիայի արևմտյան մասում, Կենտրոնական **Անդերում՝** Կորդիլյեռա Ռեալ լեռնաշղթայի հյուսիսում: Բացարձակ բարձրությունը՝ 6 427 մ, հարաբերականը՝ 1 957 մ:

Անվանումը լեռան այմարա լեզվի Janq'u Uma *Սպիտակ ջուր* անվան ձևափոխության արդյունք է:

ԱՆԿՈՒԴ - իսպաներեն Golfo de Ancud. ծոց Չիլիի հարավում՝ նրա մայրցամաքային և **Մեծ Չիլոե** կղզու միջև:
Անվանումը հնդկացիական մապուդունգուն լեզվից թարգմանաբար նշանակում է *Մեծ հովիտ*:

ԱՆՏԻՍԱՆԱ - իսպաներեն Volcán Antisana. ստրատոհրաբուխ **Անդերում՝** Էկվադորում: Հրաբխի խառնարանի տրամագիծը՝ 1400-1800 մ է: Բացարձակ բարձրությունը՝ 5 704 մ, հարաբերականը՝ 1 678 մ:
Անվանումն իսպաներենից թարգմանաբար նշանակում է *Անառողջ*:

ԱՆՏՈՖԱԼՅԱ - իսպաներեն Volcán Antofalla. եռագագաթ ստրատոհրաբուխ Արգենտինայի հյուսիս- արևմուտքում, Ունա դե Ատակամա սարահարթի եզրին: Բացարձակ բարձրությունը՝ 6 440 մ, հարաբերականը՝ 1 957 մ:
Նախկինում հայտնի էր *Անտիոֆակ* և *Անտոֆայա* անուններով:
Այժմյան անվանումն առաջացել է հնդկացիական կունսա մեռած լեզվից և բառացի նշանակում էր *Վայր, որտեղ մահանում է արևը*:

ԱՏԱԿԱՄԱ - իսպաներեն Desierto de Atacama. քարավազային անապատ Հարավային Ամերիկայի արևմուտքում՝ Չիլիում: Երկարությունը՝ 1 600 կմ, լայնությունը՝ մինչև 180 կմ: Մակերեսը՝ 104 903 կմ^2: Բարձրությունը՝ 0 - 4 678 մ:
Մեծ հավանականությամբ անվանումն առաջացել է կեչուա լեզվի tacama *սև բաղ* կամ pat'acama *մարդկանց հանդիպում* բառերից:
Մեկ այլ վարկածի համաձայն անվանումն առաջացել է tecama *ցուրտ է* բառից կամ acca ich-camar sajnema *ես գնում եմ գյուղ* արտահայտության աղճատումից:

ԱՐԱԳՈՒԱՅԱ - պորտուգալերեն Rio Araguaia. գետ Բրազիլիայում, **Տոկանտինս** գետի ձախ վտակը: Վտակներն են՝ Մարյեմբերու, Ռիու դաս Մորտիս, Ֆորմոզու, Կոկու, Լոնտրա և այլ գետեր: Երկարությունը՝ 2 115 կմ: Ջրի ծախսը՝ 5 400 մ^3/վրկ: Ջրահավաք ավազանը՝ 86 109 կմ^2:
Անվանումն առաջացել է մի շարք հնդկացիական լեզուներում Diopsittaca nobilis տեսակի թութակի *Արագուայա* անունից:

ԱՐԱԿԱՐ - իսպաներեն Volcán Aracar. ստրատոհրաբուխ Արգենտինայի հյուսիս-արևմուտքում՝ Չիլիի հետ սահմանամերձ գոտում: Բացարձակ բարձրությունը՝ 6 095 մ, հարաբերականը՝ 1 791 մ:
Անվանումը հնդկացիական կունսա մեռած լեզվում նշանակում էր *Կմախքներ ու ոսկորներ,* կամ *վայր, որտեղ կան ոսկորներ*:

ԱՐԱՅԱ - իսպաներեն Península de Araya. լայնակի ձգված թերակղզի Վենեսուելայում: Համարվում է Կարիբյան Անդերի Մերձափնյա Սյեռա լեռնաշղթայի շարունակությունը՝ ողողվում է Կարիբյան ծովով: Երկարությունը՝ մոտ 150 կմ, լայնությունը՝ մինչև 19 կմ:
Անվան հիմքում ընկած է բասկերեն araya *հովտալանջ* բառը:
Մեկ այլ վարկածի համաձայն անվանումը բասկերենից թարգմանաբար նշանակում է *Ձկնիկ*:

ԱՐԱՈՒԿՈ - իսպաներեն Bahía de Arauco. Խաղաղ օվկիանոսի ծոց Չիլիի հարավում: Անվանումը հնդկացիական մապուդունգուն լեզվից բառացի նշանակում է *Կրաջուր*:

ԱՐԳԵՆՏԻՆԱԿԱՆ ԾՈՎ - իսպաներեն Mar argentino. երբեմն այդպես է կոչվում Արգենտինայի մայրցամաքային շելֆը ընդգրկող Ատլանտյան օվկիանոսի հարավարևմտյան մասը: Միջին խորությունը՝ 1 205 մ, առավելագույնը՝ 2 224 մ: Մակերեսը՝ 990 000 կմ^2: Ծավալը՝ 1 192 950 կմ^3: Ափագծի երկարությունը՝ 4 725 կմ:
Անվանումը ստացել է *Արգենտինա* երկրից:

ԱՐԳԵՆՏԻՆԱԿԱՆ ՄԵՍՈՊՈՏԱՄԻԱ - իսպաներեն Mesopotamia argentina, պորտուգալերեն Mesopotâmia argentina. աշխարհագրական մարզ Արգենտինայում՝ **Լա Պլատա ցածրավայրի** մի մասը: Եզերված է **Պարանա**, **Ուրուգվայ**, **Իգուասու**, Սան Անտոնյո և Պեպիրի Գուասու գետերով:
Նախկինում հայտնի էր *Մեգապոտամիա* անվամբ:
Այժմյան անվանումը ստացել է իր աշխարհագրական առանձնահատկության շնորհիվ:
Հայտնի է նաև *Միջագետք* անվամբ:

ԱՐԵՎԵԼՅԱՆ ԿՈՐԴԻԼՅԵՌԱ - իսպաներեն Cordillera Oriental. խոշոր լեռնահամակարգ Կոլումբիայում, **Կենտրոնական Կորդիլյեռայից** արևելք՝ կոլումբիական Անդերի երեք ճյուղավորություններից արևելյանը: Երկարությունը՝ 924 կմ, լայնությունը՝ մինչև 417 կմ: Մակերեսը՝ 144 252 կմ^2: Բարձր կետը **Ռիտակուբա Բլանկո** գագաթն է 5 410 մ:
Անվանումն իսպաներենից թարգմանաբար նշանակում է *Արևելյան լեռներ*:

ԱՐԵՎԵԼՅԱՆ ՖՈԼԿԼԵՆԴ - անգլերեն East Falkland, իսպաներեն Isla Soledad. կղզի Ատլանտյան օվկիանոսի հարավ-արևելքում՝ **Ֆոլկլենդյան կղզեխմբի** արևելյանը: Կղզին բաժանվում է երկու՝ հյուսիսային և հարավային (Լաֆոնիա) մասերի, որոնք միացված են 2,4 կմ լայնություն ունեցող նեղ պարանոցով: Մակերեսը՝ 6 605 կմ^2: Ափագծի երկարությունը՝ 1 036,9 կմ: Բարձր կետը Օսբոռն/Ալբերդի գագաթն է 705 մ:
Անվանվել է *Էնտոնի Քերի, Ֆոլկլենդ 5-րդ վիկոնտի* պատվին:

ԱՐԵՎՄՏՅԱՆ ԿՈՐԴԻԼՅԵՌԱ - իսպաներեն Cordillera Occidental. խոշոր լեռնահամակարգ Կոլումբիայում, **Կենտրոնական Կորդիլյեռայից** արևմուտք՝ կոլումբիական Անդերի երեք ճյուղավորություններից ամենացածրն ու արևմտյանը: Երկարությունը՝ 1 200 կմ, լայնությունը՝ մինչև 376 կմ: Մակերեսը՝ 86 239կմ^2: Բարձր կետը Սեռո Տատամա գագաթն է 4 200 մ:
Անվանումն իսպաներենից թարգմանաբար նշանակում է *Արևմտյան լեռներ*:

ԱՐԵՎՄՏՅԱՆ ՖՈԼԿԼԵՆԴ - անգլերեն West Falkland, իսպաներեն Isla Gran Malvina. կղզի Ատլանտյան օվկիանոսի հարավ- արևելքում՝ **Ֆոլկլենդյան կղզեխմբի** արևմտյանը: Մակերեսը՝ 4 532 կմ^2: Ափագծի երկարությունը՝ 1 258,7 կմ: Բարձր կետը Ադամ / Ինդեպենդենսյա գագաթն է 699 մ:
Անվանվել է *Էնտոնի Քերի, Ֆոլկլենդ 5-րդ վիկոնտի* պատվին:

ԱՐԻՍԱՐՈ - իսպաներեն Salar de Arizaro. աղուտ Արգենտինայի հյուսիս-արևմուտքում: Երկարությունը՝ մինչև 100 կմ, լայնությունը՝ մինչև 50 կմ: Մակերեսը՝ 1 600 կմ^2: Միջին բարձրությունը՝ 3 460 մ:
Անվանումն առաջացել է հնդկացիական կունսա մեռած լեզվի haâri *ագռավ* կամ *կոնդոր* և ara կամ aro *կացարան* բառերի միացումից:

Մեկ այլ վարկածի համաձայն անվանումն առաջացել է կեչուա լեզվի ari-saru *վնասակար հետքեր* արտահայտությունից:

ԱՐԽԵՆՏԻՆՈ - իսպաներեն Lago Argentino. քաղցրահամ լիճ Արգենտինայում: Երկարությունը՝ մինչև 65 կմ, լայնությունը՝ մինչև 19 կմ: Մակերեսը՝ 1 415 կմ^2: Միջին խորությունը՝ 150 մ, առավելագույնը՝ 500 մ: Ծավալը՝ 212,25 կմ^3: Հայելու մակերեսի բարձրությունը՝ 179 մ: Ափագծի երկարությունը շուրջ 640 կմ է: Ջրահավաք ավազանը՝ 17 000 կմ^2: Լիճն են թափվում Աֆլյուենտես, Սենտինելա, Միտրե, Կալաֆատե, Օրկետա, Կաբալյոս և այլ գետեր, իսկ արտահոսում՝ Սանտա Կրուս գետը:
Նախկինում հայտնի էր Կելտա, Սանտա Կրուս անուններով:
Այժմյան անվանումը լիճը ստացել է գիտնական, բնագետ և քաղաքական գործիչ Ֆրանսիսկո Պասկասյո Մորենոյի կողմից ի պատիվ *Արգենտինա* երկրի:

ԱՐՈՒԲԱ - նիդերլանդերեն Aruba, պապյամենտու Aruba. կղզի Կարիբյան ծովի հարավում, Փոքր Անտիլյան կղզիներից ամենաարևմտյանը, Վենեսուելայի ափերի մոտ: Երկարությունը՝ մինչև 30 կմ, լայնությունը՝ մինչև 9 կմ: Մակերեսը 178,91 կմ^2: Բարձր կետը Յամանոտա գագաթն է 188 մ:
Անվանումն առաջացել է հնդկացիերեն ora ouba *խեցիների կղզի* կամ իսպաներեն ora hubo *այստեղ եղել է ոսկի* արտահայտություններից:

ԱՈՒԿԱՆԿԻԼՉԱ - իսպաներեն Volcán Aucanquilcha, կեչուա Awqankilcha. քառագագաթ ստրատոհրաբուխ **Անդերում**՝ Չիլիի հյուսիսային մասում: Բացարձակ բարձրությունը՝ 6 176 մ, հարաբերականը՝ 2 165 մ:
Անվանումը հավանաբար առաջացել է այմարա լեզվի aukka *դև* և kullu *բլուր* բառերի միացումից՝ *Դիվաբլուր*:
Մեկ այլ վարկածի համաձայն, անվանումն առաջացել է auqa (aukka) *թշնամի, դաժան* և kichka (khiska) *փուշ* բառերի միացումից:

ԱՈՒՍԱՆԳԱՏԵ - իսպաներեն Ausangate, կեչուա Awsanqati rit'i urqu. լեռ Պերույում՝ պերուական Անդերի Կորդիլյեռա դե Վիլկանոտա լեռնաշղթայում: Բացարձակ բարձրությունը՝ 6 384 մ, հարաբերականը՝ 2 085 մ:
Անվանումը մի շարք հնդկացիական լեզուներից թարգմանբար նշանակում է *Ջրերի արարիչ*:

Բ

ԲԱՆԱՆԱԼ - պորտուգալերեն Ilha do Bananal. գետային կղզի Բրազիլիայում՝ **Արագուայա** գետի միջին հոսանքի շրջանում: Համարվում է աշխարհի խոշորագույն գետային կղզին: Երկարությունը՝ մինչև 320 կմ, լայնությունը՝ մինչև 60 կմ: Մակերեսը՝ 19 162, 25 կմ^2:
Նախկինում հայտնի էր *Սանտանա* անվամբ:
Անվանվել է այստեղ *առամաթզի (բանանի)* լայն տարածման պատճառով:

ԲԱՌԱԳԱՆ - իսպաներեն Ensenada de Barragán. հյուսիս-արևմուտքից Լարա, իսկ հարավ-արևելքից՝ Սանտյագո հրվանդաններով եզերված ծովախորշ Արգենտինայի արևելքում:

1629 թ-ին անվանումը ստացել է ծովախորշի մոտ գտնվող հողերի տեր *Անտոնյո Գուտ-յերես Բառագանի* պատվին:

ԲԵՅՔԵՐ - իսպաներեն Canal Baker. ծոց Չիլիի հարավում: Երկարությունը՝ մինչև 104,6 կմ, լայնությունը՝ մինչև 12,9 կմ:
Անվանվել է Խաղաղ օվկիանոսի հարավային մասի բրիտանական նավատորմի ղեկա-վար՝ փոխծովակալ *սըր Թոմաս Բեյքերի* պատվին:
Հայտնի է նաև *Կալեն* անվամբ:

ԲԵՆԻ - իսպաներեն Río Beni. գետ Բոլիվիայում: Կազմավորվում է Բոոպի և Կոտակա-խես գետերի միախառնումից: Վտակներն են՝ Սանտա Էլենա, Մաչարյապո, Մադիդի, **Մադրե դե Դյոս** և այլ գետեր: Երկարությունը՝ 1 619 կմ: Ջրի ծախսը՝ 10 250 մ^3/վրկ: Ջրահավաք ավազանը՝ 283 350 կմ^2:
Անվանումը հավանաբար առաջացել է հնդկացիական տականա լեզվից և թարգմանա-բար նշանակում է *Քամի*:

ԲԵՆԽԱՄԻՆ - իսպաներեն Isla Benjamín. բլրոտ կղզի Չիլիում՝ **Չոնոս** կղզեխմբում: Ափերը զառիթափ են: Երկարությունը՝ 45,3 կմ, լայնությունը՝ 24,2 կմ: Մակերեսը՝ 618,2 կմ^2: Ափագծի երկարությունը՝ 215,9 կմ: Բարձր կետը՝ 874 մ:
Կղզու անվանումը *Բենյամին* անվան իսպաներեն արտասանությունն է:

ԲԵՐՄԵԽՈ - իսպաներեն Río Bermejo. գետ Բոլիվիայում և Արգենտինայում, **Պարագվայ** գետի աջ վտակը: Սկիզբ է առնում Կենտրոնական Անդերի Սյեռա դե Սանտա Վիկտորյա լեռնաշղթայի արևելյան լանջերից և հոսելով հարավարևելյան ուղղությամբ, Պուերտո Բերմեխո բնակավայրից հյուսիս-արևելք թափվում մայր գետ: Վտակներն են՝ Գրանդե դե Տարիխա, Սան Ֆրանսիսկու, Իռույա, Լիպեո և այլ գետեր: Երկարությունը՝ 1 450: Ջրի ծախսը՝ 380 մ^3/վրկ: Ջրահավաք ավազանը՝ 123 162 կմ^2:
Միջին հոսանքի շրջանում գետը կրում է Տեուկո անունը:
Անվանումն իսպաներենից թարգմանաբար նշանակում է *Կարմրաշագանակագույն գետ*:
Հայտնի է նաև Իպիտա անվամբ:

ԲԻԳԼ - իսպաներեն Canal Beagle. **Մեծ Հրո երկիր** կղզին իրենից հարավ գտնվող **Օստե**, **Նավարինո** և այլ ավելի փոքր կղզիները բաժանող նեղուց: Իրար է միացնում Խաղաղ և Ատլանտյան օվկիանոսները: Երկարությունը՝ 280 կմ, լայնությունը՝ 5-6 կմ:
Անվանվել է բրիտանական "Beagle" նավի պատվին, որով Չարլզ Դարվինը իր հռչակա-վոր ճանապարհորդության ժամանակ շրջանցեց Հարավային Ամերիկան:

ԲՈՆԵՅՐԵ - նիդերլանդերեն Bonaire, պապյամենտու Boneiru. կղզի Կարիբյան ծովում, Փոքր Անտիլների Հողմատակ կղզիների խմբում: Երկարությունը՝ 36 կմ, լայնությունը՝ մինչև 21 կմ: Մակերեսը՝ 288 կմ^2: Բարձր գագաթը Բրանդարիս բլուրն է 240,4 մ:
Անվան հիմքում ընկած է հնդկացիական կակետիո լեզվի bonay *ցածրվայր* բառը, որը հետագայում ձևափոխվելով ստացել է ներկայիս տեսքը:

ԲՈՆԵՏԵ - իսպաներեն Cerro Bonete Chico. հրաբուխ **Անդերում՝** Արգենտինայում: Բա-ցարձակ բարձրությունը՝ 6 759 մ , հարաբերականը՝ 1 459 մ:
Անվանումն իսպաներենից թարգմանաբար նշանակում է *Կափարիչ*:

ԲՈՆՊԼԱՆ - իսպաներեն Pico Bonpland. Վենեսուելայի բարձրությամբ 4-րդ գագաթը՝ **Անդերի** Սյեռա Նևադա դե Մերիդա լեռներում: Բարձրությունը՝ 4 883 մ:
Անվանվել է ֆրանսիացի բուսաբան և հետազոտող *Էմե Ժակ Ալեքսանդր Գուժո Բոնպլանի* պատվին:

ԲՐԱԶԻԼԱԿԱՆ ՍԱՐԱՀԱՐԹ - պորտուգալերեն Planalto Brasileiro. Բրազիլիայի արևելքի, հարավի և կենտրոնի զգալի մասը զբաղեցնող աշխարհագրական մարզ: Երկարությունը՝ շուրջ 3 500 կմ, լայնությունը՝ մինչև 3 200 կմ: Մակերեսը՝ մոտ 4 000 000 կմ^2: Աշխարհագրորեն բաժանվում է 3 մասի՝ Ատլանտյան, Կենտրոնական և Հարավային սարահարթերի: Բարձր կետը Բանդեյրա գագաթն է 2 891,32 մ:
Անվանումը ստացել է *Բրազիլիա* երկրից:

ԲՐԱՆՍՈՒԻԿ - իսպաներեն Península de Brunswick. խոշոր, լեռնոտ թերակղզի Չիլիի հարավում: Արևելքից և հարավից ողողվում է **Մագելանի նեղուցի**, իսկ հյուսիս-արևմուտքից Օթուեյ ծոցի ջրերով: Թերակղզում է գտնվում Հարավային Ամերիկայի մայրցամաքային հարավային ծայրակետը՝ **Ֆրոուարդ** հրվանդանը: Երկարությունը՝ 115 կմ, լայնությունը՝ մինչև 80 կմ: Մակերեսը՝ մոտ 6 300 կմ^2: Բարձր կետը Մուրելա գագաթն է 1 227 մ:
Անվանվել է անգլիացի ծովագնացների կողմից, պրուսական բանակի գեներալ *իշխան Ֆրիդրիխ Վիլհելմ ֆոն Բրաունշվեյգ Վոլֆենբյուտելի* պատվին:

ԲՈՒԵՆ ՍՈՒԿԵՍՈ - իսպաներեն Bahía Buen Suceso. փոքր ծոց Արգենտինայի հարավում՝ **Մեծ Հրո երկիր** կղզու Միտրե թերակղզու ափի մոտ:
1619թ-ի հունվարի 23-ին իսպանացի ծովագնաց Բարտոլոմե Գարսիա դե Նոդալի ղեկավարած արշավախմբի կողմից ստացել է իր այժմյան անվանումը, որը թարգմանաբար նշանակում է *Պատվական հաջողություն*:

ԲՈՒԵՆԱՎԵՆՏՈՒՐԱ - իսպաներեն Bahía de Buenaventura. Խաղաղ օվկիանոսի ծոց Կոլումբիայի ափերի մոտ: Երկարությունը՝ 38,5 կմ, լայնությունը՝ մինչև 24,7 կմ: Մակերեսը՝ 681,9 կմ^2: Միջին խորությունը՝ 27,4 մ: Ծավալը՝ 18,7 կմ^3:
Իսպաներեն Bahía de Buenaventura անվանումը թարգմանաբար նշանակում է *Հաջողության ծոց*:

Գ

ԳԱԼԱՊԱԳՈՍ - իսպաներեն Archipiélago de Colón / Archipiélago de Galápagos. կղզեխումբ Խաղաղ օվկիանոսում՝ Հարավային Ամերիկայից 972 կմ հեռավորության վրա: Կազմված է 13 խոշոր, 9 փոքր և 107 կղզյակներից ու ժայռերից: Մակերեսը՝ 8 010 կմ^2: Բարձր կետը Վուլֆ հրաբուխն է 1 707 մ Իսաբելա կղզում:
Կղզեխումբը հայտնի էր Հիասքանչ կղզիներ անվամբ:
Անվանումն իսպաներեն է և բառացի նշանակում է *Ցամաքային կրիաներ*:
Էկվադորում կղզիները հայտնի են *Կոլոնի* կղզեխումբ անվամբ՝ ի պատիվ *Ք. Կոլումբոսի*:

ԳԱԼԵՐԱՍ - իսպաներեն Volcán Galeras. գործող ստրատոհրաբուխ Կոլումբիայում՝ **Անդերի** Կենտրոնական Կորդիլյեռա լեռներում: Բացարձակ բարձրությունը՝ 4 276 մ

(2019 թ.), հարաբերականը՝ 2 035 մ: Մակերեսը՝ 76,8 կմ^2: Խառնարանի տրամագիծը՝ 320 մ, խորությունը՝ 80 մ:
Նախկինում հայտնի էր *Պաստո* և *Լաս Գալերաս* անուններով:
Ծնորհիվ նրա, որ հրաբխի տեսքը նմանվում է *Թիանավի (գալերայի),* իսպանացիները XVI դարում այն անվանեցին Galeras:
Տեղաբնիկների՝ կիլյասինգա հնդկացիների մոտ հրաբուխը հայտնի է Ուրկունինա *Կրակի սար* անվամբ:

ԳԱԼՅԻՆԱՍ - իսպաներեն Punta Gallinas. հրվանդան Կոլումբիայում, **Լա Գուախիրա** թերակղզում, Կարիբյան ծովի ափին, Հարավային Ամերիկայի հյուսիսային մայրցամաքային ծայրակետը 12′ 27′ 28″ N, 71′ 39′ 56″ W կոորդինատներով:
Նախկինում հայտնի էր նաև *Հենա* անվամբ:
Այժմյան անվանումն իսպաներենից թարգմանաբար նշանակում է *Հավերի հրվանդան*:

ԳՈԿՏԱ - իսպաներեն Catarata Gocta. երկսանդղավանդ ջրվեժ Պերույում, համանուն գետի վրա՝ աշխարհի ամենաբարձրներից մեկը: Անկման բարձրությունը՝ 771 մ:
Անվանումը ստացել է մոտակա *Գոկտա* գյուղից:
Հայտնի է նաև *Լա Չոռերա* անվամբ:

ԳՎԻԱՆԱԿԱՆ ՎԱՀԱՆ - իսպաներեն Escudo guayanés, պորտուգալերեն Escudo das Guianas, անգլերեն Guiana Shield, ֆրանսերեն Plateau des Guyanes. սարահարթ **Ամազոն** ու **Օրինոկո** գետերի և Գվիանական մերձափնյա ցածրավայրի միջև՝ Վենեսուելայում, Գայանայում, Սուրինամում, Ֆրանսիական Գվիանայում և Բրազիլիայում: Երկարությունը՝ 1 930 կմ: Բարձր կետը **Նեբլինա** գագաթն է 2 995,3 մ:
Անվանումը վահանի իսպաներեն Escudo guayanés և պորտուգալերեն Escudo das Guianas անվան հայերեն պատճենումն է:

ԳՐԱՆ ՉԱԿՈ - իսպաներեն Gran Chaco, կեչուա Hatun Chaku, պորտուգալերեն Chaco. կիսաանապատային լանդշաֆտ ունեցող արևադարձային մարզ **Պարանա** գետի ավազանում: Վարչականորեն բաժանված է Բոլիվիայի, Պարագվայի (հյուսիս-արևմուտք), Արգենտինայի ու Բրազիլիայի միջև: Մակերեսը՝ 1 391 000 կմ^2: Աշխարհագրորեն բաժանվում է 3 մասերի՝ Չակո Բորեալ, Չակո Սենտրալ և Չակո Աուստրալ:
Անվանումն առաջացել է իսպաներեն gran *մեծ* և կեչուա լեզվի chaku *որսատեղի,* բառերից՝ *Մեծ որսատեղի*:

ԳՐԱՆԴԵ - իսպաներեն Río Grande / Río Guapay. գետ Բոլիվիայում, **Մամորե** գետի աջ վտակը: Կազմավորվում է Կայնե ու Սան Պեդրո գետերի միախառնումից և հոսելով արևելյան, հյուսիսային, ապա հյուսիսարևմտյան ուղղությամբ, թափվում մայր գետը: Վտակներն են՝ Ասերո, Պայլա, Յապականի և այլ գետեր: Երկարությունը՝ 1 438 կմ: Ջրի ծախսը՝ 800 մ^3/վրկ: Ջրահավաք ավազանը՝ 101 902,2 կմ^2:
Անվանումն իսպաներենից թարգմանաբար նշանակում է *Մեծ գետ*:
Հայտնի է նաև Գուապոյ անվամբ:

ԳՐԱՆԴԻ - պորտուգալերեն Rio Grande. գետ կենտրոնական Բրազիլիայի հարավային մասում, **Պարանա** գետի ձախ ակունքը: Սկիզբ է առնում Սեռա դա Մանտիկեյրա լեռներից և հիմնականում հոսելով արևմտյան ուղղությամբ, Ֆե դու Սուլ բնակավայրի մոտ միախառնվելով Պարանաիբա գետի հետ կազմավորում **Պարանա** գետը: Վտակներն են՝

Պարդու, Տուրվու, Վերդի և այլ գետեր: Երկարությունը՝ 1 360 կմ: Ջրի ծախսը՝ 2 400 մ^3/վրկ: Ջրահավաք ավազանը՝ 143 000 կմ^2:
Անվանումը պորտուգալերենից թարգմանաբար նշանակում է *Մեծ*:

ԳՈՒԱԺԱՐԱ - պորտուգալերեն Baía do Guajará. Մարաժո ծոցի ծովախորշ Բրազիլիայի հյուսիս-արևելքում: Հանդիսանում է Գուամա և Ակարա գետերի գետաբերանը:
Անվանումը հնդկացիական տուպի լեզվից բառացի նշանակում է *Նկարազարդված մարդ*:

ԳՈՒԱՅԱԿԻԼ - իսպաներեն Golfo de Guayaquil. Խաղաղ օվկիանոսի ծոց Էկվադորում ու Պերուլում: Մխրճվում է մայրցամաքի մեջ շուրջ 115 կմ երկարությամբ: Առավելագույն լայնությունը՝ 230 կմ: Խորությունը՝ մինչև 200 մ: Ծոցն է թափվում Գուայաս գետը: Անվանումը ստացել է Էկվադորի *Գուայակիլ* քաղաքից:

ԳՈՒԱՆԱԲԱՐԱ - պորտուգալերեն Baía de Guanabara. ծովախորշ Բրազիլիայի հարավ-արևելքում: Երկարությունը՝ 31 կմ, լայնությունը՝ 28 կմ: Միջին խորությունը՝ 5 մ, առավելագույնը՝ 17 մ: Մակերեսը՝ 384 կմ^2: Ծավալը՝ 1,92 կմ^3: Ափագծի երկարությունը՝ 131 կմ: Ջրահավաք ավազանը՝ 4 080 կմ^2:
Անվանումը կազմված է հնդկացիական տուպի լեզվի guana *կուրծք* և bara *ծով* բառերի միացումից:
Հայտնի է նաև *Իգուա Մբարա* անվամբ:

ԳՈՒԱՊՈՐԵ - պորտուգալերեն Rio Guaporé, իսպաներեն Río Iténez. գետ Բրազիլիայում և Բոլիվիայում, **Մամորե** գետի աջ վտակը: Երկարությունը՝ 1 520 կմ: Ջրի ծախսը՝ 2 740 մ^3/վրկ: Ջրահավաք ավազանը՝ 266 460 կմ^2:
Գետը Բոլիվիայում հայտնի է Իտենես անվամբ:
Գուապորե անվանումը հավանաբար առաջացել է գուարանի լեզվից և բառացի նշանակում է *Անապատային հովիտ*:

ԳՈՒԱՎՅԱՐԵ - իսպաներեն Río Guaviare. գետ Կոլումբիայում, **Օրինոկոյի** ձախ վտակը: Կազմավորվում է Արյարի և Գուայաբերո գետերի միախառնումից և հոսելով արևելյան ուղղությամբ, Վենեսուելայի հետ սահմանին՝ Սան Ֆերնանդո դե Ատաբարո բնակավայրի մոտ թափվում մայր գետը: Վտակներն են՝ Մապիրիպան, Ուվա, Ինիրիդա և այլ գետեր: Երկարությունը՝ 1 497 կմ: Ջրի ծախսը՝ 7 400 մ^3/վրկ: Ջրահավաք ավազանը՝ 140 000 կմ^2:
Անվանվել է հնդկացիական *գուաբյարի* ցեղերի պատվին:

ԳՈՒԱՖՈ - իսպաներեն Guafo. բլրապատ կղզի Չիլիում: Արևմուտքից ողողվում է Խաղաղ օվկիանոսի, իսկ արևելքից՝ համանուն ծոցի ջրերով: Երկարությունը՝ 22,9 կմ, լայնությունը՝ 18,2 կմ: Մակերեսը՝ 300 կմ^2: Բարձր կետը՝ 350 մ:
Անվան հիմքում հավանաբար ընկած է հնդկացիական մապուդունգուն լեզվի wafün *ժանիք* բառը:

ԳՈՒԻԱ - իսպաներեն Angostura Guía. նեղուց Չիլիի հարավում՝ չիլիական Անտարկտիկայում: Երկարությունը՝ 33,4 կմ, լայնությունը՝ 0,37-2,22 կմ:
Անվանվել է իսպանացի ծովագնաց Պեդրո Սարմյենտո դե Գամբոայի կողմից 1579-80 թթ. ղեկավարած "Nuestra Señora de Guía" *Առաջնորդող Աստվածամայր* նավից:

Դ

ԴԱՐՅԵՆԻ ԾՈՑ - իսպաներեն Golfo de Darién. ծոց Կարիբյան ծովի հարավարևմտյան մասում, Պանամայում ու Կոլումբիայում: Երկարությունը՝ 165 կմ: Առավելագույն խորությունը՝ ավելի քան 2000 մ:
Ծոցի իսպաներեն Golfo de Darién անվանումն առաջացել է այս վայրերում հոսող Ատրատո գետին հնդկացիական կուևա ցեղի կողմից տրված Tanela անվան աղավաղման արդյունքում:

ԴԱՐՎԻՆ - իսպաներեն Isla Darwin. կղզի Էկվադորում, **Գալապագոս** կղզիներում: Այստեղ է գտնվում Հարավային Ամերիկայի արևմտյան կղզային ծայրակետը (1′ 40′ 40.8″ N, 92′ 0′ 10.8″ W): Երկարությունը՝ 1,2 կմ, լայնությունը՝ 0,8 կմ: Մակերեսը՝ 1,06 կմ^2: Բարձր կետը՝ 168 մ:
Նախկինում հայտնի էր *Քալփափեր* անվամբ:
Այժմյան անվանումը տրվել է բրիտանացի բնագետ *Չառլզ Դարվինի* պատվին:

ԴԵՍՈԼԱՍՅՈՆ - իսպաներեն Isla Desolación. լեռնոտ կղզի **Մագելանի նեղուցի** արևմտյան մասում: Երկարությունը՝ մինչև 115 կմ, լայնությունը՝ մինչև 20 կմ: Մակերեսը՝ 1 352 կմ^2: Ափագծի երկարությունը՝ 866,1 կմ: Բարձր կետը Արտե Դիկե գագաթն է 1 128 մ:
Անվանումն իսպաներենից թարգմանաբար նշանակում է *Ամայի կղզի*:

ԴԻԿՍՈՆ - իսպաներեն Glaciar Dickson. սառցադաշտ Հարավային Ամերիկայի հարավային մասում՝ Արգենտինայի ու Չիլիի սահմանգլխին: Երկարությունը՝ 10 կմ: Մակերեսը՝ 71 կմ^2: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 420 մ:
Անվանվել է շվեդ հետազոտող և ճանապարհորդ Օտտո Նորդենշելդի կողմից, շոտլանդական ծագմամբ շվեդ մեծահարուստ վաճառական, արդյունաբերող և մեկենաս *Օսկար ֆոն Դիկսոնի* պատվին:

ԴՈՄՈՒՅՈ - իսպաներեն Volcán Domuyo. ստրատոհրաբուխ Արգենտինայում՝ **Պատագոնիայի** հյուսիս-արևմուտքում: Բացարձակ բարձրությունը՝ 4 709 մ, հարաբերականը՝ 2 229 մ:
Անվանումն առաջացել է հնդկացիական մապուչե լեզվից և բառացի նշանակում է *Դողալ* կամ *Փնթփնթալ*:
Հայտնի է նաև El Techo de la Patagonia *Պատագոնիայի տանիք* անվամբ:

ԴՈՈՒՍՈՆ - իսպաներեն Isla Dawson. կղզի Չիլիի հարավում՝ **Մագելանի նեղուցում**: Երկարությունը՝ մինչև 70 կմ, լայնությունը՝ մինչև 25 կմ: Մակերեսը՝ 1 290,3 կմ^2: Ափագծի երկարությունը՝ 285,3 կմ: Բարձր կետը՝ 975 մ:
1828 թ-ին անվանվել է Ֆիլիպ Պարկեր Քինգի և Ռոբերտ Ֆից Ռոյի կողմից ղեկավարված անգլիական հետազոտական արշավախմբի նավաստիներից մեկի՝ ոմն *Դոուսոնի* պատվին:

ԴՐԵՅՔԻ ՆԵՂՈՒՑ - անգլերեն Drake Passage, իսպաներեն Pasaje de Drake. Ատլանտյան և Խաղաղ օվկիանոսները իրար միացնող նեղուց Հարավային Ամերիկայի և Անտարկտիկական թերակղզու միջև: Նվազագույն լայնությունը՝ 808 կմ: Առավելագույն խորությունը՝ ավելի քան 5 000 մ:

Անվանվել է հայտնի բևեռախույզ Էռնեստ Շեկլտոնի կողմից, անգլիացի ծովագնաց և սպա *սըր Ֆրենսիս Դրեյքի* պատվին:
Հայտնի է նաև *Մար դե Օսես* անվամբ:

Ե

ԵՆԴԵԳԱՅԱ - իսպաներեն Bahía Yendegaia. խորը ծոց Չիլիում, **Բիգլ** նեղուցի հյուսիսային մասում՝ **Մեծ Հրո երկիր** կղզու ափերի մոտ: Երկարությունը՝ մինչև 13 կմ, լայնությունը՝ մինչև 1,4 կմ:
Անվանումը հնդկացիական յագան լեզվից բառացի նշանակում է *խորը ծոց*:

ԵՐՈՒՊԱԽԱ - իսպաներեն Yerupajá. լեռ Պերույում՝ **Անդերի** Կորդիլյեռա Ուայուաշ լեռնաշղթայում: Բացարձակ բարձրությունը՝ 6 617 մ , հարաբերականը՝ 2 028 մ:
Անվանումն առաջացել է կեչուա լեզվի yuriy *հայտնվել, ծնվել* և paqsa *լուսնափայլ* բառերի միացումից:
Հայտնի է նաև El Carnicero *Մսագործ* անվամբ:

Է

ԷԼ ԱԼՏԱՐ - իսպաներեն Volcán El Altar. հանգած ստրատոհրաբուխ **Անդերում**՝ Էկվադորում: Բացարձակ բարձրությունը՝ 5 319 մ, հարաբերականը՝ 2 072 մ:
Ինկերը հրաբուխն անվանում էին Capac Urcu *Աստծո լեռ*:
Հրաբխի իսպաներեն El Altar անվանումը թարգմանաբար նշանակում է *Զոհասեղան*:

ԷԼ ԲՈՒԻՏՐԵ - իսպաներեն Pico El Buitre. լեռ Վենեսուելայում՝ Սյեռա Լա Կուլատա լեռներում: Բարձրությունը՝ 4 610 մ:
Անվանվել է վենեսուելացի տեղագիր Ալֆրեդո Յանի կողմից: Անունն իսպաներենից թարգմանաբար նշանակում է *Գիշանգղ*:
Հայտնի է նաև *Ալտո դե Միկանոն* անվամբ:

ԷԼ ԼԵՈՆ - իսպաներեն Pico El León. լեռ Վենեսուելայի կենտրոնական մասում՝ Կորդիլյեռա դե լոս Անդես լեռներում: Բարձրությունը՝ 4 740 մ:
Անվանումն իսպաներենից թարգմանաբար նշանակում է *Առյուծ*:

ԷԼ ԿԱԼԱԲՈՍՈ - իսպաներեն Ensenada de El Calabozo. Կարիբյան ծովի ծովախորշ Վենեսուելայում՝ **Լա Գուախիրա** թերակղզու հարավարևելյան ափերին: Ափագծի երկարությունը՝ 140 կմ:
Անվանումն իսպաներենից թարգմանաբար նշանակում է *Զնդան*:

ԷԼ ՄԵԼԱ - իսպաներեն El Mela. լեռ Արգենտինայում՝ **Անդերում**: Բացարձակ բարձրությունը՝ 4 150 մ, հարաբերականը՝ 2 907 մ:
Անվանումն առաջացել է լատիներեն malum→melum→mela *խնձոր* բառի ձևափոխումից:

ԷԼ ՄՈՒԵՐՏՈ - իսպաներեն Volcán El Muerto. ստրատոհրաբուխ **Անդերում**՝ Արգենտինայի և Չիլիի սահմանին: Բացարձակ բարձրությունը՝ 6 488 մ, հարաբերականը՝ 988 մ:

Հայտնի է նաև Cerro el Muerto անվամբ, որը թարգմանաբար նշանակում է *Մեռյալ թումբ*:

ԷԼ ՊԼՈՄՈ - իսպաներեն Cerro El Plomo. լեռ **Անդերում**՝ Չիլիում: Բացարձակ բարձրությունը՝ 5 424 մ, հարաբերականը՝ 1 895 մ:
Նախկինում հայտնի էր *Ապու* անվամբ:
Այժմյան անվանումը թարգմանաբար նշանակում է *Առաջատար, ղեկավար*:

ԷԼ ՏՈՐՈ - իսպաներեն Pico El Toro. լեռնագագաթ Վենեսուելայում՝ **Անդերի** հյուսիսային ճյուղավորություններում: Բարձրությունը՝ 4 727 մ ±0,31 մ:
Անվանումն իսպաներենից թարգմանաբար նշանակում է *Ցուլ*:

ԷՅՆՍՎՈՐԹ - իսպաներեն Bahía Ainsworth. երկարավուն ծովախորշ չիլիական Անտարկտիկայում՝ Հրո երկիր պրովինցիայում:
Անվանվել է ավստրալացի պետական ծառայող, գործարար և օդերևութաբան *Ջորջ Ֆրեդերիկ Էյնսվորթի* պատվին, ով ղեկավարում էր 1911-14 թթ. Դուգլաս Մոուսոնի ավստրալասիական անտարկտիկական արշավախմբի բաղադրիչներից մեկը:

ԷՆԳԱՆՅՈ - իսպաներեն Bahía Engaño. ծոց Արգենտինայի արևելքում՝ Չուբուտ գետի գետաբերանի շրջանում: Երկարությունը 6,43 կմ, լայնությունը՝ 3,21 կմ:
Անվանումն իսպաներենից թարգմանաբար նշանակում է *Խաբեություն*:

ԷՍԵԿԻԲՈ - անգլերեն Essequibo River, իսպաներեն Rio Esequibo. գետ Գայանայում: Կազմավորվում է Ակարայի լեռնաշղթայի հյուսիսային լանջերից՝ Սիպու և Չոդիկոր գետերի միախառնումից և հոսելով հյուսիսային ուղղությամբ ու կազմավորելով էստուար՝ թափվում Ատլանտյան օվկիանոս: Վտակներն են՝ Կույունի, Մազարունի, Ռուպունունի, Պոտարո և այլ գետեր: Երկարությունը՝ 1 014 կմ: Ջրի ծախսը՝ 2 104 $մ^3$/վրկ: Ջրահավաք ավազանը՝ 155 000 $կմ^2$:
Անվանվել է գետը հայտնաբերած իսպանացի ծովագնաց *Խուան դե Էսկիվելի* պատվին:

ԷՍՄԵՐԱԼԴԱ - իսպաներեն Isla Esmeralda. Խաղաղ օվկիանոսի բլրոտ կղզի Չիլիի հարավային մասում՝ Կամպանա կղզեխմբում: Ափերը ժայռոտ են ու զառիթափ: Երկարությունը՝ 38,9 կմ, լայնությունը՝ 24 կմ: Մակերեսը՝ 515,2 $կմ^2$: Ափագծի երկարությունը՝ 279,7 կմ: Բարձր կետը՝ 1 250 մ:
Անվանվել է XIX դարի չիլիական նավատորմի ”Esmeralda” նավի անունով, որը 1879 թ-ի մայիսի 21-ին անհավասար պայքարում իր նավապետ Արտուրո Պրատ Չակոնի ղեկավարությամբ խորտակվեց, բայց չհանձնվեց թշնամուն:

ԷՍՏԱԴՈՍ - իսպաներեն Isla de los Estados. լեռնոտ կղզի **Հրո երկիր** կղզեխմբի կազմում: Լե Մերա նեղուցով բաժանված է **Մեծ Հրո երկիր** կղզուց: Երկարությունը՝ 65 կմ, լայնությունը՝ մինչև 16 կմ: Մակերեսը՝ 534 $կմ^2$: Բարձր կետը Բովե գագաթն է 823 մ:
1616 թ-ի հունվարի 25-ին հոլանդացի ծովագնացներ Յակոբ (Ժակ) Լը Մերի (Լեմերի) ու Վիլեմ Սխաուտենը հայտնաբերեցին կղզին և այն անվանեցին Stateneiland *Նահանգների երկիր*, համարելով, որ կղզին անծանոթ հարավային երկրի հյուսիսային եզրամասն է:
Իսպաներեն Estados անվանումը կղզու հոլանդերեն անվան պատճենումն է:

Ժ

ԺԱՊՈՒՐԱ - իսպաներեն Río Caquetá /Yapurá, պորտուգալերեն Rio Japurá. գետ Կոլումբիայում և Բրազիլիայում, **Ամազոնի** ձախ վտակը: Սկիզբ է առնում **Արևելյան Կորդիլյեռայի** լանջերից և հոսելով հարավարևելյան, ապա արևելյան ուղղությամբ՝ թափվում **Ամազոն** գետը: Վտակներն են՝ Ապապորիս, Կուրե, Կարատուե, Պուրուե, Ժուամի, Պարանա Միրին Պիրաժուանա, Աուատի Պարանա և այլ գետեր: Երկարությունը՝ 2 816 կմ: Ջրի ծախսը՝ 18 620 մ^3/վրկ: Ջրահավաք ավազանը՝ 267 730 կմ^2:
Գետը Կոլումբիայում հայտնի է Կակետա, Բրազիլիայում՝ նաև Յապուրա անուններով: Կակետա անվանումը հավանաբար առաջացել է կեչուա լեզվի kaki *ծնոտ, կզակ* բառի և *տա* վերջածանցի միացումից:
Ժապուրա անվանումն առաջացել է տուպի լեզվի տեղական մրգի ja apurn անունից:

ԺՈՒՐՈՒԱ - պորտուգալերեն Rio Juruá, իսպաներեն Río Yuruá. գետ Պերուլում և Բրազիլիայում, **Ամազոնի** աջ վտակը: Սկիզբ է առնում պերուական Անդերի ստորոտներից և հոսելով հիմնականում հյուսիսարևելյան ուղղությամբ Ուարա բնակավայրի մոտ թափվում մայր գետը: Վտակներն են՝ Տարաուակա, Բրեու, Գրեգորիո և այլ գետեր: Երկարությունը՝ 3 283 կմ: Ջրի ծախսը՝ 8 440 մ^3/վրկ: Ջրահավաք ավազանը՝ 225 828 կմ^2:
Անվանումն առաջացել է հնդկացիական տուպի լեզվի nheengatu iuruչ *գետով արձակված բարձր (բաց) բերան* արտահայտությունից:
Պերուլում հայտնի է *Յուրուա* անվամբ:

ԺՈՒՐՈՒԵՆԱ - պորտուգալերեն Rio Juruena. գետ Բրազիլիայում, **Տապաժոս** գետի ձախ ակունքը: Սկիզբ է առնում Սեռա դուս Պարեսիս բլուրներից և հոսելով հյուսիսային ուղղությամբ, դուրս գալիս **Բրազիլական սարահարթ**, որտեղ միախառնվելով Տելիս Պիրիս գետի հետ՝ կազմավորում **Տապաժոսը**: Վտակներն են՝ Արինոս, Սանգի, Պապագայո, Ժուինա, Անանինա և այլ գետեր: Երկարությունը՝ 960 կմ (1 240 կմ Անանինայի հետ): Ջրի ծախսը՝ 4 360 մ^3/վրկ: Ջրահավաք ավազանը՝ 190 940 կմ^2:
Անվանումը գետի հնդկացիական ajuru-ena *թութակի գետ* անվան ձևափոխման արդյունք է:

Ի

ԻԳՈՒԱՍՈՒ - պորտուգալերեն Rio Iguaçu, իսպաներեն Río Iguazú. գետ Բրազիլիայում, Արգենտինայում և Պարագվայում, **Պարանայի** ձախ վտակը: Կազմավորվում է **Սեռա դու Մար** լեռներում Իրաի և Ատուբա գետերի միախառնումից և հոսելով արևմտյան ուղղությամբ, Ֆոս դու Իգուասու քաղաքի մոտ թափվում մայր գետը: Վտակներն են՝ Նեգրու, Տիմբու, Ժորդան, Կապանեմա և այլ գետեր: Երկարությունը՝ 1 320 կմ: Ջրի ծախսը՝ 1 413,5 մ^3/վրկ: Ջրահավաք ավազանը՝ 72 637,5 կմ^2:
Անվանումն առաջացել է հնդկացիական գուարանի լեզվի y *ջուր* և guasú *մեծ* բառերի միացումից՝ *Մեծ ջուր*:

ԻԳՈՒԱՍՈՒ - իսպաներեն Cataratas del Iguazú, պորտուգալերեն Cataratas do Iguaçu, գուարանի Chororõ Yguasu. շուրջ 275 սանդղավանդ ունեցող ջրվեժների համակարգ **Իգուասու** գետի վրա՝ Բրազիլիայի, Արգենտինայի ու Պարագվայի սահմանին: Ջրվեժներն ունեն իրենց անունները, որոնցից հայտնիներն են՝ Ադամ և Եվա, Սատանայի

կոկորդ, Երեք հրացանակիրներ, Երկու քույրեր, Սալտո Էսկոնդիդո, Սալտո Ֆլորիանո, Սան Մարտին, Ռամիրես և այլն: Անկման ընդհանուր բարձրությունը՝ 60-82 մ, լայնությունը՝ մինչև 2 700 մ: Ձրի ծախսը՝ միջինը 1 756 մ^3/վրկ:
Անվանումն առաջացել է հնդկացիական գուարանի լեզվի y *ջուր* և guazú *մեծ* բառերի միացումից՝ *Մեծ ջուր*:

ԻԼՅԱՄՊՈՒ - իսպաներեն Illampu. լեռ Բոլիվիայում՝ **Անդերի** Կորդիլյեռա Ռեալ լեռնաշղթայի հյուսիսում: Բացարձակ բարձրությունը՝ 6 485 մ, հարաբերականը՝ 491 մ:
Լեռն անվանվել է ժամանակին այս տարածքի տիրակալ հնդկացի *Իլյամպու* ցեղապետի պատվին:
Հայտնի է նաև *Սորատա* անվամբ:

ԻԼՅԻՄԱՆԻ - իսպաներեն Illimani, այմարա Jillimani. լեռ Բոլիվիայում՝ **Անդերի** Կորդիլյեռա Ռեալ լեռնաշղթայում: Բացարձակ բարձրությունը՝ 6 462 մ, հարաբերականը՝ 2 451 մ:
Նախկինում հայտնի էր *Իլյեմանա* և *Ջիլիր-Մամանի* անվամբ:
Լեռն անվանվել է ժամանակին այս տարածքի տիրակալ հնդկացի *Իլյիմանի* ցեղապետի պատվին, որի անունն առաջացել է այմարա լեզվի Illimana *Որտեղ ծագում է արևը* բառից:

ԻԼՅԻՆԻՍԱ - իսպաներեն Illiniza. երկգագաթ ստրատոհրաբուխ **Անդերում**՝ Էկվադորում: Բացարձակ բարձրությունը՝ 5 248 մ (Իլյինիսա Սուր 5 248 մ, Իլյինիսա Նորտե 5 126 մ), հարաբերականը՝ 1 750 մ:
Անվանումն առաջացել է հնդկացիական կուեսա մեռած լեզվից և բառացի նշանակում է *Առնական բլուր*:

ԻՆԿԱՈՒԱՍԻ - իսպաներեն Volcán Incahuasi, կեչուա Inka wasi. երկգագաթ ստրատոհրաբուխ **Ատակամա** անապատից արևելք՝ Արգենտինայի հյուսիս-արևմուտքում, Չիլիի հետ սահմանամերձ գոտում: Բացարձակ բարձրությունը՝ 6 638 մ, հարաբերականը՝ 1 518 մ:
Անվանումն առաջացել է լեռան կեչուա լեզվի Inka wasi *Ինկերի կառույց* անունից:

ԻՆՈՍԵՆՏԵՍ - իսպաներեն Canal Inocentes. նեղուց Չիլիի հարավային մասում՝ չիլիական **Պատագոնիայում**: Սկիզբ է առնում **Կոնսեպսյոն** նեղուցից և ձգվում հարավարևելյան ուղղությամբ մինչև **Սարմյենտո** նեղուց:
Անվանումն իսպաներենից թարգմանաբար նշանակում է *Կուսական, անմեղ*:

ԻՆՈՒՏԻԼ - իսպաներեն Bahía Inútil. ծոց Չիլիում՝ **Մեծ Հրո երկիր** կղզու արևմտյան ափի մոտ: Երկարությունը՝ մինչև 60 կմ, լայնությունը՝ մինչև 30 կմ:
1827 թ-ին բրիտանացի ծովագնաց Ֆիլիպ Պարկեր Քինգը հայտնաբերելով, որ ծոցում ծովագնացության համար չկա ոչ մի հարմարություն, այն անվանեց Useless Bay *Անպիտան ծոց*, որը հետագայում թարգմանվեց իսպաներեն և ընդունեց այժմյան Inútil տեսքը:

ԻՍԱԲԵԼԱ - իսպաներեն Isla Isabela. կղզի Խաղաղ օվկիանոսում, **Գալապագոս** կղզեխմբի ամենախոշորը: Երկարությունը՝ 137 կմ, լայնությունը՝ 83 կմ: Մակերեսը 488,12 կմ^2: Բարձր կետը Վուլֆ հրաբուխն է 1 707 մ:
Նախկինում հայտնի էր Ալբեմառլ անվամբ:
Այժմյան անվանումը ստացել է Իսպանիայի թագուհի *Իզաբել I Կաստիլացու* պատվին:

ԻՏԱՊԱԺԻՊԻ - պորտուգալերեն Península de Itapagipe. թերակղզի Բրազիլիայի արևելքում: Ողողվում է Ատլանտյան օվկիանոսի ջրերով:
Անվանումն առաջացել է տուպի լեզվի itá *քար*, paba *տեղ*, 'y *գետ* և pe պատկանելիության վերջածանցի միացումից՝ *Գետամեջի քարի տեղ*:

ԻՐԻՐԻ - պորտուգալերեն Rio Iriri. գետ Բրազիլիայում, **Շինգու** գետի ձախ վտակը: Սկիզբ է առնում Սյեռա դու Կաշիմբու բլրաշարից և հոսելով հիմնականում հյուսիսային, ապա հյուսիսարևելյան ուղղությամբ, թափվում մայր գետը: Վտակներն են՝ Պեդրաս, Կատետի, Կուրուա,Կարաժարի, Նովու և այլ գետեր: Երկարությունը՝ 1 300 կմ: Ջրի ծախսը՝ 2 615 մ^3/վրկ: Ջրահավաք ավազանը՝ 130 000 կմ^2:
Անվանումը հավանաբար առաջացել է հնդկացիական տուպի լեզվի y *ջուր* և reri *ոստրե* բառերի միացումից:

Լ

ԼԱ ԳՈՒԱԽԻՐԱ - իսպաներեն Península de La Guajira. թերակղզի Կոլումբիայում և Վենեսուելայում՝ Կարիբյան ծովի և **Վենեսուելական ծոցի** միջև: Թերակղզում է գտնվում Հարավային Ամերիկայի հյուսիսային մայրցամաքային ծայրակետը՝ **Գալլինաս** հրվանդանը: Երկարությունը՝ 115 կմ, լայնությունը՝ մինչև 80 կմ: Մակերեսը՝ մոտ 25 000 կմ^2: Բարձր կետը Պալուոու գագաթն է 864 մ:
Անվանվել է այստեղ բնակվող հնդկացիական *գուախիրո* ցեղի պատվին, որի անունն իր հերթին, Անտիլյան առաուակերեն լեզվով բառացի նշանակում է *Տեր, ազդեցիկ մարդ*:

ԼԱ ԳՈՒԱԽԻՐԱ - իսպաներեն Desierto de La Guajira. ավազային անապատ Կոլումբիայում ու Վենեսուելայում: Աշխարհագրորեն բաժանվում է 3 մասերի՝ Վերին, Միջին և Ստորին Գուախիրաների: Մակերեսը՝ 17 000 կմ^2:
Անունը ստացել է համանուն թերակղզուց:

ԼԱ ԿՈՆՉԱ - իսպաներեն Pico La Concha. Վենեսուելայի բարձրությամբ 3-րդ գագաթը՝ **Անդերի** Սյեռա Նևադա դե Մերիդա լեռներում: Բարձրությունը՝ 4 922 մ:
Նախկինում հայտնի էր *Լա Գարսա* անվամբ:
Այժմյան անվանումն իսպաներենից թարգմանաբար նշանակում է *Պատյան*:

ԼԱ ՊԼԱՏԱ - իսպաներեն Río de la Plata. Ուրուգվայ և **Պարանա** գետերի միախառնումից առաջացած էստուար, Հարավային Ամերիկայի հարավարևելյան մասում: Երկարությունը՝ 307 կմ, առավելագույն լայնությունը՝ 220 կմ: Ջրի ծախսը՝ 22 000 մ^3/վրկ: Ջրահավաք ավազանը՝ 3 170 000 կմ^2:
Անվանումն իսպաներենից թարգմանաբար նշանակում է Արծաթե գետ, որը մեծ հավանականությամբ առաջացել է գետի անգլերենից համանման River Plate *Գետային ափսե* անունից, որով ակնարկվում է այստեղ բազմաթիվ ծանծաղուտների առկայությունը:

ԼԱ ՊԼԱՏԱՅԻ ՑԱԾՐԱՎԱՅՐ - իսպաներեն Cuenca del Plata, պորտուգալերեն Bacia do rio da Prata. ցածրավայր Պարագվայում, Ուրուգվայում, Բոլիվիայի հարավ-արևելքում, Բրազիլիայի հարավում և Արգենտինայի հյուսիսում: Երկարությյունը՝ 2 400 կմ, լայնությունը՝ 900 կմ: Մակերեսը՝ 2 080 000 կմ^2:

Անվանումը ստացել է ***Լա Պլատա*** գետից:

ԼԱ ՏՈՐՏՈՒԳԱ - իսպաներեն Isla La Tortuga. ցածրադիր կղզի Կարիբյան ծովի հարավում: Մաս է կազմում կղզեխմբի, որն իր մեջ ներառում է Լաս Տորտուգիլյաս, Կայո Էռադուրա, Լոս Պալանկինես, Լոս Կայոս դե Սեն Մարտին, Վապորա և Պունտա դե Ռանչոս կղզիները: Երկարությունը՝ մինչև 25 կմ, լայնությունը՝ մինչև 10 կմ: Մակերեսը՝ 156,6 կմ^2: Բարձր կետը Ալտոս դե Չագուարաման է 40 մ:
Անվանումն առաջացել է բազմաթիվ ծովային կրիաներից (իսպ. tortuga), որոնք ամեն տարի հայտնվում են կղզու ավազե ծովափերին, ձվադրություն կատարելու համար:

ԼԱԴՐԻԼՅԵՐՈ - իսպաներեն Canal Ladrillero. նեղուց Չիլիի հարավային մասում՝ չիլիական **Պատագոնիայում**:
Անվանվել է XVI դարի իսպանացի հետազոտող *Խուան Լադրիլյերոյի* պատվին:
Հայտնի է նաև *Սթոշ* անվամբ:

ԼԱԽԱ - իսպաներեն Salto del Laja. 4 ջրվեժներից կազմված համակարգ Չիլիում՝ Լա Լախա գետի վրա: Անկման բարձրությունը՝ 111 մ, լայնությունը՝ մոտ 455 մ:
Նախկինում հայտնի էր *Նյեկետեն և Լոս Սալտոս Դել Լախա* անուններով:
Այժմյան անվանումը ստացել է ճանապարհների և տանիքների սալապատման մեջ օգտագործվող տափակ ողորկ քարերի (իսպ. laja) բառից:

ԼԱՍԿԱՐ - իսպաներեն Volcán Láscar. գործող ստրատոհրաբուխ Չիլիի հյուսիսում՝ Չիլիական Անդերում, **Ատակամա** անապատից արևելք: Բացարձակ բարձրությունը՝ 5 592 մ (2019 թ.):
Անվանումը կեչուա լեզվից թարգմանաբար նշանակում է *Լեզու,* որը հավանաբար վերաբերվում է հրաբխի տեսքին, մեկ այլ վարկածի համաձայն՝ ատակամենյո լեզվի Inskar կամ Iasi *լեզու* բառից:
Հայտնի է նաև *Հլասկար, Իլասկար, Կար Լաս, Տոկոնադո* և *Տոկոնաո* անուններով:

ԼԵՅԵՐԻ ՍԱՐՅԱԴԱՇՏ - իսպաներեն Glaciar de los Polacos. սառցադաշտ Արգենտինյան Անդերում՝ **Ակոնկագուա** լեռան լանջերին: Բարձրությունը՝ 6 200 - 5 850 մ:
Անվանվել է 1934 թ-ի Կոնստանտին Նարկևիչ-Յոդկոյի ղեկավարած *լեհական* արշավախմբի պատվին:

ԼԵՄՈՒՅ - իսպաներեն Isla Lemuy. կղզի Չիլիի հարավում՝ **Չիլոե** կղզեխմբի կազմում: Մակերեսը՝ 97,3 կմ^2:
Անվանումն իսպաներենից թարգմանաբար նշանակում է *Անտառոտ*:

ԼԸ ՄԵՐ - իսպաներեն Estrecho de Le Maire. Ատլանտյան օվկիանոսի ծոց Արգենտինայում՝ **Մեծ Հրո երկիր** և **Էստադոս** կղզիների միջև: Նվազագույն լայնությունը՝ 30,6 կմ:
Նախկինում հայտնի էր *Սան Վիսենտե* անվամբ:
Այժմյան անվանումը ստացել է 1616 թ-ի հունվարի 24-25-ին ծոցը հայտնաբերած հոլանդացի ծովագնաց *Յակոբ (Ժակ) Լը Մերի (Լեմերի)* պատվին:

ԼԻԿԱՆԿԱԲՈՒՐ - իսպաներեն Volcán Licancabur. ստրատոհրաբուխ Չիլիի և Բոլիվիայի սահմանագլխին: Բացարձակ բարձրությունը՝ 5 920 մ, հարաբերականը՝ 1 320 մ:
Անվանումն առաջացել է հնդկացիական կունսա մեռած լեզվի lickan *ժողովուրդ, երկիր* և ckabur *լեռ* բառերի միացումից՝ *Ժողովրդի (երկրի) լեռ*:

Հայտնի է նաև *Վոլկան դե Ատակամա* և *Լիկանկաուր* անվամբ:

ԼՅԱՆՈՍ - իսպաներեն Llanos. հարթավայրային շրջան Կոլումբիայում և Վենեսուելայում: Իրենից ներկայացնում է արևադարձային տափաստաններ և սավանաներ: Երկարությունը՝ 1 400 կմ, լայնությունը՝ 700 կմ: Մակերեսը՝ 375 787 կմ^2:
Անվանումն իսպաներեն llano *հարթավայր* բառի հոգնակի ձևն է:

ԼՅՈՒԼՅԱՅԼՅԱԿՈ - իսպաներեն Volcán Llullaillaco. գործող ստրատոհրաբուխ Չիլիի և Արգենտինայի սահմանագլխին, բարձրադիր Պունա դե Ատակամա սարահարթում: Համարվում է աշխարհի ամենաբարձր գործող հրաբուխը: Բացարձակ բարձրությունը՝ 6 739 մ (2019 թ), հարաբերականը՝ 2 344 մ (2019թ.):
Անվանումն առաջացել է կեչուա լեզվի llullu *փափուկ*, *հետագայում կարծրացող նյութ (լավա)* և yacu կամ llaco *հոսք* բառերի միացումից:

ԼՈՄԱՍ - իսպաներեն Bahía Lomas. մերձափնյա ծովային ջրաճահճային համակարգ Չիլիում՝ **Մեծ Հրո երկիր** կղզում: Երկարությունը՝ 69 կմ: Մակերեսը՝ 589,46 կմ^2:
Անվանումն իսպաներենից թարգմանաբար նշանակում է *Թմբեր*:

ԼՈՍ ՆԵՎԱԴՈՍ - իսպաներեն Pico Los Nevados. լեռնագագաթ Վենեսուելայում՝ Սյեռա Լա Կուլատա լեռներում: Բարձրությունը՝ 4 700 մ:
Անվանումն իսպաներենից թարգմանաբար նշանակում է *Ձյունոտ (ձյունե)*:
Հայտնի է նաև *Լոս Կարակոլես* անվամբ:

Խ

ԽԵՆԵՐԱԼ ԿԱՌԵՐԱ / ԲՈՒԵՆՈՍ ԱՅՐԵՍ - իսպաներեն Lago Buenos Aires / General Carrera. սառցադաշտային ծագմամբ լիճ Պատագոնյան Անդերում, Չիլիի և Արգենտինայի սահմանագլխին: Երկարությունը՝ մինչև 175 կմ, լայնությունը՝ մինչև 40 կմ: Մակերեսը՝ 1 858,2 կմ^2: Առավելագույն խորությունը՝ 567 մ: Հայելու մակերեսի բարձրությունը՝ 207 մ: Ջրահավաք ավազանը՝ 4 000 կմ^2: Լիճն են թափվում Իբանյես, Լոս Անտիգուոս, Խեյնեմենի, Սան Մարտին, Դելտա և այլ գետեր, իսկ արտահոսում՝ Բեյքեր գետը:
Նախկինում հայտնի էր Չելենկո անվամբ:
Չիլիում հայտնի է Խեներալ Կառերաս, Արգենտինայում՝ Բուենոս Այրես անուններով: Անվանվել է Չիլիի ազգային հերոս, անկախության պայքարի ղեկավար գեներալ *Խոսե Միգել դե Կառերա Վերդուգոյի* պատվին, արգենտինական մասը՝ *Բուենոս Այրես* մայրաքաղաքի պատվին:

ԽԵՆԵՐԱԼ ՎԻՆՏԵՐ / ՊԱԼԵՆԱ - իսպաներեն Lago General Vintter / Palena. լեռնային լիճ Արգենտինայում և Չիլիում: Երկարությունը՝ մինչև 34,2 կմ, լայնությունը՝ մինչև 8,3 կմ: Մակերեսը՝ 135 կմ^2: Հայելու մակերեսի բարձրությունը՝ 928 մ: Լճից արտահոսում է Պալենա գետը:
Արգենտինայում հայտնի է Խեներալ Վինտեր, Չիլիում՝ Պալենա անուններով: Լճի արգենտինական մասը անվանվել է արգենտինացի գեներալ և Ռիո Նեգրո ու Ֆորմոզա նահանգների նահանգապետ *Լորենցո Վինտերի* պատվին, իսկ լճի չիլիական մասը անվանվել է *Պալենա* գետից, որի անունն իր հերթին vallena-ballena-balena-palena շղթայի փոփոխությունների արդյունք է:

Հայտնի է նաև *Վինտեր* և *Խեներալ Պաս* անուններով:

ԽՈՒԱՆ ՖԵՌՆԱՆԴԵՍ - իսպաներեն Archipiélago Juan Fernández. կղզեխումբ Խաղաղ օվկիանոսի հարավարևելյան մասում: Կղզեխումբը կազմված է 3 կղզիներից՝ Ռոբինզոն Կրուզո, Ալեխանդրո Սելկիրկ և Սանտա Կլարա: Մակերեսը՝ 99,67 կմ^2: Բարձր կետը Լոս Ինոսենտես գագաթն է 1 650 մ, Ալեխանդրո Սելկրիկ կղզում:
Կղզիները անվանվել են 1574 թ-ի նոյեմբերի 22-ին իրենց հայտնաբերած իսպանացի ծովագնաց *Խուան Ֆեռնանդեսի* պատվին:

Կ

ԿԱԱՏԻՆԳԱ - պորտուգալերեն Caatinga. աշխարհագրական մարզ Բրազիլիայի հյուսիսարևելյան մասում: Մակերեսը՝ շուրջ 850 000 կմ^2:
Անվանումն առաջացել է հնդկացիական տուպի լեզվի ka'a *անտառ* և tinga *սպիտակ* բառերի միացումից՝ *Սպիտակ անտառ*:

ԿԱՄՊԱՆԱ - իսպաներեն Isla Campana. լեռնոտ կղզի Չիլիում՝ համանուն կղզեխմբում: Երկարությունը՝ 72,9 կմ, լայնությունը՝ 16,7 կմ: Մակերեսը՝ 1 187,8 կմ^2: Ափագծի երկարությունը՝ 589,2 կմ: Բարձր կետը՝ 1 311 մ:
Անվանումն իսպաներենից թարգմանաբար նշանակում է *Զանգ*:

ԿԱՅԱՄԲԵ - իսպաներեն Volcán Cayambe. հրաբուխ Էկվադորում՝ **Անդերի** Կորդիլյեռա Սենտրալ լեռնաշղթայի արևմտյան մասում: Հրաբխի արևելյան լանջին է գտնվում հասարակածի ամենաբարձր կետը՝ 4 690 մ: Բացարձակ բարձրությունը՝ 5 790 մ, հարաբերականը՝ 2 075 մ:
Անվանումը հավանաբար առաջացել է հնդկացիական կույտու լեզվից և կազմված է cay *երիտասարդ* և bi *ջուր, կյանքի աղբյուր* բառերի միացումից:
Մեկ այլ վարկածի համաձայն անվան հիմքում ընկած են կարանկի հնդկացիական լեզվի kayan *սառույց* կամ կեչուա լեզվի cajan *բարձրադիր սառը վայր* բառերը:

ԿԱՅԵՏԵՈՒՐ - անգլերեն Kaieteur Falls, իսպաներեն Cataratas Kaieteur. ջրվեժ արևմտյան Գայանայում, Պոտարո գետի վրա: Անկման բարձրությունը՝ 256 մ, լայնությունը՝ մինչև 113 մ: Ջրի ծախսը՝ 663 մ^3/վրկ:
Մեծ հավանականությամբ անվանումն առաջացել է հնդկացիական պատամոնա ցեղի առաջնորդ Kaie անվան և teur *ջրվեժ* բառերի միացումից՝ *Կայեի ջրվեժ*:

ԿԱՊԻՏԱՆ ԱՐԱՍԵՆԱ - իսպաներեն Isla Capitán Aracena. կղզի Չիլիի հարավում՝ **Հրո երկիր** կղզեխմբի կազմում: Երկարությունը՝ մինչև 140 կմ, լայնությունը՝ մինչև 52,6 կմ: Մակերեսը՝ 1 164,1 կմ^2: Ափագծի երկարությունը՝ 457,3 կմ: Բարձր կետը՝ 1 189 մ:
Անվանվել է չիլիացի հայտնի օդաչու *Դիեգո Արասենա Ագիլարի* պատվին:

ԿԱՌՆԵՐՈ - իսպաներեն Bahía del Carnero. մապուդունգուն Alauquén. Խաղաղօվկիանոսյան փոքր ծոց Չիլիի հարավում: Ծոցի հյուսիսային մասում է գտնվում Յանի գետակի գետաբերանը:
Անվանումը ստացել է իսպանացի ծովագնաց Ֆրանսիսկո դե Կամարգոյի կողմից, ով 1540 թ-ի մարտին այցելեց այս տարածքը և հնդկացիների առաջնորդ կասիկ Վինեոյի

կողմից ստանալով ընտանի գուանակո, որին նա համարելով տեղական *խոյի* տեսակ (իսպ. carnero), ծոցին տվեց այժմյան անվանումը:
Ծոցի Alauquén անվանումը կազմված է մապուդունգուն լեզվի av-Lauquén *Ծովի վերջը* արտահայտությունից:

ԿԱՐԻՈՒԱՅՐԱՍՈ - իսպաներեն Carihuairazo, կեչուա Kariwayrasu. երկգագաթ հանգած հրաբուխ Էկվադորում՝ **Անդերի** արևմտյան մասում: Բացարձակ բարձրությունը՝ 5 018 մ, հարաբերականը՝ 620 մ:
Անվանումն առաջացել է կեչուա լեզվի kari *մարդ*, hauaira *քամի* և razu *սառույց, ձյուն* բառերի միացումից:

ԿԱՐՈՆԻ - անգլերեն Caroni Swamp. խոշոր ջրաճահճային համակարգ Տրինիդադ կղզու արևմտյան մասում: Մակերեսը 56,11 կմ^2:
Անվանումն ունի հնդկացիական ծագում և արավակերեն լեզվից թարգմանաբար նշանակում է *Ջուր*:

ԿԵԼԿԱՅԱ - իսպաներեն Glaciar Quelccaya, կեչուա Qillqaya Rit'ipampa. սառցադաշտ Պերուի հարավ-արևելքում՝ Արևելյան Անդերի շարունակությունը հանդիսացող Վիլկանոտա լեռնաշղթայում: Երկարությունը՝ 17 կմ: Հաստությունը՝ մինչև 200 մ: Մակերեսը՝ 44 կմ^2: Բարձրությունը՝ 4 900 - 5 650 մ:

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՐԴԻԼՅԵՌԱ - իսպաներեն Cordillera Central. կոլումբիական Անդերի երեք ճյուղավորություններից ամենաբարձրը: Ձգվում է հարավից հյուսիս շուրջ 1 023 կմ երկարությամբ և մինչև 449 կմ լայնությամբ: Մակերեսը՝ 129 737 կմ^2: Բարձր կետը Ուիալա հրաբուխն է 5 364 մ:
Անվանումն իսպաներենից թարգմանաբար նշանակում է *Կենտրոնական լեռներ*:

ԿԻՆՉԱՈ - իսպաներեն Isla Quinchao. կղզի Չիլիում՝ **Չիլոե** կղզեխմբի կազմում: Մակերեսը՝ 134,6 կմ^2: Ափագծի երկարությունը՝ 82,9 կմ:
Անվան հիմքում ընկած է հնդկացիական մապուդունգուն լեզվի kincho *կինչո* (կոնաձև ձկնորսական սարք) անունը:

ԿԼԱՐԵՆՍ - իսպաներեն Isla Clarence. կղզի Չիլիի հարավում՝ **Հրո երկիր** կղզեխմբի կազմում: Երկարությունը՝ 55,6 կմ, լայնությունը՝ 42,6 կմ: Մակերեսը՝ 1 110,5 կմ^2: Ափագծի երկարությունը՝ 444,8 կմ: Բարձր կետը՝ 914 մ:
Նախկինում հայտնի էր նաև *Շիշկովի կղզի* անվամբ:
Այժմյան անվանումը ստացել է բրիտանացի ծովագնաց Էդվարդ Բրասֆիլդի կողմից, ի պատիվ ծովակալ, *արքայազն Ուիլյամ. Կլարենս դուքսի,* հետագայում *Ուիլյամ IV թագավորի*:

ԿՅՈՒՐԱՍԱՈ - նիդերլանդերեն Curaçao, պապյամենտու Kòrsou. կղզի Կարիբյան ծովում, Փոքր Անտիլների Հողմատակ կղզիների խմբում: Երկարությունը՝ 63 կմ, լայնությունը՝ մինչև 18 կմ: Մակերեսը՝ 444 կմ^2: Բարձր գագաթը Սինթ Կրիստոֆելբերգ բլուրն է 372 մ:
Նախկինում հայտնի էր *Կուրասոտե*, *Կուրասաոտե*, *Կուրասաորե*, *Կուրակաո* անուններով:
Այժմյան անվան հիմքում հավանաբար ընկած է իսպաներեն cura ապաքինում բառը:

Մեկ այլ վարկածի համաձայն անվանումն իսպաներեն corazón *սիրտ* բառի հետագայում պորտուգալացիների կողմից հնչյունափոխման արդյունք է:

ԿՈԼՈՒՄԲԻԱԿԱՆ ԶԱՆԳՎԱԾ - իսպաներեն Macizo Colombiano. լեռնազանգված կենտրոնական Կոլումբիայի հարավային մասում՝ **Անդերում**: Լեռնազանգվածից հարավ տեղակայված է Պաստո լեռնազանգվածը, իսկ հյուսիսում սկսվում են **Կենտրոնական** և **Արևելյան Կորդիլյեռաները**: Մակերեսը՝ 32 682 կմ^2: Բարձր կետը Պուրասե գագաթն է 4 646 մ:
Անվանումը զանգվածի իսպաներեն Macizo Colombiano անվան հայերեն պատճենումն է:
Հայտնի է նաև *Ալմագեր* հանգույց անվամբ:

ԿՈԼՈՒՄԲՈՍԻ ՆԵՂՈՒՑ - իսպաներեն Canal de Colón / Boca de la Serpiente, անգլերեն Serpent's Mouth / Columbus Channel. **Պարյա** ծոցը Ատլանտյան օվկիանոսի հետ միացնող նեղուց Վենեսուելայի ու Տրինիդադ կղզու միջև:
Անվանվել է *Քրիստափոր Կոլումբոսի* պատվին:
Հայտնի է նաև *Օձի երախ* անվամբ:

ԿՈՆՍԵՊՍՅՈՆ - իսպաներեն Bahía de Concepción. Խաղաղ օվկիանոսի ծոց Չիլիի կենտրոնական մասում: Լայնությունը՝ 5 կմ: Միջին խորությունը՝ 15 մ: Ծոցն է թափվում Անդալյեն գետը:
Անվանվել է *Աստվածամոր անարատ հղության* պատվին (իսպ. Concepción):

ԿՈՆՍԵՊՍՅՈՆ - իսպաներեն Canal Concepción. խորը նեղուց Չիլիի հարավում՝ չիլիական Անտարկտիկայում: Երկարությունը՝ 90 կմ, լայնությունը՝ 4,6-12 կմ: Միջին խորությունը՝ 100-400 մ:
1579 թ-ի դեկտեմբերի 7-ին անվանվել է իսպանացի ծովագնաց Պեդրո Սարմյենտո դե Գամբոայի կողմից, *Աստվածամոր Անարատ Հղության* պատվին (իսպ. Concepcign):

ԿՈՌԱԼ - իսպաներեն Bahía de Corral. ծոց Չիլիի հարավում՝ Վալդիվյա գետի գետաբերանում: Լայնությունը՝ 5,5 կմ:
Անվանումն իսպաներենից թարգմանաբար նշանակում է *Փարախ*:

ԿՈՏՈՊԱԽԻ - իսպաներեն Volcán Cotopaxi. գործող ստրատոհրաբուխ Էկվադորում՝ Կորդիլյեռա Ռեալ լեռնաշղթայի արևմտյան մասում: Բացարձակ բարձրությունը՝ 5 897 մ, հարաբերականը՝ 2 403 մ:
Անվանումը կեչուա լեզվից թարգմանաբար նշանակում է *Պսպղուն, պերճափայլ լեռ,* մեկ այլ վարկածի համաձայն՝ *Ծխացող լեռ*:
Որոշ ուսումնասիրողներ համարում են, որ անվանումն առաջացել է այմարա լեզվից և բառացի նշանակում է *Լուսնի պարանոց*:

ԿՈՐԱՍՈՆ - իսպաներեն Volcán Corazón. ստրատոհրաբուխ Էկվադորում, **Անդերի Արևմտյան Կորդիլյեռա** լեռներում: Բացարձակ բարձրությունը՝ 4 788 մ, հարաբերականը՝ 907 մ:
Անվանումն իսպաներենից թարգմանաբար նշանակում է *Սիրտ*:

ԿՈՐԴԻԼՅԵՌԱ ԴԵԼ ԿՈՆԴՈՐ - իսպաներեն Cordillera del Cóndor, կեչուա Kuntur walla. լեռներ Էկվադորի և Պերուի սահմանագլխին՝ **Անդերի** արևելյան ճյուղը: Երկարությունը՝ 150 կմ: Մակերեսը՝ 25 857 կմ^2: Բարձր կետը՝ 2 950 մ:
Անվանումն իսպաներենից թարգմանաբար նշանակում է *Կոնդորի լեռներ*:

ԿՈՐԿՈՎԱԴՈ - իսպաներեն Golfo Corcovado. ծոց Չիլիի հարավում՝ նրա մայրցամաքային և **Մեծ Չիլոե** կղզու հարավային մասի միջև: Երկարությունը՝ 90 կմ, լայնությունը՝ մինչև 45 կմ: Միջին խորությունը՝ 130 մ, առավելագույնը՝ 259 մ: Ծոցն են թափվում Պալենա, Ելչո և այլ գետեր:
Անունը ստացել է նրա ափերին գտնվող *Կորկովադո* հրաբխից (2 300 մ), որի անունն իր հերթին իսպաներենից թարգմանաբար նշանակում է *Սապատավոր*:

ԿՈՐՈՊՈՒՆԱ - իսպաներեն Coropuna, կեչուա Qurupuna. ստրատոհրաբուխ **Անդերում՝** Պերուի հարավային մասում: Բացարձակ բարձրությունը՝ 6 377 մ, հարաբերականը՝ 2 177 մ:
Հրաբխի կեչուա լեզվի Qurupuna անունը թարգմանաբար նշանակում է *Ոսկե սար:* Մեկ այլ վարկածի համաձայն *Սարահարթում արտացոլված*:

ԿՐԻՍՏՈԲԱԼ ԿՈԼՈՆ - իսպաներեն Pico Cristóbal Colón. պիկ Կոլումբիայում՝ Սյեռա Նևադա դե Սանտա Մարտա լեռնազանգվածում: Բացարձակ բարձրությունը՝ 5 775 մ, հարաբերականը՝ 5 584 մ:
Անվանվել է *Քրիստափոր Կոլումբոսի* պատվին:

ԿՈՒԴԱՐԵԲԵ - նիդերլանդերեն Koodarebe. հրվանդան **Արուբա** կղզու հյուսիսարևմտյան մասում: Հանդիսանում է Հարավային Ամերիկայի հյուսիսային կղզային ծայրակետը (12′ 37' 00.0" N 70′ 04' 00.0" W):

ԿՈՒԿ - իսպաներեն Bahía Cook. արևմուտքից՝ Լոնդոնդերի, իսկ արևելքից՝ Հոստ,Ուիթլբարի ու Համոնդ կղզիներով եզերված խորը ծովախորշ Չիլիի հարավում, չիլիական Անտարկտիկայում: Երկարությունը՝ մինչև 22,2 կմ, լայնությունը՝ մինչև 14,8 կմ: Անվանվել է բրիտանացի ծովագնաց, հետազոտող *Ջեյմս Կուկի* պատվին, ով 1774 թ-ի դեկտեմբերի 17-ին իր երկրորդ ճանապարհորդության ժամանակ “Resolution” նավով կանգ էր առել այս վայրերում:

ԿՈՒՊՏԱՆԱ - իսպաներեն Isla Cuptana. բլրոտ կղզի Չիլիում՝ **Չոնոս** կղզեխմբի կազմում: Երկարությունը՝ 25,3 կմ, լայնությունը՝ 24,9 կմ: Մակերեսը՝ 351,01 կմ^2: Բարձր կետը Կուպտանա գագաթն է 1 271 մ:
Նախկինում հայտնի էր *Կալկայ, Գաբտանա* և *Նևադա* անուններով:
Այժմյան անվանումը կղզու հնդկացիական չոնո մեռած լեզվի cupùdutum *միշտ ցեխի մեջ ընկղմված* կամ *մոխրով պատած* անվան հնչյունափոխության արդյունք է:

Հ

ՀԱՆՈՎԵՐ - իսպաներեն Isla Hanover. Խաղաղ օվկիանոսի կղզի Չիլիի հարավային մասում՝ համանուն կղզեխմբում: Ափերը ժայռոտ են ու զառիթափ: Երկարությունը՝ մինչև

63,4 կմ, լայնությունը՝ մինչև 43,5 կմ: Մակերեսը՝ 811,9 կմ^2: Ափագծի երկարությունը՝ 479,8 կմ: Բարձր կետը՝ 1 219 մ:
Նախկինում հայտնի էր Isla de las Virtudes *Առաքինությունների կղզի* անվամբ:
Այժմյան անվանումը կղզին ստացել է 1826-30 թթ. անգլիական հետազոտական արշավախմբի ղեկավարներ Ֆիլիպ Պարկեր Քինգի և Ռոբերտ Ֆից Ռոյի կողմից, *Հանովեր* թագավորության պատվին, որի թագավորն էր 1830 թ-ի հունիսի 26-ից՝ Միացյալ Թագավորության գահակալ Ուիլյամ IV-ը:

ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՂԶԻ - պորտուգալերեն Ilha do Sul. կղզի Բրազիլիայում, Մարտին Վաս կղզեխմբի ամենահարավայինը: Մակերեսը՝ 0,3 կմ^2: Այստեղ է գտնվում Հարավային Ամերիկայի արևելյան կղզային ծայրակետը (20′ 31′ 0″ S, 28′ 51′ 0″ W):
Անվանվել է ելնելով իր աշխարհագրական դիրքից:

ՀԱՐԱՎՊԱՏԱԳՈՆՅԱՆ ՍԱՌՅԵ ՎԱՀԱՆ - իսպաներեն Campo de hielo patagónico sur. լեռնածածկութային, սառցային համակարգ Չիլիում ու Արգենտինայում՝ Պատագոնյան Կորդիլյեռաներում: Երկարությունը՝ 360 կմ, լայնությունը՝ 40-90 կմ: Մակերեսը՝ 12 663 կմ^2: Բարձրությունը՝ մինչև 3 380 մ:
Անվանումը ստացել է ***Պատագոնիա*** աշխարհագրական մարզից:

ՀՅՈՒՍԻՍՊԱՏԱԳՈՆՅԱՆ ՍԱՌՅԵ ՎԱՀԱՆ - իսպաներեն Campo de hielo patagónico norte. լեռնածածկութային, սառցային համակարգ Չիլիում՝ Պատագոնյան Կորդիլյեռաներում: Երկարությունը՝ մինչև 130 կմ, լայնությունը՝ 45-75 կմ: Մակերեսը՝ 4 200 կմ^2: Բարձրությունը՝ մինչև 4 058մ:
Անվանումը ստացել է ***Պատագոնիա*** աշխարհագրական մարզից:

ՀՈՌՆ - իսպաներեն Cabo de Hornos, նիդերլանդերեն Kaap Hoorn. հրվանդան Չիլիում՝ համանուն կղզում, **Հրո երկիր** կղզեխմբի հարավային ծայրակետը:
Նախկինում հայտնի էր *Սան Իլդեֆոնսո* անունով:
Հայտնաբերվել է 1616 թ-ին հոլանդացի ծովագնացներ Յակոբ (Ժակ) Լը Մերի (Լեմերի) և Վիլլեմ Կոռնելիս Սխաուտենի կողմից և անվանվել վերջինիս հարազատ *Հոռն* քաղաքի պատվին:
Հրվանդանի իսպաներեն Cabo de Hornos անվանումը բառացի նշանակում է *Վառարանների հրվանդան*:

ՀՐՈ ԵՐԿԻՐ - իսպաներեն Archipiélago de Tierra del Fuego. Մոտ 40 000 կղզիներից կազմված կղզեխումբ Հարավային Ամերիկայի ծայր հարավում, Ատլանտյան և Խաղաղ օվկիանոսների միջև՝ Չիլիում ու Արգենտինայում: Մայրցամաքից բաժանված է **Մագելանի**, իսկ Անտարկտիկայից՝ **Դրեյքի** նեղուցներով: Մակերեսը՝ 73 753 կմ^2: Բարձր կետը Դարվին գագաթն է 2 488 մ (**Մեծ Հրո երկիր** կղզում):
Անվանվել է պորտուգալացի ծովագնաց Ֆեռնան Մագելանի կողմից, ով ենթադրում էր, որ տեսել է յագան հնդկացիների բազմաթիվ կրակներ (իսպ. fuego) և որ հնդկացիները սպասում էին իրենց անտառներում, դարանակալելու համար:

Մ

ՄԱԳԴԱԼԵՆԱ - իսպաներեն Río Magdalena. գետ Կոլումբիայում: Սկիզբ է առնում **Անդերից՝ Կոլումբիական զանգվածից** և հոսելով հյուսիսային ուղղությամբ, թափվում Կարիբյան ծով: Վտակներն են՝ Սալդանա, Կարարե, Սագամոսո, Սեսար, Սան Խորխե և այլ գետեր: Երկարությունը՝ 1 538 կմ: Ջրի ծախսը՝ 7 200 մ^3/վրկ: Ջրահավաք ավազանը՝ 257 438 կմ^2:
Նախկինում հայտնի էր Կարիպուանա, Յումա, Գուակակալո, Ռիո Գրանդե դել լա Մագդալենա անուններով:
Գետը 1501 թ-ի ապրիլի 1-ին հայտնաբերել է իսպանացի ծովագնաց Ռոդրիգո դե Բաստիդասը և անվանել այն այդ օրվա սրբի՝ *Մարիամ Մագդաղենացու* պատվին:

ՄԱԳԴԱԼԵՆԱ - իսպաներեն Canal Magdalena. նեղուց Չիլիի հարավում՝ չիլիական Անտարկտիկայում: Ափերը զառիվեր են և ժայռոտ: Երկարությունը՝ 37 կմ, լայնությունը՝ մինչև 11 կմ:
Անվանվել է Հիսուս Քրիստոսի հավատարիմ հետևորդ *Մարիամ Մագդաղենացու* պատվին:

ՄԱԳԵԼԱՆԻ ՆԵՂՈՒՑ - իսպաներեն Estrecho de Magallanes. Հարավային Ամերիկա աշխարհամասը և **Հրո երկիր** կղզեխումբը իրարից անջատող նեղուց: Երկարությունը՝ 570 կմ, նվազագույն լայնությունը՝ 3,5 կմ: Նվազագույն խորությունը՝ 20 մ:
Մագելանը իր հայտնաբերած նեղուցն անվանել էր *Բոլոր Սրբերի տոնի* պորտուգալերեն Estreito de todos os Santos անվամբ:
Նեղուցը հայտնի էր նաև ֆրանսերեն Détroit des Onze mille Vierges *Տասնմեկ հազար կույսերի* ծոց անվամբ:
Այժմյան անվանումը տրվել է *Ֆեռնան Մագելանի* պատվին:

ՄԱԴԵՅՐԱ - պորտուգալերեն Rio Madeira, իսպաներեն Río Madeira. գետ Բրազիլիայում, **Ամազոնի** խոշորագույն վտակը: Կազմավորվում է Բոլիվիայի և Բրազիլիայի սահմանագլխին, **Մամորե** և **Բենի** գետերի միախառնումից: Վտակներն են՝ Ժամարի, Ժիպարանա, Ակարա, Մանիկորե և այլ գետեր: Երկարությունը՝ 3 317 կմ: Ջրի ծախսը՝ 27 800մ^3/վրկ: Ջրահավաք ավազանը՝ 1 158 000 կմ^2:
Անվանումը պորտուգալերենից թարգմանաբար նշանակում է *Բնափայտ*:

ՄԱԴՐԵ ԴԵ ԴՅՈՍ - իսպաներեն Río Madre de Dios. գետ Պերույում և Բոլիվիայում, **Բենի** գետի ձախ վտակը: Կազմավորվում է **Անդերից** սկիզբ առնող Մանու և Պինկինա գետերի միախառնումից և հոսելով հյուսիսարևելյան ուղղությամբ, Ռիբերալտա քաղաքի մոտ թափվում մայր գետը: Վտակներն են՝ Ինամբարի, Պյեդրաս, Տամբոպատա, Մանուպարի և այլ գետեր: Երկարությունը՝ 1 150 կմ: Ջրի ծախսը՝ 4 915 մ^3/վրկ: Ջրահավաք ավազանը՝ 125 287 կմ^2:
Գետի իսպաներեն Río Madre de Dios անվանումը թարգմանաբար նշանակում է *Աստվածամոր գետ*:
Հայտնի է նաև *Մայուտատա* և *Ամառու Մայու* անուններով:

ՄԱԴՐԵ ԴԵ ԴՅՈՍ - իսպաներեն Isla Madre de Dios. Խաղաղ օվկիանոսի կղզի Չիլիի հարավային մասում՝ համանուն կղզեխմբում: Երկարությունը՝ 518 կմ, լայնությունը՝

մինչև 49,1 կմ: Մակերեսը՝ 1 042,9 կմ^2: Ափագծի երկարությունը՝ 549,5 կմ: Բարձր կետը Ռոբերտո գագաթն է 755 մ:
Անվանումն իսպաներենից թարգմանաբար նշանակում է *Աստվածամայր*:

ՄԱՄՈՐԵ - իսպաներեն Río Mamoré, պորտուգալերեն Rio Mamoré. գետ Բոլիվիայում և Բրազիլիայում: **Մադեյրա** գետի գլխավոր ակունքը: Սկիզբ է առնում Բոլիվիայի կենտրոնական մասերից՝ Կայնե, Միսկե և մի քանի այլ գետերի միախառնումից: Վտակներն են՝ Իչիլո, Սան Մատեո, Չապարե և այլ գետեր: Երկարությունը՝ 1 931 կմ: Ջրի ծախսը՝ 8 800 մ^3/վրկ: Ջրահավաք ավազանը՝ 241 660 կմ^2:
Անվան հիմքում ընկած է mamuri *բոլոր ջրերի մայր* բառը:

ՄԱՅՊՈ - իսպաներեն Volcán Maipo. գործող հրաբուխ Արգենտինայի և Չիլիի սահմանագլխին: Բացարձակ բարձրությունը՝ 5 323 մ (2019 թ.):
Անվանումն առաջացել է հնդկացիական մապուդունգուն լեզվի maipún *հող մշակել* արտահայտությունից:

ՄԱՆՍԱ - իսպաներեն Bahía Mansa. ծովախորշ Չիլիում՝ Չոլուակո և Ուելյելուե գետերի գետաբերանների միջև:
Անվանումն իսպաներենից թարգմանաբար նշանակում է *Քաղցր*:

ՄԱՐ ՉԻԿԻՏԱ - իսպաներեն Laguna Mar Chiquita. խոշոր, անհոսք աղի լիճ Արգենտինայում: Երկարությունը՝ 90-130 կմ, լայնությունը՝ 75-110 կմ: Մակերեսը՝ 2 000-4 500 կմ^2: Միջին խորությունը՝ 0,5-3,5 մ, առավելագույնը՝ 10-13 մ: Ծավալը՝ 1-15,75 կմ^3: Հայելու մակերեսի բարձրությունը՝ 66-69 մ: Ափագծի երկարությունը՝ շուրջ 2386,4 կմ: Ջրահավաք ավազանը՝ 7 900կմ^2: Լիճն են թափվում Դուլսե, Սալադիլյո, Պրիմերո, Սեգունդո և այլ գետեր: Լճում կան մի քանի կղզիներ, որոնցից խոշորը Մեդանոնն է:
Նախկինում հայտնի էր *Անսենուզա* և *Պորոնգոս* անուններով:
Այժմյան անվանումն իսպաներենից թարգմանաբար նշանակում է *Փոքր ծով*:

ՄԱՐԱԺՈ - պորտուգալերեն Ilha de Marajó. Բրազիլիայի խոշորագույն կղզին **Ամազոնի** էստուարի լայն մասում: Երկարությունը 297 կմ, լայնությունը՝ 204 կմ: Մակերեսը՝ 40 100 կմ^2: Բարձր կետը՝ 40 մ:
Նախկինում հայտնի էր *Մարինատամբալ* և *Գրանդի դի Ժոանես* անվանումներով:
Այժմյան անվանումն առաջացել է հնդկացիական տուպի լեզվի Mbara-yó *Ծովային միջնորմ (պատնեշ)* արտահայտությունից:

ՄԱՐԱԿԱՅԲՈ - իսպաներեն Lago de Maracaibo. խոշոր լիճ (ծոց) Վենեսուելայում՝ արևմուտքում Սյեռա դե Պերիխա, իսկ հարավում և արևելքում Կորդիլյեռա դե Մերիդա լեռնաշղթաների միջև ընկած միջլեռնային իջվածքում: Երկարությունը՝ մինչև 205,5 կմ, լայնությունը՝ մինչև 122,2 կմ: Մակերեսը՝ 13 820 կմ^2: Միջին խորությունը՝ 46 մ, առավելագույնը՝ 250 մ: Ծավալը՝ 635,7 կմ^3: Հայելու մակերեսի բարձրությունը՝ 0 մ: Ջրահավաք ավազանը՝ 200 000 կմ^2: Լիճն է թափվում Կատատումբո, Պալմար, Անոն, Չամա, Լիմոն և այլ գետեր: Լճում կան շուրջ 467 կղզիներ:
Անվանումը ստացել է ժամանակին այս վայրերում բնակվող հնդկացիական Mara առաջնորդի անվան և caibo *երկիր* բառի միացումից՝ *Մարայի երկիր*:

ՄԱՐԱՆՅՈՆ - իսպաներեն Río Marañón. գետ Պերույում, **Ամազոն** գետի ձախ ակունքը: Սկիզբ է առնում **Անդերից**՝ Պատկոչա լեռնային լճից, ապա կտրել անցնելով Կենտրոնական և Արևելյան Անդերը դուրս է գալիս Ամազոնի ցածրավայր, որտեղ խառնվելով Ուկայալիի հետ՝ կազմավորում **Ամազոն** գետը: Վտակներն են՝ Յանամայո, Մոսնա, Ուտկուբամբա, **Ուալյագա**, Տիգրե և այլ գետեր: Երկարությունը մոտ 2 000 կմ: Ջրի ծախսը՝ 14 700 մ^3/վրկ: Ջրահավաք ավազանը՝ 350 000 կմ^2:
Գետի Մարանյոն անվանումը *հնդկական ընկույզի* իսպաներեն արտասանությունն է:

ՄԱՐԳԱՐԻՏԱ - իսպաներեն Isla de Margarita. կղզի Կարիբյան ծովում, Փոքր Անտիլների Հողմատակ կղզիների խմբում: Երկարությունը՝ 69,4 կմ, լայնությունը՝ 33,2 կմ: Մակերեսը՝ 956,8 կմ^2: Բարձր կետը Սան Խուան գագաթն է 917 մ:
Նախկինում հայտնի էր Պարագուաչոա անվամբ:
Կղզին 1498 թ-ի օգոստոսի 15-ին հայտնաբերվել է Կոլումբոսի կողմից և անվանվել Լա Ասունսյոն: Հաջորդ 1499 թ-ին Պեդրո Ալոնսո Նինյոն և Կրեստոբալ Գուեռոն վերանվանեցին այն Լա Մարգարիտա, դրանով շեշտելով կղզում մարգարիտների առատությունը: Մեկ այլ վարկածի համաձայն կղզին անվանվել է Իսպանիայի թագուհի *Մարգարիտա Ավստրիացու* պատվին:

ՄԱՐԻՆԵԼԼԻ - իսպաներեն Glaciar Marinelli. մակընթացատեղատվային սառցադաշտ **Մեծ Հրո երկիր** կղզում՝ Դարվինի Կորդիլյեռաներում: Մակերեսը՝ 142 կմ^2:
Անվանվել է իտալացի աշխարհագրագետ *Ջովաննի Մարինելլիի* պատվին:

ՄԱՐՄՈԼԵԽՈ - իսպաներեն Cerro Marmolejo. շուրջ 4 կմ տրամագիծ ունեցող կալդերայով ստրատոհրաբուխ **Անդերում**՝ Արգենտինայի և Չիլիի սահմանագլխին: Բացարձակ բարձրությունը՝ 6 108 մ:
Անվանվել է XVI դարի իսպանացի զինվորական և մատենագիր *Ալոնսո դե Գոնգորա Մարմոլեխոյի* պատվին:

ՄԱՐՐԻ - իսպաներեն Canal Murray. նեղուց Չիլիի հարավում՝ չիլիական Անտարկտիկայում: Իրարից անջատում է **Օստե** ու **Նավարինո** կղզիները և իրար է միացնում **Բիգլ** ջրանցքն ու Նասաաու ծոցը: Երկարությունը՝ մինչև 42,6 կմ, լայնությունը՝ 0,37-1,3 կմ:
Անվանվել է բրիտանական թագավորական նավատորմի սպա *Մեթյու Մարրիի* պատվին:

ՄԵԼՉՈՐ - իսպաներեն Isla Melchor. կղզի Չիլիում՝ **Չոնոս** կղզեխմբի կենտրոնական մասում: Երկարությունը՝ 40,7 կմ, լայնությունը՝ 29,6 կմ: Մակերեսը՝ 863,5 կմ^2: Ափագծի երկարությունը՝ 241,9 կմ: Բարձր կետը՝ 1 127 մ:
Անվանվել է XVI դարի իսպանացի կոնկիստադոր, Պերուի ժամանակավոր փոխարքա և Չիլիի նահանգապետ *Մելչոր Բրավո դե Սարավյա ի Սոտոմայորի* պատվին:
Հայտնի է նաև *Մելեգեն* անվամբ:

ՄԵԾ ՀՐՈ ԵՐԿԻՐ - իսպաներեն Isla Grande de Tierra del Fuego. կղզի Հարավային Ամերիկայի ծայր հարավում, Ատլանտյան և Խաղաղ օվկիանոսների միջև: Կազմում է համանուն կղզեխմբի մասը: Մակերեսը՝ 47 992 կմ^2: Բարձր կետը Դարվին գագաթն է 2 488 մ:
Անվանվել է պորտուգալացի ծովագնաց Ֆեռնան Մագելանի կողմից, ով ենթադրում էր, որ տեսել է յագան հնդկացիների բազմաթիվ կրակներ (իսպ. fuego) և որ հնդկացիները սպասում էին իրենց անտառներում, դարանակալելու համար:

ՄԵԾ ՉԻԼՈԵ - իսպաներեն Isla Grande de Chiloé. կղզի Խաղաղ օվկիանոսում, Չիլիի հարավային մասում, **Չիլոե** կղզեխմբում: Երկարությունը՝ 180 կմ, լայնությունը՝ մինչև 62 կմ: Մակերեսը՝ 8 394 կմ^2: Բարձր կետը Ռեդոնդո գագաթն է 866 մ:
Չիլիի մայրցամաքային մասից անջատված է արևելքում՝ **Անկուդ** և **Կորկովադո** ծոցերով, իսկ հյուսիսում՝ **Չակաո** նեղուցով:
Նախկինում հայտնի էր *Նոր Գալիսիա* անվամբ:
Այժմյան անվանումը Chroicocephalus maculipennis տեսակի որորի հնդկացիական մապուչե լեզվում chillwe *որորի տեղ* անվան իսպաներեն chilhué ձևով հարմարեցման արդյունք է:

ՄԵՍՅԵ - իսպաներեն Canal Messier. Խաղաղ օվկիանոսի ֆիորդատիպ նեղուց Չիլիի հարավային մասում՝ **Պենաս** ծոցից հարավ: Երկարությունը՝ 133 կմ:
Անվանվել է ֆրանսիացի աստղագետ *Շառլ Մեսյեյի* պատվին:

ՄԵՐԻՆՈ ԽԱՐՊԱ - իսպաներեն Isla Merino Jarpa. Խաղաղ օվկիանոսի կղզի Չիլիի հարավարևմտյան մասում՝ **Պենաս** ծոցի հարավարևելյան հատվածում: Երկարությունը՝ 54 կմ, լայնությունը՝ 20,6 կմ: Մակերեսը՝ 430,4 կմ^2: Ափագծի երկարությունը՝ 191,1 կմ: Բարձր կետը՝ 1 093 մ:
Անվանվել է 1891 թ-ի Խաղաղօվկիանոսյան և քաղաքացիական պատերազմների մասնակից, չիլիացի նավաստի *Վիսենտե Մերինո Խարպայի* պատվին:

ՄԵՐՍԵԴԱՐՅՈ - իսպաներեն Cerro Mercedario. լեռ Արգենտինայում, **Անդերի** Կորդիլյեռա դե լա Ռամադա լեռնաշղթայում: Բացարձակ բարձրությունը՝ 6 720 մ , հարաբերականը՝ 3 333 մ:
Նախկինում հայտնի էր *Պիչիրագուա* անվամբ:
Այժմյան անվանումը միջնադարյան Merced ռազմական ուղտի անդամի անվան ածականն է:
Չիլիում հայտնի է *Լա Լիգա* անվամբ:

ՄԻՍՄԻ - իսպաներեն Nevado Mismi, կեչուա Mismi. հրաբուխ Պերույում՝ **Անդերի** Չիլա լեռնազանգվածում: Մեծ հավանականությամբ լեռան հյուսիսային լանջերից սկիզբ առնող Կարուասանտա ջրհոսքն է հանդիսանում **Ամազոն** գետի ակունքը: Բացարձակ բարձրությունը՝ 5 597 մ:
Անվանումը հավանաբար իսպաներեն mismo *նմանակ* բառի ձևափոխման արդյունք է:

ՄԻՍՏԻ - իսպաներեն Misti. գործող ստրատոհրաբուխ Պերուի հարավում: Բացարձակ բարձրությունը՝ 5 822 մ, հարաբերականը՝ 1 785 մ:
Misti անվանումը հնդկացիների կողմից իսպաներեն mestizo *մետիս, խառնածին* բառի աղավաղման արդյունք է:
Հայտնի է նաև *Պուտինա* կամ *Գուա Գուա Պուտինա* անվամբ:

ՄՈՆՏԵ - իսպաներեն Desierto del Monte. ավազաքարային անապատ Արգենտինայում: Բարձրությունը՝ 0 - 2 800 մ: Մակերեսը՝ 460 000 կմ^2:
Անվանումն իսպաներենից թարգմանաբար նշանակում է *Լեռ*:

ՄՈՆՏԵ ՊԻՍԻՍ - իսպաներեն Monte Pissis. հանգած հրաբուխ Արգենտինայում, **Անդե-րում՝ Ատակամա** անապատի եզրին: Աշխարհի բարձրությամբ 2-րդ հրաբուխը և Հարա-վային Ամերիկայի բարձրությամբ 3-րդ գագաթը: Բացարձակ բարձրությունը՝ 6 882 մ, հարաբերականը՝ 2 138 մ:
Նախկինում հայտնի էր *Նասիմյենտոս դել Խագուե* և *Պիլյանուասի* անուններով:
1885 թ-ին անվանվել է ֆրանսիացի աշխարհագրագետ *Պիեռ Ժոզեֆ Էմե Պիսիսի* պատ-վին:

ՄՈՆՏԵՎԻԴԵՈ - իսպաներեն Bahía de Montevideo. Ատլանտյան օվկիանոսի ծոց Ուրուգվայում: Ունի կանոնավոր կլորություն, մոտ 4,63 կմ տրամագծով:
Նախկինում հայտնի էր Candelaria *Տեառնընդառաջ* անվամբ:
Իր այժմյան անվանումը ծոցը ստացել է *Մոնտեվիդեո* քաղաքից:

ՄՈՉԱ - իսպաներեն Isla Mocha. կղզի Չիլիում՝ Խաղաղ օվկիանոսում: Երկարությունը՝ մինչև 14 կմ, լայնությունը՝ մինչև 6 կմ: Մակերեսը՝ 48 կմ^2: Բարձր գագաթը Ռամիրես բլուրն է 390 մ:
Նախկինում հայտնի էր *Իսլա դե Սան Նիկոլաս դե Տոլենտինո* անվամբ:
Այժմյան անվանումը ստացել է անգլիացիների կողմից, որոնք այն անվանել են կղզու շրջակայքի ջրերի գույնը նմանեցնելով *մոկկո* (անգլ. Mocha *Մոկա*) սուրճի գույնին:

ՄՈՌՆԻՆԳՏՈՆ - իսպաներեն Isla Mornington. Խաղաղ օվկիանոսի բլրոտ կղզի Չիլիի հարավային մասում՝ համանուն կղզեխմբում: Ափերը ժայռոտ են ու զառիթափ: Մակե-րեսը՝ 528,8 կմ^2: Ափագծի երկարությունը՝ 213,5 կմ: Բարձր կետը՝ 762 մ:
Անվանվել է բրիտանացի քաղաքական գործիչ *Ուիլյամ Ուելսլի-Փոուլ, 3-րդ կոմս Մոռ-նինգտոնի* պատվին:

ՄՈՐԱԼԵԴԱ - իսպաներեն Canal Moraleda. նեղուց Չիլիի հարավային մասում՝ Գուաֆո գետի գետաբերանից հարավ: Մայրցամաքից է բաժանում Գույտեկաս կղզիներն ու **Չոնոս** կղզեխումբը: Երկարությունը՝ 133 կմ, լայնությունը՝ 3,6-11 կմ:
Անվանումը ստացել է XVIII դարի իսպանացի ծովագնաց, Պերուի առաջին փոխարքա *Խոսե Մանուել դե Մորալեդա ի Մոնտեռոյի* պատվին:

ՄՈՒԿՈՒՆՅՈՒԿԵ - իսպաներեն Pico Mucuñuque. լեռնագագաթ Վենեսուելայում՝ Սյեռա դե Սանտո Դոմինգո լեռներում: Բարձրությունը՝ 4 608,98 մ ±0,41մ:
Անվանումն առաջին անգամ առաջարկվել է վենեսուելացի տեղագիր Ալֆրեդո Յանի կողմից: Անունը կազմված է հնդկացիական մապուչե լեզվի mucu կամ moco *մեծ* և ñuke *մայր* բառերի միացումից՝ *Մեծ մայր*:
Հայտնի է նաև *Սանտո Դոմինգո* անվամբ:

Յ

ՅՈՒՄԲԻԼՅԱ - իսպաներեն Catarata Yumbilla. ջրվեժ Պերուում, որի ջրահոսքը սկիզբ է առնում Կավեռնա Սան Ֆրանսիսկո քարանձավից: Ունի 4 սանդղավանդ: Անկման բար-ձրությունը՝ 895,484 մ:
Անվանումը տեղաբնիկ հնդկացիների լեզվում բառացի նշանակում է *Միրահարված սիրտ*:

Ն

ՆԱՈՒԵԼ ՈՒԱՊԻ - իսպաներեն Lago Nahuel Huapi. լիճ Արգենտինայում՝ հյուսիսային **Պատագոնիայում**: Երկարությունը՝ մինչև 76 կմ, լայնությունը՝ մինչև 10,2 կմ: Մակերեսը՝ 557 կմ^2: Միջին խորությունը՝ 157 մ, առավելագույնը՝ 464 մ: Ծավալը՝ 87,45 կմ^3: Հայելու մակերեսի բարձրությունը՝ 770 մ: Ափագծի երկարությունը՝ 357,4 կմ: Ջրահավաք ավազանը՝ 4 260 կմ^2: Լիճն են թափվում Ուեմուլ, Բոնիտո, Կոռենտոսո, Պիրկո և այլ գետեր, իսկ արտահոսում՝ Լիմայ գետը: Լճում կան մի քանի կղզիներ՝ Վիկտորյա, Ուեմուլ, Գալյինաս, Գավյոտաս և այլն:
Նախկինում հայտնի էր *Տենեշ* անվամբ:
Այժմյան անվանումը մապուչե լեզվից բառացի նշանակում է *Յագուարի կղզի* :

ՆԱՎԱՐԻՆՈ - իսպաներեն Isla Navarino. կղզի **Հրո երկիր** կղզեխմբի կազմում: Կղզին հայտնի է այստեղ գտնվող երկրագնդի ծայր հարավային բնակավայրերով՝ նավահանգիստ և ավան Պուերտո Ուիլյամսով և ձկնորսական գյուղ Պուերտո Տորոյով: Երկարությունը՝ 85 կմ, լայնությունը՝ մինչև 50 կմ: Մակերեսը՝ 2 473 կմ^2:
Նախկինում հայտնի էր *Վուլլա* անվամբ:
1829 թ-ին անվանվել է Ռուսաստանի, Անգլիայի ու Ֆրանսիայի միացյալ նավատորմի մի կողմից և թուրք-եգիպտական նավատորմի՝ մյուս կողմից, 1827 թ-ի հոկտեմբերի 8-ին (20) Հոնիական ծովի *Նավարինի* ծովախորշում կայացած ճակատամարտի պատվին:

ՆԱՐԻՎԱ - անգլերեն Nariva Swamp. խոշոր, քաղցրահամ ջրաճահճային համակարգ Տրինիդադ կղզու արևելյան ափամերձ շրջանում: Մակերեսը՝ 113,43 կմ^2:
Անվանումն ունի հնդկացիական ծագում:

ՆԵԲԼԻՆԱ - պորտուգալերեն Pico da Neblina, իսպաներեն Pico de la Neblina. լեռ Բրազիլիայում, Վենեսուելայի հետ սահմանային գոտում՝ **Գվիանական վահանի** բարձր կետը: Բացարձակ բարձրությունը՝ 2 995,3 մ, հարաբերականը՝ 2 887 մ:
Անվանումը պորտուգալերենից թարգմանաբար նշանակում է *Մառախուղի պիկ* :

ՆԵԳՐՈՒ - պորտուգալերեն Rio Negro, իսպաներեն Río Negro. գետ Կոլումբիայում, Վենեսուելայում և Բրազիլիայում, **Ամազոն** գետի խոշորագույն ձախ վտակը: Կազմավորվում է Գուայնիա ու Սիապա գետերի միախառնումից և հոսելով հարավային, ապա հարավարևելյան ուղղությամբ, Մանաուս քաղաքի մոտ թափվում մայր գետը: Վտակներն են՝ Բրանկու, Իսանա, Մարյե, Աժուանա, Դեմինի, Կուեյրաս և այլ գետեր: Երկարությունը՝ 2 253 կմ: Ջրի ծախսը՝ 28 900 մ^3/վրկ: Ջրահավաք ավազանը՝ 720 114 կմ^2:
Անվանումը պորտուգալերենից և իսպաներենից թարգմանաբար նշանակում է *Սև* :

ՆՈՒԵՎՈ - իսպաներեն Golfo Nuevo. Ատլանտյան օվկիանոսի ծոց Արգենտինայում: Երկարությունը՝ 65 կմ, լայնությունը՝ 46 կմ: Միջին խորությունը՝ 80 մ առավելագույնը՝ 180 մ:
Նախկինում հայտնի էր *Սին Ֆոնդո, Նևիդ* և *Սան Մատիաս* անուններով:
Այժմյան անվանումն իսպաներենից թարգմանաբար նշանակում է *Նոր* :

Շ

ՇԻՆԳՈՒ - պորտուգալերեն Rio Xingu. գետ Բրազիլիայում, **Ամազոնի** աջ վտակը: Կուլուենի անվամբ սկիզբ է առնում Մատու Գրոսու սարահարթի արևելյան մասից և հոսելով հիմնականում հյուսիսային ուղղությամբ, Պորտու դի Մոս քաղաքի մոտ թափվում մայր գետը: Վտակներն են՝ **Իրիրի**, Ֆրեսկու, Լիբերդադի, Առայաս և այլ գետեր: Երկարությունը՝ 1 979 կմ: Ջրի ծախսը՝ 9 700 մ^3/վրկ: Ջրահավաք ավազանը՝ 531 250 կմ^2:
Նախկինում հայտնի էր Պարանաիբա, Պարանայբա, Աորիպանա և այլ անուններով:
Այժմյան անվանումը ստացել է հնդկացիական *շինգու* ցեղերի պատվին:

Չ

ՉԱԹԵՄ - իսպաներեն Isla Chatham. Խաղաղ օվկիանոսի կղզի Չիլիի հարավային մասում՝ չիլիական Անտարկտիկայում: Մակերեսը՝ 696,4 կմ^2: Ափագծի երկարությունը՝ 355 կմ: Բարձր կետը՝ 1 310 մ:
1791 թ-ի նոյեմբերի 29-ին Ուիլյամ Ռ. Բրոտոնի կողմից անվանվել է ի պատիվ Ծովակալության 1-ին լորդ *Ջոն Փիտ, 2-րդ կոմս Չաթեմի* պատվին:

ՉԱԿԱԼՏԱՅԱ - իսպաներեն Chacaltaya, կեչուա Chakaltaya, այմարա Chaqaltaya. լեռնազանգված և համանուն լեռ Բոլիվիայում՝ Կորդիլյեռա Ռեալ լեռնաշղթայում: Բացարձակ բարձրությունը՝ 5 421 մ:
Անվանումն առաջացել է հնդկացիական մոլլո լեզվից և բառացի նշանակում է *Քամիների կամուրջ* կամ *Քամիների հանդիպման վայր*:
Մեկ այլ վարկածի համաձայն անվանումն առաջացել է այմարա լեզվից և բառացի նշանակում է *Սառը ճամփա*:

ՉԱԿԱՈ - իսպաներեն Canal de Chacao. խորը նեղուց Չիլիի հարավում՝ երկրի մայրցամաքային մասի և **Մեծ Չիլոե** կղզու միջև: Երկարությունը՝ 25,928 կմ, լայնությունը՝ 1,8-4,63 կմ:
Անվանումն առաջացել է հնդկացիական մապուդունգուն լեզվի chacau *ավազ* բառից:
Մեկ այլ վարկածի համաձայն անվանումն առաջացել է մապուչե լեզվի cucao *որոր* բառից:
Հայտնի է նաև *Միակաու* և *Սակաո* անուններով:

ՉԱՉԱԿՈՒՄԱՆԻ - իսպաներեն Chachacomani, կեչուա Chachakumani. լեռ Բոլիվիայում՝ **Անդերի** Կորդիլյեռա Ռեալ լեռնաշղթայում: Բացարձակ բարձրությունը՝ 6 074 մ:
Անվանումն առաջացել է Escallonia myrtilloides տեսակի դեղաբույսի կեչուա լեզվի տեղական chachakuma անունից:

ՉԱՉԱՆԻ - իսպաներեն Chachani. քառագագաթ ստրատոհրաբուխ **Անդերում՝** Պերուի հարավում: Բացարձակ բարձրությունը՝ 6 057 մ, հարաբերականը՝ 1 963 մ:
Անվանումն այմարա լեզվից բառացի նշանակում է *Արի, խիզախ*:

ՉԻԼՈԵ - իսպաներեն Archipiélago de Chiloé. 42 կղզուց կազմված Խաղաղ օվկիանոսի կղզեխումբ՝ Չիլիի հարավային մասում: Մակերեսը՝ 9 181 կմ^2: Բարձր կետը՝ 960 մ (Սան

Պեդրո կղզում): Խոշոր կղզիներն են՝ **Մեծ Չիլոե** (8 394 կմ^2), **Կինչաո** (120 կմ^2), **Լեմույ** (97 կմ^2), Տալկան (50 կմ^2) և այլն:
Անվանումը Chroicocephalus maculipennis տեսակի որորի հնդկացիական մապուչե լեզվում chillwe անվան իսպաներեն chilhué ձևով հարմարեցման արդյունք է:

ՉԻՄԲՈՐԱՍՈ - իսպաներեն Volcán Chimborazo, կեչուա Chimpurasu. հանգած հրաբուխ **Անդերում**՝ Էկվադորում: Հրաբխի ստորոտներից է սկիզբ առնում Գուայաս գետը: Բացարձակ բարձրությունը՝ 6 263,47 մ, հարաբերականը՝ 4 123 մ:
Անվանումն առաջացել է կեչուա լեզվի chimba/chimpa *այն կողմ* և razu *ձյուն, սառույց* բառերի միացումից՝ *Այն կողմի ձյուն (սառույց)*:
Մեկ այլ վարկածի համաձայն անվանումը կազմված է հնդկացիական չապալաչերեն լեզվի schingbu *կին* և կեչուա լեզվի razu *ձյուն, սառույց,* բառերի միացումից՝ *Ձյունե (սառցե) կին*:

ՉՈՆՈՍ - իսպաներեն Archipiélago de los Chonos. 1 048 կղզիներից կազմված Խաղաղ օվկիանոսի լեռնոտ կղզեխումբ՝ Չիլիի հարավ-արևմուտքում: Մակերեսը՝ մոտ 13 000 կմ^2: Բարձր կետը՝ 1 290 մ (**Ձեյմս** կղզում): Խոշոր կղզիներն են՝ **Մելչոր**, **Բենխամին**, **Տրայգեն**, **Ռիվերո** և այլն:
Անվանումը ստացել է ժամանակին այստեղ բնակություն հաստատած, իսկ այժմ անհետացած *Չոնո* հնդկացիական ցեղի անունից:

Պ

ՊԱՄՊԱ - իսպաներեն Región pampeana, պորտուգալերեն Pampa. տափաստան Հարավային Ամերիկայի հարավ-արևելքում: Արևմուտքում եզերված է **Անդերով**, արևելքում՝ Ատլանտյան օվկիանոսով: Աշխարհագրորեն բաժանվում է 2 մասի՝ Արևմտյան և Արևելյան Պամպաների: Մակերեսը՝ 1 200 000 կմ^2:
Անվանումն առաջացել է կեչուա լեզվի pampa *հարթ* բառից:

ՊԱՆ ԴԵ ԱՍՈՒԿԱՐ - իսպաներեն Pico Pan de Azúcar. լեռնագագաթ Վենեսուելայում՝ Սյեռա Լա Կուլատա լեռներում: Բարձրությունը՝ 4 680 մ ±0,4 մ:
Անվանվել է վենեսուելացի տեղագիր Ալֆրեդո Յանի կողմից և իսպաներենից թարգմանաբար նշանակում է *Շաքարե գլուխ*:
Հայտնի էր նաև *Տուկանի* անվամբ:

ՊԱՆՏԱՆԱԼ - պորտուգալերեն Pantanal, իսպաներեն Pantanal / Gran Pantanal. լայնարձակ ճահճոտ տեկտոնական իջվածք Բրազիլիայում և մասամբ Բոլիվիայում ու Պարագվայում: Մակերեսը՝ 187 118 - 340 540 կմ^2:
Անվան հիմքում ընկած է պորտուգալերեն pântano *ճահճոտ ցածրություն* կամ *խոնավ ցածրավայր* բառը:
Հայտնի է նաև *Պանտանալ Մատուգրոսենսի* անվամբ:

ՊԱՍՏՈՐՈՒՐԻ - իսպաներեն Glaciar Pastoruri, կեչուա Pastururi Rit'ipampa. սառցադաշտ Պերուում՝ Կորդիլյեռա Բլանկայից հարավ գտնվող Պաստորուրի հրաբխի գագաթի հյուսիսային մասում: Երկարությունը՝ 1,3 կմ, լայնությունը՝ 2,3 կմ: Բարձրությունը՝ 5 201 - 5 001 մ: Մակերեսը՝ 1,99 կմ^2:

Անվանումը կեչուա լեզվից բառացի նշանակում է *Հետին պլանի պամպա* կամ *Ամփոփ արոտավայր*:

ՊԱՏԱԳՈՆՅԱՆ ԱՆԱՊԱՏ - իսպաներեն Patagonia extraandina / Patagonia oriental. ավազաքարային անապատ Արգենտինայում: Շուրջ 1 600 կմ երկարությամբ նեղ շերտով ձգվում է Ատլանտյան օվկիանոսի երկայնքով: Այստեղով է հոսում Կոլորադո գետը: Բարձրությունը՝ 0 - 2 000 մ: Մակերեսը՝ 670 000 կմ^2:
Անվանումը ստացել է ***Պատագոնիա*** աշխարհագրական մարզից:

ՊԱՏԱԳՈՆՅԱՆ ԿՂԶԵԽՈՒՄԲ - իսպաներեն Archipiélago de Patagonia. Խաղաղ օվկիանոսի մի քանի կղզեխմբերի և հազարավոր կղզիների ու ժայռերի ընդհանրական անվանումը՝ Չիլիի հարավարևմտյան ափերի մոտ: Խոշոր կղզեխմբերն են՝ **Չիլոե**, Գուայտեկաս, **Չոնոս**, Գուայանեկո, Կամպանա, Մադրե դե Դյոս և այլն: Խոշոր կղզիներն են՝ **Մեծ Չիլոե**, **Վելինգտոն**, **Սանտա Ինես**, Մագդալենա և այլն: Բարձր կետը՝ 1 371 մ, **Սանտա Ինես** կղզում:
Անվանումը ստացել է ***Պատագոնիա*** երկրամասից:
Հայտնի է նաև *Չիլիական* կղզեխումբ անվամբ:

ՊԱՏԱԳՈՆԻԱ - իսպաներեն Patagonia. աշխարհագրական մարզ Արգենտինայում՝ Կոլորադո և Չիլիում՝ Բիոբիո գետերից հարավ: Մակերեսը՝ 1 060 631 կմ^2: Բարձր կետը **Դոմույո** հրաբուխն է 4 709 մ:
1520 թ-ին անվանվել է Ֆեռնան Մագելանի կողմից: Անվան հիմքում ընկած է այստեղի հնդկացիներին տրված patagonas *թաթանման ոտքեր ունեցողներ* բառը:
Մեկ այլ վարկածի համաձայն անվան հիմքում ընկած է նախկինում Փոքր Ասիա թերակղզում գտնվող հին հունական *Պափլագոնիա* մարզի անունը:

ՊԱՏՐԻՍՅՈ ԼԻՆՉ - իսպաներեն Isla Patricio Lynch. Խաղաղ օվկիանոսի կղզի Չիլիի հարավային մասում՝ Կամպանա կղզեխմբում: Երկարությունը՝ 33,3 կմ, միջին լայնությունը՝ 26 կմ: Մակերեսը՝ 560,8 կմ^2: Ափագծի երկարությունը՝ 255,1 կմ: Բարձր կետը Բրիկեր գագաթն է 853 մ:
Անվանվել է չիլիացի ականավոր զինվորական, փոխծովակալ *Պատրիսյո Խավյեր դե լոս Դոլորես Լինչ Սոլո դե Սալդիվարի* պատվին:

ՊԱՐԱԳՈՒԱՆԱ - իսպաներեն Península de Paraguaná. ցածրադիր թերակղզի Վենեսուելայի հյուսիսարևմտյան մասում՝ ողողվում է Կարիբյան ծովի ջրերով: Երկարությունը՝ 86 կմ, լայնությունը՝ 53 կմ: Մակերեսը՝ 3 405 կմ^2: Բարձր կետը Սանտա Անա գագաթն է 830 մ:
Անվանումը թարգմանաբար նշանակում է *Ծովամիջի հողակտոր*:

ՊԱՐԱԳՎԱՅ - իսպաներեն Río Paraguay, պորտուգալերեն Rio Paraguai. գետ Բրազիլիայում, Պարագվայում և Արգենտինայում, **Պարանայի** աջ վտակը: Վտակներն են՝ Տեբիկուարի, **Բերմեխո**, Պերդիդու, Մոնտելինդո, Նեգրո, Կոնֆուսո և այլ գետեր: Երկարությունը՝ 2 626 կմ: Ջրի ծախսը՝ 4 316 մ^3/վրկ: Ջրահավաք ավազանը՝ 1 168 540 կմ^2:
Անվանումը ստացել է հնդկացիական պամպիդա ցեղի նվաստացուցիչ payagun անունից:
Մեկ այլ տեսակետի համաձայն գետի անվանումը գուարանի լեզվով բառացի նշանակում է *Ծովի աղբյուր*:

ՊԱՐԱԻԲԱ ԴՈՒ ՍՈՒԼ - պորտուգալերեն Rio Paraíba do Sul. գետ Բրազիլիայի հարավարևելյան մասում: Կազմավորվում է Պարայտինգա և Պարայբունա գետերի միախառնումից և հոսելով հյուսիսարևելյան ուղղությամբ, թափվում Ատլանտյան օվկիանոս: Երկարությունը՝ 1 137 կմ: Ջրի ծախսը՝ 980 մ^3/վրկ: Ջրահավաք ավազանը՝ 56 500 կմ^2:
Անվանումը կազմված է հնդկացիական տուպի լեզվի parn *ծով* և aíba *անպետք* բառերի միացումից՝ *Անպետք ծով*:

ՊԱՐԱԿԱՍ - իսպաներեն Península de Paracas. թերակղզի Պերույում: Ողողվում է Խաղաղ օվկիանոսի ջրերով: Երկարությունը՝ 25 կմ, լայնությունը՝ 12,5: Մակերեսը՝ 335 կմ^2:
Անվանումն առաջացել է հնդկացիական կեչուա լեզվի para *անձրև* և aco *ավազ* բառերի միացումից:

ՊԱՐԱԿԱՍ - իսպաներեն Bahía de Paracas. Խաղաղ օվկիանոսի ծանծաղ ծոց Պերուի ափերի մոտ: Երկարությունը՝ 8 կմ, լայնությունը՝ մինչև 6,5 կմ: Առավելագույն խորությունը՝ 14 մ: Մակերեսը՝ 36 կմ^2:
Անվանումն առաջացել է կեչուա լեզվի páraq կամ parak *անձրևոտ* բառից:

ՊԱՐԱՆԱ - իսպաներեն Río Paraná, պորտուգալերեն Rio Parann. գետ Բրազիլիայում, Պարագվայում և Արգենտինայում: Կազմավորվում է **Բրազիլական սարահարթի** հարավային մասում՝ Պարանաիբա ու **Գրանդի** գետերի միախառնումից: Վտակներն են՝ Տյետե, Պեյշի, Պարանապանեմա, **Իգուասու**, **Ուրուգվայ**, **Պարագվայ** և այլ գետեր: Երկարությունը՝ 4 880 կմ: Ջրի ծախսը՝ 2 450-65 000 մ^3/վրկ: Ջրահավաք ավազանը՝ 2 582 672 կմ^2:
Անվանումը հնդկացիական տուպի գուարանի լեզվից թարգմանաբար նշանակում է *Ծովին նման*:

ՊԱՐԱՆԱՅԻ ԳԵՏԱԲԵՐԱՆ - իսպաներեն Delta del Paraná. աշխարհի խոշորագույն գետաբերաններից մեկը Արգենտինայում ու Ուրուգվայում: Աշխարհագրորեն բաժանվում է 3 մեծ մասերի՝ Վերին, Միջին և Ստորին դելտաների: Երկարությունը՝ 320 կմ: Մակերեսը՝ 14 000 կմ^2:
Անվանումը ստացել է ***Պարանա*** գետից:

ՊԱՐԻՆԱԿՈՏԱ - իսպաներեն Volcán Parinacota, այմարա Parina Quta. ստրատոհրաբուխ Չիլիի հյուսիսում, Բոլիվիայի հետ սահմանամերձ գոտում: Բացարձակ բարձրությունը՝ 6 348 մ, հարաբերականը՝ 1 150 մ:
Անվանումն առաջացել է լեռան այմարա լեզվի Parina Quta *Ֆլամինգոյի լիճ* անունից:

ՊԱՐԻՆՅԱՍ - իսպաներեն Punta Pariñas. հրվանդան Պերուի հյուսիսարևմտյան մասում: Հարավային Ամերիկայի արևմտյան մայրցամաքային ծայրակետը 4′ 40′ 45″ S, 81′ 19′ 35″ W կոորդինատներով:
Անվանվել է Phoenicopanus jamesi տեսակի ճնճղուկազգի թռչունի պատվին, որի իսպաներեն անունը *Պարինա* է:
Հայտնի է նաև *Բալկոնես* անվամբ:

ՊԱՐՅԱ - իսպաներեն Península de Paria. լայնակի ձգված թերակղզի Վենեսուելայի հյուսիս-արևելքում: Համարվում է Կարիբյան Անդերի Մերձափնյա Սյեռա լեռնաշղթայի շարունակությունը՝ ողողվում է Կարիբյան ծովով: Երկարությունը՝ մոտ 120 կմ: Մակերեսը՝ 2 438 կմ^2: Բարձր կետը Ումո գագաթն է 1 257 մ:

Նախկինում հայտնի էր *Տյեռա դե Գրասիա* անվամբ:
Այժմյան անվանումը թարգմանաբար նշանակում է *Պարիա, թշվառական, հալածված անձ*:

ՊԱՐՅԱ - իսպաներեն Golfo de Paria. Կարիբյան ծովի ծոց Վենեսուելայի ափերի մոտ, եզերված համանուն թերակղզով և Տրինիդադ կղզով: Բոկաս դել Դրագոն նեղուցով միանում է Կարիբյան ծովի, իսկ Բոկա դե լա Սյեռպե նեղուցի միջոցով Ատլանտյան օվկիանոսի հետ: Մակերեսը՝ շուրջ 7 800 կմ^2: Առավելագույն խորությունը՝ 22 մ:
Նախկինում հայտնի էր Golfo de la Ballena *Կետերի ծոց* անվամբ:
Այժմյան անվանումը ստացել է ***Պարյա*** թերակղզուց:

ՊԵՆԱՍ - իսպաներեն Golfo de Penas. Խաղաղ օվկիանոսի ծոց Չիլիի հարավում՝ **Տայտաո** թերակղզու և Գուայանենո կղզու միջև: Երկարությունը՝ 110 կմ, լայնությունը՝ մինչև 90 կմ: Առավելագույն խորությունը՝ 146 մ:
Ծոցի իսպաներեն Golfo de Penas անվանումը թարգմանաբար նշանակում է *Դժբախտության (պատժի) ծոց* :

ՊԵՏՐՈՈՒԵ - իսպաներեն Saltos de Petrohué. ցածրադիր ջրվեժների խումբ Արգենտինայում: Ջրի ծախսը՝ 370 մ^3/վրկ:
Անվանումը հնդկացիական մապուչե լեզվից բառացի նշանակում է *Մժեղների (մժիկների) վայր*:

ՊԻԼԿՈՄԱՅՈ - իսպաներեն Río Pilcomayo. գետ Բոլիվիայում, Պարագվայում և Արգենտինայում՝ **Պարագվայ** գետի աջ վտակը: Սկիզբ է առնում **Անդերի** արևելյան լանջերից և հիմնականում հոսելով հարավարևելյան ուղղությամբ, Ասունսյոն քաղաքի մոտ թափվում մայր գետը: Երկարությունը՝ 1 590 կմ: Ջրի ծախսը՝ 175 մ^3/վրկ: Ջրահավաք ավազանը՝ 272 000 կմ^2:
Գետն իր հոսքի տարբեր մասերում հայտնի է Իտիկա, Տևոկ և Արագուայ անուններով:
Անվանումը կեչուա լեզվից բառացի նշանակում է *Թռչնի գետ*:

ՊԻԿՈ ԲՈԼԻՎԱՐ - իսպաներեն Pico Bolívar. Վենեսուելայի ամենաբարձր գագաթը՝ Կորդիլյեռա դե Մերիդա լեռներում: Բացարձակ բարձրությունը՝ 4 978,43 ±0,42 մ, հարաբերականը՝ 3 963 մ:
Նախկինում հայտնի էր *Լա Կոլումնա, Կոնչա* և *Պեյնետա* անուններով:
1925 թ-ի մարտի 8-ին առաջարկվեց լեռան անունն անվանափոխել Լատինական Ամերիկայի ազատագրական պայքարի հերոս, Մեծ Կոլումբիայի Ազատարար *Սիմոն Բոլիվարի* պատվին, որը և պաշտոնապես ընդունվեց 1934 թ-ի դեկտեմբերի 30-ին:

ՊԻԿՈ ՀՈՒՄԲՈԼԴՏ - իսպաներեն Pico Humboldt. Վենեսուելայի բարձրությամբ 2-րդ գագաթը՝ Կորդիլյեռա դե Մերիդա լեռներում: Բացարձակ բարձրությունը՝ 4 942 մ, հարաբերականը՝ 3 987 մ:
Անվանվել է գերմանացի աշխարհագրագետ, բնագետ և ճանապարհորդ բարոն *Ֆրիդրիխ Վիլհելմ Հենրիխ Ալեքսանդր ֆոն Հումբոլդտի* պատվին:

ՊԻՉԻՆՉԱ - իսպաներեն Volcán Pichincha. երկգագաթ գործող ստրատոհրաբուխ Էկվադորում՝ **Անդերի Արևմտյան Կորդիլյեռաներում**: Գագաթներն են՝ Guagua-ն *Երեխա* և Rucu-ն *Ծերունի*: Բացարձակ բարձրությունը՝ 4 794 մ (2019 թ.), հարաբերականը՝ 1 652 մ:

Անվանումն առաջացել է պորտուգալերեն pechincha *գործարք* բառից:

ՊԻՉՈՒ ՊԻՉՈՒ - իսպաներեն Pichu Pichu, կեչուա Pikchu Pikchu. յոթ գագաթանի հրաբուխ Պերուի հարավում: Բացարձակ բարձրությունը՝ 5 665 մ, հարաբերականը՝ 1 305 մ:
Անվանումը հավանաբար առաջացել է կեչուա լեզվի pikchu *բուրգ* բառից:

ՊԻՍԿՈ - իսպաներեն Nevado Pisco, կեչուա Matarahu / Pisqu. երկգագաթ լեռ Պերույում, **Անդերի** Կորդիլյեռա Բլանկա լեռնաշղթայում: Բացարձակ բարձրությունը՝ 5 760 մ:
Անվանումը ստացել է *Պիսկո* տեղական ալկոհոլային խմիչքից:

ՊՅԵԴՐԱՍ ԲԼԱՆԿԱՍ - իսպաներեն Pico Piedras Blancas. Վենեսուելայի բարձրությամբ 5-րդ գագաթը՝ **Անդերի** Սյեռա Լա Կուլատա լեռներում: Բարձրությունը՝ 4 748,21 մ ±0,4 մ:
Անվանումն իսպաներենից թարգմանաբար նշանակում է *Սպիտակ քարեր*:
Հայտնի է նաև *Միսաման* անվամբ:

ՊՈՄԵՐԱՊԵ - իսպաներեն Volcán Pomerape, կեչուա Pumarapi. ստրատոհրաբուխ Բոլիվիայի և Չիլիի սահմանագլխին: Պարինակոտե հրաբխի հետ կազմում է Պայաչատա կրկնակի հրաբուխը: Բացարձակ բարձրությունը՝ 6 282 մ, հարաբերականը՝ 950 մ:
Անվանումը կեչուա լեզվից թարգմանաբար նշանակում է *Բազմած պումա*:

ՊՈՈՊՈ - իսպաներեն Lago Poopó, այմարա Pü Pü Quta, կեչուա Puwpu qucha. այսօրվա դրությամբ ցամաքած անհոսք, աղի լիճ Բոլիվիայում: Երկարությունը՝ մինչև 84 կմ, լայնությունը՝ մինչև 55 կմ: Մակերեսը՝ 1 340 կմ^2: Միջին խորությունը՝ 1,5 մ, առավելագույնը՝ 3 մ: Ծավալը՝ 2 կմ^3: Հայելու մակերեսի բարձրությունը՝ 3 686 մ: Ջրահավաք ավազանը՝ 16 343 կմ^2: Լիճն է թափվում Դեսագուադերո օ Աուլյագաս գետը: Լճում կան 15 կղզի, որոնցից խոշորագույնը Պանսան է:
Անվանումը հնդկացիական լեզուներից թարգմանաբար նշանակում է *Աշխարհի պորտը*:
Հայտնի է նաև *Պու մի Պու*, *Պուուպու* անուններով:

ՊՈՍԵՍՅՈՆ - իսպաներեն Bahía Posesión. ծոց Չիլիի հարավում՝ **Մագելանի նեղուցի** արևելյան մասի հյուսիսում:
Անվանումն իսպաներենից թարգմանաբար նշանակում է *Կալվածք*:

ՊՈՐՏԵՏԵ - իսպաներեն Bahía Portete. Կարիբյան ծովի խորը ծոց Կոլումբիայում, **Լա Գուախիրա** թերակղզուց հյուսիս-արևելք: Լայնությունը՝ մոտ 1,7 կմ: Մակերեսը՝ 127,93 կմ^2:

ՊՐԱՏ - իսպաներեն Isla Prat. Խաղաղ օվկիանոսի եռանկյունաձև կղզի Չիլիի հարավում՝ **Պենաս** ծոցի հարավային մասում: Ափերը ժայռոտ են և զառիթափ: Մակերեսը՝ 760,8 կմ^2: Ափագծի երկարությունը՝ 362,9 կմ: Բարձր կետը՝ 1 341 մ:
Անվանվել է XIX դարի չիլիացի փաստաբան, նավաստի և զինվորական *Ագուստին Արտուրո Պրատ Չակոնի* պատվին:

ՊՈՒՏՈՒՄԱՅՈ - իսպաներեն Río Putumayo, պորտուգալերեն Rio Içá. գետ Էկվադորում, Կոլումբիայում, Պերույում և Բրազիլիայում, **Ամազոն** գետի ձախ վտակը: Սկիզբ է առ-

նում **Կենտրոնական Կորդիլյեռայի** հարավարևելյան լանջերից և հոսելով հարավարևելյան ուղղությամբ, Սանտու Անտոնյու դու Իսա բնակավայրի մոտ թափվում մայր գետը: Վտակներն են՝ Կամպույա, Կարապարանա, Իգարապարանա, Ժամանարի և այլ գետեր: Երկարությունը՝ 1 813 կմ: Ջրի ծախսը՝ 7 850 մ^3/վրկ: Ջրահավաք ավազանը՝ 148 000 կմ^2:
Բրազիլիայում հայտնի է Իսա անվամբ, որը հնդկացիական տուպի լեզվից բառացի նշանակում է *Վայրի կին*:
Պուտումայո անվանումն առաջացել է կեչուա լեզվի putu *մրգերով թաս (ման)* և mayu *գետ* բառերի միացումից:

ՊՈՒՐՈՒՍ - պորտուգալերեն Rio Purus, իսպաներեն Río Purús. գետ Պերույում և Բրազիլիայում՝ **Ամազոնի** աջ վտակը: Սկիզբ է առնում **Անդերի** արևելյան լանջերից և հոսելով հիմնականում հյուսիսարևելյան ուղղությամբ, Բերուրի բնակավայրից հյուսիս թափվում մայր գետը: Վտակներն են՝ Ակրի, Ինաուինի, Պաուինի, Սեպատինի, Ժակուրե և այլ գետեր: Երկարությունը՝ 3 379 կմ: Ջրի ծախսը՝ 8 400 կմ^3: Ջրահավաք ավազանը՝ 371 042 կմ^2:
Անվանումն առաջացել է հնդկացիական լեզվի puru *նկարազարդված* բառից, որով հայտնի էր Պանարիս ցեղը:
Մեկ այլ վարկածի համաձայն անվանումն առաջացել է հնդկացիական Purus Purus ցեղի անունից:

Ջ

ՋԵՅՄՍ - իսպաներեն Isla James. կղզի Չիլիում՝ **Չոնոս** կղզեխմբի կենտրոնական մասում: Ողողվում է հյուսիսից և արևմուտքից Գոնյե, արևելքից՝ Սիրյակո, իսկ հարավից՝ Նինուալակ նեղուցների ջրերով: Երկարությունը՝ մինչև 38,9 կմ, լայնությունը՝ մինչև 16,7 կմ: Մակերեսը՝ 388 կմ^2: Բարձր կետը՝ 1 290 մ:
Անվանվել է բրիտանացի ջրագիր և հետազոտող *Բարտոլոմյու Ջեյմս Սալիվանի* պատվին:

Ռ

ՌԵԼՈՆԿԱՎԻ - իսպաներեն Seno de Reloncaví. ծոց Չիլիի հարավում, Լոս Լագոս տարածաշրջանում՝ համարվում է չիլիական **Պատագոնիայի** աշխարհագրական սկիզբը: Երկարությունը՝ 73,1 մ, լայնությունը՝ մինչև 51,8 մ:
Անվանումը ծոցի հնդկացիական մապուդունգուն լեզվի reloncovilu *օձի իրական գլուխ* անվան հնչյունափոխության արդյունք է:

ՌԻԵՍԿՈ - իսպաներեն Isla Riesco. կղզի Խաղաղ օվկիանոսի հարավարևելյան մասում, Չիլիի ափերի մոտ: Երկարությունը՝ 120 կմ, լայնությունը՝ 75 կմ: Մակերեսը՝ 5 110 կմ^2: Բարձր կետը Լադրիլյերո գագաթն է 1 709 մ:
Անվանվել է Չիլիի 14-րդ նախագահ *Խերման Ռիեսկո Էռասուրիսի* պատվին:

ՌԻՎԵՐՈ - իսպաներեն Isla Rivero. բլրոտ կղզի Չիլիում՝ **Չոնոս** կղզեխմբի հարավային մասում: Երկարությունը՝ 38,9 կմ, լայնությունը՝ 22,2 կմ: Մակերեսը՝ 451,5 կմ^2: Ափագծի երկարությունը՝ 123,7 կմ:

ՌԻՏԱԿՈՒԲԱ ԲԼԱՆԿՈ - իսպաներեն Ritacuba Blanco, ուվա (տուներբո) Ritak'uwa. լեռ Կոլումբիայում՝ **Արևելյան Կորդիլյեռայի** Սյեռա Նևադա դել Կոկույ լեռնազանգվածում: Բացարձակ բարձրությունը՝ 5 410 մ, հարաբերականը՝ 3 645 մ:
Անվան հիմքում ընկած է լեռան հնդկացիական ուվա (տուներբո) լեզվի Ritak'uwa անունը, որին ավելացվել է իսպաներեն Blanco *Սպիտակ* բառը:

ՌՈՐԱՅՄԱ - իսպաներեն Roraima, անգլերեն Mount Roraima, պորտուգալերեն Monte Roraima. սեղանասար Բրազիլիայի, Վենեսուելայի և Գայանայի սահմանագլխին՝ **Գվիանական վահանում**: Լեռը զբաղեցնում է շուրջ 31 կմ^2 տարածք: Բացարձակ բարձրությունը՝ 2 810 մ, հարաբերականը՝ 2 338 մ:
Անվանումը հավանաբար առաջացել է հնդկացիական պեմոն լեզվի roro *կապտականաչ* և ima *մեծ* բառերի միացումից:
Մեկ այլ վարկածի համաձայն անվանումը թարգմանվում է որպես *Գլորվող քար* կամ *Ջրերի բերրի մայր*:
Հայտնի է նաև *Ռորոյմա* անվամբ:

ՌՈՒԻՍ - իսպաներեն Nevado del Ruiz. գործող ստրատոհրաբուխ Կոլումբիայում՝ Անդյան հրաբխային գոտու Ռուիս-Տոլիմա զանգվածում: Բացարձակ բարձրությունը՝ 5 321 մ (2019 թ.), հարաբերականը՝ 2 035 մ:
Նախկինում հայտնի էր Կումանդայ (*Սպիտակ սար*), Տաբուչիա (*Մոմ, կրակ*), Տամա (*Մեծ հայր, խրատտու*), Մեսա դե Էրվեռ (*Էրվեռի սեղան*) և Պարամո դե Ռուիս անուններով:
Հրաբխի այժմյան իսպաներեն անվանումը կազմված է Nevado *Ձնապատ* բառից և Ruiz (տարածված իսպանական անուն և ազգանուն) - ից:

ՌՈՒՄԻՆՅԱՎԻ - իսպաներեն Volcán Rumiñahui, կեչուա Rumiñawi urqu. եռագագաթ հանգած հրաբուխ Էկվադորում: Բարձրությունը՝ 4 712 մ: Գագաթներն են՝ Հյուսիսային, Կենտրոնական (4 631 մ) և Հարավային (4 696 մ):
Անվանվել է ի պատիվ ինկերի կայսրության զորավար Ատիկ Պիլյավասուի պատվին, որի ածական անունն էր *Ռումինյավի*, ինչը կեչուա լեզվից թարգմանաբար նշանակում է *Քարե աչք:*

Ս

ՍԱԼԱԴՈ - իսպաներեն Río Salado. գետ Արգետինայում, **Պարանա** գետի աջ վտակը: Սկիզբ է առնում Կենտրոնական Անդերի արևելյան լանջերից և հոսելով հարավարևելյան ուղղությամբ, Սանտա Ֆե քաղաքի մոտ թափվում մայր գետը: Երկարությունը՝ 2 355 կմ: Ջրի ծախսը՝ 170 մ^3/վրկ: Ջրահավաք ավազանը՝ 124 199 կմ^2:
Գետը վերին հոսանքում հայտնի է Գուաչինաս, Պասախե օ Խուրամենտո անուններով:
Անվանումն իսպաներենից թարգմանաբար նշանակում է *Աղի գետ*:

ՍԱԼԻՆԱՍ ԳՐԱՆԴԵՍ - իսպաներեն Salinas Grandes. ընդարձակ աղուտ Արգենտինայի հյուսիս-արևմուտքում, Սյեռա դե Անկաստի և Սյեռա դե Կորդովա լեռնաշղթաների միջև

գտնվող տեկտոնիկ իջվածքում: Բարձրությունը ծովի մակարդակից՝ մինչև 180 մ: Մակերեսը՝ 6 000 կմ^2:
Աղուտի իսպաներեն Salinas Grandes անվանումը թարգմանաբար նշանակում է *Մեծ աղուտներ*:

ՍԱԼԿԱՆՏԱՅ - իսպաներեն Salcantay /Salkantay, կեչուա Sallqantay. երկգագաթ լեռ Պերույում՝ **Անդերի** Կորդիլյեռա Վիլկաբամբա լեռնաշղթայում: Բացարձակ բարձրությունը՝ 6 271 մ:
Անվանումն առաջացել է կեչուա լեզվի salqa *մռայլ, վայրի* և antay *հուսներ առաջացնող* բառերի միացումից:

ՍԱԼՎԱԴՈՐ ԴԱԼԻ - իսպաներեն Desierto Salvador Dalí, կեչուա Salvador Dalí ch'in pacha. Բարձրադիր, չափազանց անպտուղ հովիտ Բոլիվիայի հարավ-արևմուտքում: Մակերեսը՝ 110 կմ^2: Միջին բարձրությունը ծովի մակարդակից՝ 4 050 մ:
Քանի որ անապատը բնութագրվում է սյուռեալիստական լանդշաֆտներով, ապա նա ստացավ իսպանացի աշխարհահռչակ նկարիչ, քանդակագործ, ռեժիսոր և գրող, սյուռեալիզմի խոշորագույն ներկայացուցիչ Սալվադոր Դոմենեկ Ֆելիպ Ժասինտ Դալի ի Դոմենեկ, մարկիզ դե Դալի դե Պուբոլ՝ *Սալվադոր Դալիի* պատվին:
Հայտնի է նաև *Դալիի հովիտ* անվամբ:

ՍԱԽԱՄԱ - իսպաներեն Nevado Sajama, այմարա chak xaña. ստրատոհրաբուխ Կենտրոնական Անդերում՝ Բոլիվիայում, Չիլիի հետ սահմանամերձ գոտում: Բացարձակ բարձրությունը՝ 6 542 մ, հարաբերականը՝ 2 428 մ:
Անվան հիմքում ընկած է լեռան այմարա լեզվի chak xapa *արևմուտք* անվանումը:

ՍԱԿԱԲԱՅԱ - իսպաներեն Sacabaya, կեչուա Saqawaya. ստրատոհրաբուխ Բոլիվիայում՝ **Ալտիպլանոյում**: Բարձրությունը՝ 4 215 մ:
Անվանումն առաջացել է հնդկացիական կեչուա լեզվից և բառացի նշանակում է *Գերեզմանադաշտ*:
Հայտնի է նաև *Կեմադո* անվամբ:

ՍԱՄԲՈՐՈՄԲՈՆ - իսպաներեն Bahía de Samborombón. ծոց Արգենտինայի արևելքում: Երկարությունը՝ 135 կմ: Ծոցն են թափվում Սալադո, Սամբորոմբոն և Ախո գետերը:
Անվանումը, *Սամբորոմբոն* աղճատված ձևով, ստացել է 1520 թ-ի Ֆեռնան Մագելանի արշավախմբի կողմից անվանակոչված *Սան Բորոնդոն* կղզուց, որն իր հերթին անվանվել է VI դարի իռլանդացի *Սուրբ Բրենդան Կլոնֆերտացու* պատվին:

ՍԱՆ ԺՈԶԵ - պորտուգալերեն Baía de São José. ծոց Բրազիլիայի հյուսիս-արևելքում: Անվանվել է Մարիամ Աստվածածնի ամուսին *Սուրբ Հովսեփի* պատվին:

ՍԱՆ ԽՈՐԽԵ - իսպաներեն Golfo San Jorge. Ատլանտյան օվկիանոսի խոշոր ծոց Արգենտինայի արևելյան ափերի մոտ: Երկարությունը՝ 148 կմ, առավելագույն լայնությունը՝ 244 կմ: Միջին խորությունը՝ 73-101 մ: Ծոցում կան շուրջ 42 կղզիներ:
Անվանվել է հռոմեական զինվորական, սրբադասված քրիստոնյա նահատակ *Սուրբ Գևորգ Զորավար Կապադովկացու* պատվին:

ՍԱՆ ԽՈՒԼԻԱՆ - իսպաներեն Bahía San Julián. բնական ծովախորշ Արգենտինայի հարավ-արևելքում:

Նախկինում հայտնի էր *Պուերտո Սան Խուլիան* անվամբ:
Այժմյան անվանումը ստացել է *Սուրբ Հուլիոս Անարգաբացու* պատվին:

ՍԱՆ ԿՐԻՍՏՈԲԱԼ - իսպաներեն Isla de San Cristóbal. կղզի Խաղաղ օվկիանոսում, **Գալապագոս** կղզեխմբի ծայր արևելյանը: Երկարությունը՝ 49 կմ, լայնությունը՝ 17 կմ: Մակերեսը 558,08 կմ^2: Բարձր կետը Սան Խոակին գագաթն է 730 մ:
Նախկինում հայտնի էր *Չաթեմ* անվամբ:
Անվանվել է ճանապարհորդների հովանավոր *Սուրբ Քրիստափորի* պատվին:

ՍԱՆ ՄԱՏԻԱՍ - իսպաներեն Golfo San Matías. Ատլանտյան օվկիանոսի խոշոր խորը ծոց Արգենտինայի արևելյան ափերի մոտ: Երկարությունը՝ 148 կմ, լայնությունը՝ մինչև 118 կմ:
Անվանվել է ի պատիվ քրիստոնյա *Սուրբ Մատաթիա առաքյալի* պատվին:

ՍԱՆ ՄԱՐԿՈՒՍ - պորտուգալերեն Baía de São Marcos. Ատլանտյան օվկիանոսի խորը ծոց Բրազիլիայի հյուսիս-արևելքում: Երկարությունը՝ մինչև 100 կմ, լայնությունը՝ մինչև 16 կմ:
Անվանվել է *Սուրբ Մարկոս Ավետարանչի* պատվին:

ՍԱՆ ՊԵԴՐՈ - իսպաներեն Bahía San Pedro. ծոց Չիլիում՝ Լոս Լագոս X տարածաշրջանում:
1514 թ-ի սեպտեմբերի 17-ին իսպանացի ծովագնաց Պեդրո դե Վալդիվյայի կողմից այն անվանվեց *Սուրբ Պետրոսի* պատվին:

ՍԱՆ ՍԵԲԱՍՏՅԱՆ - իսպաներեն Bahía de San Sebastián. ծոց Արգենտինայում՝ **Մեծ Հրո երկիր** կղզուց հյուսիս: Հյուսիսից եզերված է Էլ Պարամո թերակղզով, իսկ հարավից՝ Սան Սեբաստյան հրվանդանով: Լայնությունը՝ մինչև 17 կմ: Միջին խորությունը՝ 20 մ:
Անվանվել է III դարի հռոմեացի լեգեոներ, քրիստոնյա մարտիրոս *Սուրբ Սեբաստիանի* պատվին:

ՍԱՆ ՎԻՍԵՆՏԵ - իսպաներեն Bahía de San Vicente. Խաղաղ օվկիանոսի ծոց Չիլիի կենտրոնական մասում՝ Տումբես և Ուալպեն թերակղզիների միջև:
Անվանվել է *Սուրբ Վինսենտ Սարագոսացու* պատվին:

ՍԱՆ ՖՐԱՆՍԻՍԿՈՒ - պորտուգալերեն Rio São Francisco. գետ Բրազիլիայում, իր երկարությամբ երրորդը Հարավային Ամերիկայում: Սկիզբ է առնում **Բրազիլական սարահարթի** միջին մասից՝ Սեռա դա Կանաստրա լեռնազանգվածից: Երկարությունը՝ 2 863 կմ: Ջրի ծախսը՝ 2 943 մ^3/վրկ: Ջրահավաք ավազանը՝ 617 812 կմ^2:
Գետը հայտնաբերվել է 1501 թ-ի հոկտեմբերի 4-ին և ստացել այդ օրվա հովանավոր *Սուրբ Ֆրանցիսկոս Ասիզացու* անունը:

ՍԱՆԳԱՅ - իսպաներեն Sangay, կեչուա Sankay. գործող ստրատոհրաբուխ Էկվադորում՝ **Անդերի** արևելյան լանջին: Բացարձակ բարձրությունը՝ 5 300 մ, հարաբերականը՝ 1 658 մ (2019թ.):
Սանգայ անվանումը կեչուա լեզվից բառացի նշանակում է *Սարսափեցնող, ահաբեկող* :
Հայտնի է նաև *Մակաս, Սանագայ* կամ *Սանգաի* անուններով:

ՍԱՆՏԱ ԻՆԵՍ - իսպաներեն Isla Santa Inés. լեռնոտ կղզի Չիլիի ծայր հարավում՝ **Հրո երկիր** կղզեխմբի կազմում: Երկարությունը՝ 92 կմ, լայնությունը՝ 55 կմ: Մակերեսը՝ 3 688 կմ^2: Ափագծի երկարությունը՝ 1 098,1 կմ: Բարձր կետը՝ 1 371 մ:
Հայտնի էր նաև *Հարավային Ամայի երկիր* անվամբ:
Այժմյան անվանումը ստացել է III-IV դարերի *Սուրբ Ագնես Հռոմեացու* պատվին:

ՍԱՆՏԱ ԿԱՏԱՐԻՆԱ - պորտուգալերեն Ilha de Santa Catarina. կղզի Ատլանտյան օվկիանոսում, Բրազիլիայի հարավարևելյան ափերի մոտ: Մակերեսը՝ 424,4 կմ^2: Բարձր կետը Ռիբեյրան Իլյա գագաթն է 532 մ:
Համարվում է, որ կղզին անվանվել է 1675 թ-ին պորտուգալացի ծովագնաց Ֆրանսիշկու Դիաշ Վելյուի կողմից, *Սուրբ Եկատերինա Ալեքսանդրացու* պատվին:
Մեկ այլ վարկածի համաձայն կղզին անվանվել է իտալացի ծովագնաց և ճանապարհորդ Սեբաստիան Կեբոտի կողմից, իր կնոջ *Կատարինա Մեդրանոյի* պատվին:

ՍԱՆՏԱ ԿՐՈՒՍ - իսպաներեն Isla Santa Cruz. հրաբխածին կղզի Խաղաղ օվկիանոսում, **Գալապագոս** կղզեխմբի կազմում: Երկարությունը՝ 43 կմ , լայնությունը՝ 31 կմ:
Մակերեսը 985,55 կմ^2: Բարձր կետը՝ 864 մ:
Նախկինում հայտնի էր *Ինդեֆատիգեբլ* անվամբ:
Այժմյան անվանումն իսպաներենից թարգմանաբար նշանակում է *Սուրբ Խաչ* :

ՍԱՐՄՅԵՆՏՈ - իսպաներեն Canal Sarmiento. նեղուց Չիլիի հարավում՝ չիլիական **Պատագոնիայում**: Երկարությունը՝ 142,6 կմ:
Անվանվել է իսպանացի հետազոտող, ծովագնաց և գիտնական *Պեդրո Սարմյենտո դե Գամբոայի* պատվին:

ՍԵԼՎԱՍ - պորտուգալերեն Selvas, իսպաներեն Selvas. խոնավ հասարակածային անտառներ Բրազիլիայում, Բոլիվիայում, Պերուլում, Էկվադորում, Կոլումբիայում, Վենեսուելայում, Գայանայում ու Սուրինամում:
Անվանումն իսպաներեն selva անվան հիմքում ընկած լատիներեն silva *անտառ* բառի հոգնակի ձևն է:

ՍԵՅՇԱՍ - պորտուգալերեն Ponta do Seixas. հրվանդան Բրազիլիայի հյուսիսարևելյան մասում: Հարավային Ամերիկայի արևելյան մայրցամաքային ծայրակետը 7′ 8′ 55.41″ S, 34′ 47′ 48.82″ W կոորդինատներով:
Անվանվել է XVII դարերում այս վայրերում բնակություն հաստատած պորտուգալացի *Ռոդրիգես Սեյշասի* պատվին:

ՍԵՉՈՒՐԱ - իսպաներեն Desierto de Sechura. ավազաքարային անապատ Հարավային Ամերիկայի հյուսիսարևմտյան մասում՝ Պերուլում: Երկարությունը՝ մինչև 150 կմ, լայնությունը՝ մինչև 100 կմ: Բարձրությունը՝ -34 մ-ից (Սեչուրա իջվածք) մինչև 480 մ (Իլյեսկաս բլուր): Մակերեսը՝ 5 000 կմ^2:
Անունը ստացել է համանուն քաղաքից, որի անունն իր հերթին, մեծ հավանականությամբ, առաջացել է այմարա լեզվի sekhe *կարտոֆիլի* կամ *եգիպտացորենի կտոր* բառից:
Մեկ այլ վարկածի համաձայն անվանումը ծագել է կեչուա լեզվից և թարգմանաբար նշանակում է *ինչ որ սպիտակ բան կտրել* , որով արծարծվում է անապատում աղի և գիպսի առատությունը:
Հայտնի է նաև *Պերուական անապատ* անվամբ:

ՍԵՌԱ ԴՈՒ ՄԱՐ - պորտուգալերեն Serra do Mar. լեռնահամակարգ Բրազիլիայի հարավ-արևելքում: Երկարությունը՝ 1500 կմ: Բարձր կետը Մայոր դի Ֆրիբուրգու գագաթն է 2 316 մ:
Անվանումը պորտուգալերենից թարգմանաբար նշանակում է *Ծովի լեռնաշղթա*:

ՍԵՌՈ ԼԻՊԵՍ - իսպաներեն Cerro Lípez. երկգագաթ ստրատոհրաբուխ Բոլիվիայի հարավ-արևմուտքում: Բացարձակ բարձրությունը՝ 5 929 մ:
Անվան հիմքում հավանաբար ընկած է այմարա լեզվի lippi *խցանված, լարված* բառը, որին ավելացվել է իսպաներեն cerro *բլուր* բառը՝ *խցանված (լարված) բլուր*:

ՍՅՈՒԼԱ ԳՐԱՆԴԵ - իսպաներեն Siula Grande, կեչուա Hatun Siwla. երկգագաթ լեռ Պերույում, **Անդերի** Կորդիլյեռա Ուայուաշ լեռնաշղթայում: Բացարձակ բարձրությունը՝ 6 344 մ:
Լեռան իսպաներեն Siula Grande անվանումը թարգմանաբար նշանակում է *Մեծ սուլող*:

ՍՈԿՈՄՊԱ - իսպաներեն Volcán Socompa. ստրատոհրաբուխ Չիլիի և Արգենտինայի սահմանագլխին: Բացարձակ բարձրությունը՝ 6 051 մ, հարաբերականը՝ 2 015 մ:
Անվանումը հավանաբար տրվել է ի պատիվ լեռան ստորոտում բնակվող հնդկացիական ատակամա ժողովրդի Socompa աստվածության պատվին:

Վ

ՎԱԼԴԵՍ - իսպաներեն Península Valdés. ցածրադիր թերակղզի Արգենտինայի արևելյան մասում: Ողողվում է Ատլանտյան օվկիանոսի ջրերով: Թերակղզու ներքին մակերեսի մեծ մասը ունի ծովի մակերևույթից մինչև -42 մ իջվածքներ: Երկարությունը՝ մինչև 90 կմ, լայնությունը՝ մինչև 86 կմ: Մակերեսը՝ 3 625 կմ^2: Բարձր կետը Պյաջո գագաթն է 110 մ:
1778 թ-ին անվանվել է իսպանացի ծովագնաց Բասիլյո Վիլյարինոյի կողմից, իր արշավախմբի մեկենաս *Վալդեսի* պատվին:

ՎԱԼԵՆՍՅԱ - իսպաներեն Lago de Valencia. լիճ Վենեսուելայի հյուսիսում, Կարիբյան Անդերի երկայնակի իջվածքում: Երկարությունը՝ մինչև 31,9 կմ, լայնությունը՝ մինչև 18,7 կմ: Մակերեսը՝ 344 կմ^2: Միջին խորությունը՝ 18 մ, առավելագույնը՝ 75 մ: Ծավալը՝ 6,2 կմ^3: Հայելու մակերեսի բարձրությունը՝ 407 մ: Ջրահավաք ավազանը՝ 2 646 կմ^2: Լիճն են թափվում Կաբրիալես, Արագուա, Տուրմերո, Գույգուե և այլ գետեր:
Անվանումը ստացել 1561 թ-ին այստեղ բնակություն հաստատած վենեսուելական *Վալենսյա* քաղաքի բռնապետ Լոպե դե Ագիռեյից փախած և լճի ափերին ապաստան գտած բնակիչների կողմից:
Հայտնի է նաև *Տակարիգուա* անվամբ:

ՎԵԼԻՆԳՏՈՆ - իսպաներեն Isla Wellington. Խաղաղ օվկիանոսի բլրոտ կղզի Չիլիի հարավային մասում՝ համանուն կղզեխմբում: Երկարությունը՝ 157 կմ, լայնությունը՝ 78 կմ: Մակերեսը՝ 5 555,7 կմ^2: Ափագծի երկարությունը՝ 1596,8 կմ: Բարձր կետը՝ 1 463 մ:
Անվանվել է բրիտանացի զինվորական և պետական գործիչ *Արթուր Ուելսլի, 1-ին դուքս Վելինգտոնի* պատվին:

ՎԵՆԵՍՈՒԵԼԱԿԱՆ ԾՈՑ - իսպաներեն Golfo de Venezuela. ծոց Կարիբյան ծովի հարավում, Վենեսուելայի ափերի մոտ՝ **Լա Գուախիրա** և **Պարագուանա** թերակղզիների միջև: Երկարությունը՝ 231 կմ, լայնությունը մուտքի մոտ՝ 98 կմ: Միջին խորությունը՝ 18 մ, առավելագույնը՝ 71 մ: Մակերեսը՝ 17 840 կմ^2: Ծավալը՝ 321,1 կմ^3:
Նախկինում հայտնի էր *Կոկիվակոա* և *Չիչիվակոա* անուններով:
Այժմյան անվանումը ստացել է *Վենեսուելա* երկրից:

ՎԻԿՏՈՐՅԱ - իսպաներեն Isla Victoria. կղզի Չիլիում՝ **Չոնոս** կղզեխմբի կենտրոնական մասում: Երկարությունը՝ 33,3 կմ, լայնությունը՝ 13 կմ: Մակերեսը՝ 354 կմ^2: Բարձր կետը՝ 759 մ:
Անվանումը լատիներենից թարգմանաբար նշանակում է *Հաղթանակ*:

ՎԻՇԱՊԻ ԵՐԱԽՆԵՐ - իսպաներեն Bocas del Dragón, անգլերեն Dragon's Mouths. **Պարյա** ծոցը Կարիբյան ծովի հետ միացնող 4 նեղ նեղուցների համակարգ, վենեսուելական **Պարյա** թերակղզու և Տրինիդադ կղզու միջև:
Անվանումը ստացել է առասպելական *Վիշապ* էակի պատվին:

ՎՅԵԴՄԱ - իսպաներեն Lago Viedma. սառցադաշտային լիճ Արգենտինայում՝ հարավային **Պատագոնիայում**, Չիլիի հետ սահմանամերձ գոտում: Երկարությունը՝ մինչև 80 կմ, լայնությունը՝ մինչև 21 կմ: Մակերեսը՝ 1 088 կմ^2: Հայելու մակերեսի բարձրությունը՝ 252 մ: Լճի սնուցումը հիմնականում կատարվում է նրա արևմտյան ափի մոտ գտնվող, շուրջ 5 կմ լայնությամբ Վյեդմա սառցադաշտից, արտահոսում է Լեոնա գետը:
Նախկինում հայտնի էր *Կապառ (Կոպառ)* անունով:
Հայտնաբերվել է 1782 թ-ին իսպանացի հետազոտող և գաղութարար *Անտոնիո դե Վյեդմայի* կողմից և հետագայում նրա պատվին ստացել իր անունը:

ՎՈՒԼԱՅԱ - իսպաներեն Caleta Wulaia. փոքր ծովախորշ **Բիգլ** նեղուցի Չիլիական մասում՝ **Նավարինո** կղզու արևմտյան ափի մոտ:
Անվանումը հնդկացիական յագան լեզվից բառացի նշանակում է *Գեղեցիկ ծոց*:

Տ

ՏԱՅՏԱՈ - իսպաներեն Península de Taitao. թերակղզի Չիլիի հարավ-արևմուտքում: Ողողվում է Խաղաղ օվկիանոսի ջրերով: Նեղ Օֆկի պարանոցով միացված է Պատագոնյան Անդերին: Թերակղզում կան բազմաթիվ լճակներ: Երկարությունը՝ 124 կմ, լայնությունը՝ 115 կմ: Բարձր կետը՝ 1 372 մ:
Անվան հիմքում հավանաբար ընկած է հնդկացիական չոնո լեզվի taíta *հայր* բառը:

ՏԱՊԱԺՈՍ - պորտուգալերեն Rio Tapajós. խոշոր գետ Բրազիլիայում, **Ամազոնի** աջ վտակը: Կազմավորվում է Սեռա դուս Պարեսիս բարձրացումից սկիզբ առնող Տելիս Պիրիս (Սան Մանուել) ու **Ժուրուենա** գետերի միախառնումից և հոսելով հիմնականում հյուսիսային ուղղությամբ, Սանտարեն քաղաքի մոտ թափվում մայր գետ: Վտակներն են՝ Ժամանշիմ, Տրոպաս, Կրեպորի, Կուպարի և այլ գետեր: Երկարությունը՝ 883 կմ (2 291 կմ՝ Տելիս Պիրիսի հետ միասին): Ջրի ծախսը՝ 13 540 մ^3/վրկ: Ջրահավաք ավազանը՝ 764 183 կմ^2:

Անվանվել է այս վայրերում XVII դարում բնակվող, իսկ այժմ անհետացած հնդկացիական *տապաժոս* ցեղի պատվին:

ՏԱՏԱԿՈԱ - իսպաներեն Desierto de la Tatacoa. անապատ Կոլումբիայում՝ Կենտրոնական Կորդիլյեռա և Արևելյան Կորդիլյեռա լեռնաշղթաների միջև: Մակերեսը՝ 330 կմ^2:
Նախկինում հայտնի էր Վալյե դե լաս Տրիստեսաս *Վշտի հովիտ* անվամբ:
Այժմյան անվանումը ստացել է այստեղ բնակվող խարամանի օձերի իսպաներեն *տատակոա* տեսակի անունից:

ՏԵԽԱ - իսպաներեն Isla Teja. գետային կղզի Չիլիում: Երկարությունը՝ 4 կմ, լայնությունը՝ 2 կմ: Մակերեսը՝ 7,72 կմ^2: Բարձր կետը՝ 66 մ: Ողողվում է Կալյե Կալյե, Վալդիվյա, Կաու Կաու և Կրուսես գետերով:
Նախկինում հայտնի էր *Իսլա դե Վալենսուա* անվամբ:
Այժմյան անվանումն իսպաներենից թարգմանաբար նշանակում է *Սալիկ*, որով արծարծվում էր ժամանակին այստեղ գոյություն ունեցող աղյուսի և սալիկի արտադրության առկայությունը:

ՏԵԿԵՆԴԱՄԱ - իսպաներեն Salto del Tequendama. ջրվեժ Կոլումբիայում՝ Բոգոտա գետի վրա: Անկման բարձրությունը՝ 157 մ, լայնությունը՝ 23 մ:
Անվանումը հնդկացիական չիբչա լեզվից բառացի նշանակում է *Նա ով վայր ընկավ*:

ՏՅԵՏԵ - պորտուգալերեն Rio Tietê. գետ Բրազիլիայում, **Պարանա** գետի ձախ վտակը: Սկիզբ է առնում **Սեռա դու Մար** լեռներից և հոսելով հյուսիսարևմտյան ուղղությամբ, թափվում **Պարանա** գետի վրա կառուցված Ժուպիա ջրամբարը: Երկարությունը՝ 1 136 կմ: Ջրի ծախսը՝ 2 500 մ^3/վրկ: Ջրահավաք ավազանը՝ 150 000 կմ^2:
Նախկինում հայտնի էր Անեմբի անվամբ:
Այժմյան անվանումը հնդկացիական տուպի լեզվից բառացի նշանակում է *Իրական գետ*:

ՏԻՏԻԿԱԿԱ - իսպաներեն Lago Titicaca, կեչուա Titiqaqa qucha, այմարա Titiqaqa Quta. լիճ Պերույում և Բոլիվիայում՝ **Ալտիպլանո** սարահարթում: Աշխարհի ամենաբարձրադիր նավարկելի լիճը: Երկարությունը՝ մինչև 204 կմ, լայնությունը՝ մինչև 65 կմ: Մակերեսը՝ 8 562 կմ^2: Միջին խորությունը՝ 107 մ, առավելագույնը՝ 283 մ: Ծավալը՝ 916 կմ^3: Հայելու մակերեսի բարձրությունը՝ 3 813 մ: Ափագծի երկարությունը՝ շուրջ 1 125 կմ է: Ջրահավաք ավազանը՝ 56 270 կմ^2: Լիճն են թափվում Ուանկանե, Ռամիս, Կոատա, Իլավե, Կատարի և 21 այլ գետեր, իսկ արտահոսում՝ Դեսագուադերո o Աուլյագաս գետը: Լճում կան բազմաթիվ կղզիներ՝ Իսլա դել Սոլ, Ինտիկխարկա, Ամանտան ի Տակիլե և այլն:
Նախկինում հայտնի էր Պուկինա և Մամակոտա անուններով:
Այժմյան անվանումը հավանաբար ստացել է լճում գտնվող Ինտիկխարկա կղզու անունից, որի անունն իր հերթին կազմված է այմարա լեզվի inti *ժայռ* և կեչուա լեզվի kjarka *զանգված* բառերի միացումից:
Մեկ այլ վարկածի համաձայն լիճն անվանվել է Իսլա դել Սոլ կղզում գտնվող Titi Khar'ka ժայռից, որն այմարա լեզվից թարգմանաբար նշանակում է *Պումայի քար*:

ՏՈԴՈՒԶ ՈՒՍ ՍԱՆՏՈՒՍ - պորտուգալերեն Baía de Todos-os-Santos. Ատլանտյան օվկիանոսի ծովախորշ Բրազիլիայի արևելյան մասում: Միջին խորությունը՝ 9,8 մ, առավելագույնը՝ 70 մ: Մակերեսը՝ 1 223 կմ^2: Ծավալը՝ 11,9 կմ^3: Ծոցն է թափվում Պարագուասու գետը: Այստեղ կան շուրջ 91 կղզի, որոնցից խոշորը Իրապարիկան է:

Անվանումը պորտուգալերենից թարգմանաբար նշանակում է *Բոլոր Սրբերի ծովախորշ*:

ՏՈԼԻՄԱ - իսպաներեն Nevado del Tolima. ստրատոհրաբուխ Կոլումբիայում՝ **Անդերի Կենտրոնական Կորդիլյեռա** լեռնաշղթայում: Բացարձակ բարձրությունը՝ 5 215 մ:
Տոլիմա անվանումն առաջացել է հնդկացիական պանչե լեզվի tolima, tulima կամ dulima՝ *ձյան գետ* կամ *ամպեր* բառերից:

ՏՈԿԱՆՏԻՆՍ - պորտուգալերեն Rio Tocantins. գետ Բրազիլիայում: Կազմավորվում է **Բրազիլական սարահարթի** կենտրոնական մասում Մարանյան և Ալմաս գետերի միախառնումից, **Ամազոն** գետի աջ վտակը: Վտակներն են՝ Սանտա Տերեզա, Սոնո, Տաուրի, **Արագուայա**, Իտակայունաս և այլ գետեր: Երկարությունը՝ 2 416 կմ: Ջրի ծախսը՝ 13 598 մ^3/վրկ: Ջրահավաք ավազանը՝ 803 250 կմ^2:
Անվանումն առաջացել է հնդկացիական տուպի լեզվի tukana *տուկան* և tim *կտուց* բառերի միացումից՝ *Տուկանի կտուց*:

ՏՐԱՅԳԵՆ - իսպաներեն Isla Traiguén. կղզի Չիլիում՝ **Չոնոս** կղզեխմբում: Երկարությունը՝ 38 կմ, լայնությունը՝ 19,7 կմ: Մակերեսը՝ 520,2 կմ^2: Ափագծի երկարությունը՝ 125 կմ: Բարձր կետը Գլորյա ժայռն է 1 014 մ:
Անվանումն առաջացել է հնդկացիական մապուդունգուն trayén *ջրվեժ* կամ traiken *ջրանկում* բառերից:

ՏՐԵՍ ԷՐՄԱՆԱՍ - իսպաներեն Cataratas las Tres Hermanas. եռասանդղավանդ ջրվեժ Պերույում՝ աշխարհի ամենաբարձրներից մեկը: Անկման բարձրությունը՝ 914 մ, լայնությունը՝ 12 մ:
Իսպաներեն Cataratas las Tres Hermanas անվանումը թարգմանաբար նշանակում է *Երեք քույրերի ջրվեժ*:

ՏՐԵՍ ԿՐՈՒՍԵՍ - իսպաներեն Nevado Tres Cruces. քառագագաթ հրաբխային զանգված **Անդերում**՝ Չիլիի և Արգենտինայի սահմանագլխին: Բացարձակ բարձրությունը՝ 6 749 մ , հարաբերականը՝ 1 422 մ:
Անվանումը իսպաներենից թարգմանաբար նշանակում է *Երեք Խաչ*:

ՏՈՒՆԳՈՒՐԱՈՒԱ - իսպաներեն Volcán Tungurahua, կեչուա Tunkurawa. ստրատոհրաբուխ Էկվադորում՝ **Անդերի** Կորդիլյեռա Ռեալ լեռնաշղթայում: Բացարձակ բարձրությունը՝ 5 023 մ, հարաբերականը՝ 1 554 մ:
Անվանումն առաջացել է կեչուա լեզվի tunqur *կոկորդ* և rawra *հուր, կրակ* բառերի միացումից՝ *Հրե կոկորդ*:
Հայտնի է նաև *Գիգանտե Նեգրո* և *Մամա Տունգուրաուա* անուններով:

ՈՒ

ՈՒԱԼԿԱ ՈՒԱԼԿԱ - իսպաներեն Hualca Hualca, կեչուա Wallqa Wallqa. ստրատոհրաբուխ Պերուի հարավում՝ Կորդիլյեռա դե լոս Անդես լեռնաշղթայում: Բացարձակ բարձրությունը՝ 6 025 մ:
Անվան հիմքում հավանաբար ընկած է այմարա և կեչուա լեզուների wallqa *վզակապ, վզնոց* բառը:

ՈՒԱԼՅԱԳԱ - իսպաներեն Río Huallaga. գետ Կենտրոնական Պերուում, **Մարանյոնի** աջ վտակը: Սկիզբ է առնում **Անդերից** և հոսելով հյուսիսային, ապա հյուսիսարևելյան ուղղությամբ, Տրես Ունիդոս բնակավայրի մոտ թափվում մայր գետը: Վտակներն են՝ Սանտա Մարիա, Չունտայակու, Տոչաչա, Ուայաբամբա, Բյաբո, Մայո և այլ գետեր: Երկարությունը՝ 1 138 կմ: Ջրի ծախսը՝ 3 350 մ^3/վրկ: Ջրահավաք ավազանը մոտ 85 000 կմ^2:
Նախկինում հայտնի էր *Ուանուկո* անվամբ:
Այժմյան անվանումը մի շարք հնդկացիական լեզուներով գետի Cuallagar *Լճով քարայր* անվան հնչյունակազմական նմանության արդյունք է:

ՈՒԱՅԴ - իսպաներեն Canal Wide. Խաղաղ օվկիանոսի նեղուց Չիլիի հարավային մասում՝ չիլիական **Պատագոնիայում**: Երկարությունը՝ 59 կմ: Ափերը զառիթափ են և լեռնոտ:
Անվանումն ունի անգլիական ծագում և թարգմանաբար նշանակում է *Լայն* :

ՈՒԱՅԹՍԱՅԴ - իսպաներեն Canal Whiteside. նեղուց Չիլիի ծայր հարավում: Իրարից բաժանում է արևմուտքում **Դոուսոն** և արևելքում՝ **Մեծ Հրո երկիր** կղզիները:
Անվանվել է չիլիացի ծովագնաց և քարտեզագիր *Արթուր Ուայթսայդի* պատվին:

ՈՒԱՅՆԱ ՊՈՏՈՍԻ - իսպաներեն Huayna Potosí, այմարա Wayna Putusi. լեռ Բոլիվիայի հյուսիս-արևմուտքում՝ **Անդերի** Կորդիլյեռա Ռեալ լեռնաշղթայում: Բացարձակ բարձրությունը՝ 6 088 մ:
Անվանումն առաջացել է այմարա լեզվի huayna (wayna) *երիտասարդ* և potosi *բլուր* բառերի միացումից՝ *Երիտասարդ բլուր* :

ՈՒԱՅՆԱՊՈՒՏԻՆԱ - իսպաներեն Huaynaputina, կեչուա Waynaputina rit'iq. ստրատոհրաբուխ Պերուի հարավում՝ Կորդիլյեռա Վոլկանիկա լեռնազանգվածում: Բարձրությունը՝ 4 850 մ:
Անվանումը կազմված է կեչուա լեզվի wayna *երիտասարդ* և putina *հրաբուխ* բառերի միացումից՝ *Երիտասարդ հրաբուխ* :

ՈՒԱՆԴՈՅ - իսպաներեն Huandoy, կեչուա Tullparahu. քառագագաթ լեռ Պերուում: Բացարձակ բարձրությունը՝ 6 395 մ, հարաբերականը՝ 1 645 մ:
Նախկինում հայտնի էր *Տուլպարահու* անվամբ:
Լեռան այժմյան իսպաներեն անվան հիմքում ընկած է կեչուա լեզվի wantuy *տեղափոխում* բառը:

ՈՒԱՍԿԱՐԱՆ - իսպաներեն Huascarán Sur, կեչուա Waskaran urqu. եռագագաթ լեռ Պերուում՝ **Անդերի** Կորդիլյեռա Բլանկա լեռնազանգվածում: Բացարձակ բարձրությունը՝ 6 768 մ, հարաբերականը՝ 2 776 մ:
Նախկինում հայտնի էր նաև *Մատաշ ռահու* անվամբ:
Այժմյան անվանումն առաջացել է կեչուա լեզվի waska *պարան* և run ածանցի միացումից:

ՈՒԲԻՆԱՍ - իսպաներեն Ubinas, կեչուա Uwinas. գործող ստրատոհրաբուխ Պերուի հարավ-արևմուտքում: Բացարձակ բարձրությունը՝ 5 672 մ (2019թ.):
Անվանումը հավանաբար առաջացել է կեչուա լեզվի uina *լցոնել* կամ uiña *աճել* բառերից:

Մեկ այլ վարկածի համաձայն անվանումն առաջացել է այմարա լեզվի hupi *հեկեկալ, կարկաչել* բառից, որի սեռական հոլովը hupina-ն է:
Հայտնի է նաև *Ուվիլյաս* կամ *Ուվինաս* անվամբ:

ՈՒԻԼԱ - իսպաներեն Nevado del Huila. գործող ստրատոհրաբուխ Կոլումբիայում, **Անդերի Կենտրոնական Կորդիլյեռա** լեռնաշղթայում: Բացարձակ բարձրությունը՝ 5 364 մ (2019 թ.), հարաբերականը՝ 2 650 մ:
Անվանումը տեղաբնիկ հնդկացիների լեզվից թարգմանաբար նշանակում է *Նարինջ*:
Մեկ այլ վարկածի համաձայն անվանումն առաջացել է հնդկացիական պաես լեզվից և բառացի նշանակում է *Ճառագող (փայլող) սար*:

ՈՒՏՈՒՐՈՒՆԿՈՒ - իսպաներեն Uturuncu, կեչուա Uturunku. ստրատոհրաբուխ Բոլիվիայի հարավ-արևմուտքում՝ **Ալտիպլանո** սարահարթում: Բացարձակ բարձրությունը՝ 6 008 մ:
Անվանումը կեչուա լեզվից թարգմանաբար նշանակում է *Յագուար*:
Հայտնի է նաև *Ուտուրունկո* անվամբ:

ՈՒՐԱԲԱ - իսպաներեն Golfo de Urabá. ծոց Կարիբյան ծովի հարավարևմտյան մասում՝ Կոլումբիայում: Երկարությունը՝ 99 կմ, լայնությունը՝ մինչև 65 կմ: Միջին խորությունը՝ 25 մ , առավելագույնը՝ 54 մ:
1500 թ-ին Մարտին Ֆերնանդես դե Էնսիսոյի կողմից ստացել է Urabn անվանումը, որը հնդկացիական կատիա լեզվում բառացի նշանակում է *Քաղցրահամ ջուր*:

ՈՒՐՈՒ ՈՒՐՈՒ - իսպաներեն Lago Uru Uru. լիճ Բոլիվիայում: 1962 թ-ին հունի փոփոխության արդյունքում կազմավորվել է Դեսագուադերո օ Աուլյագաս գետի վրա: Երկարությունը՝ մինչև 21 կմ, լայնությունը՝ մինչև 16 կմ: Մակերեսը՝ 214 կմ^2: Միջին խորությունը՝ 0,7 մ, առավելագույնը՝ 1,5 մ: Ծավալը՝ 1,5 կմ^3: Հայելու մակերեսի բարձրությունը՝ 3 710 մ: Ափագծի երկարությունը՝ շուրջ 108 կմ: Լիճն է թափվում և արտահոսում Դեսագուադերո օ Աուլյագաս գետը:
Անվանվել է այս վայրերում բնակվող հնդկացիական *ուրու ուրու* ցեղի պատվին:

ՈՒՐՈՒԳՎԱՅ - իսպաներեն Río Uruguay, պորտուգալերեն Rio Uruguai. գետ Բրազիլիայում, Ուրուգվայում և Արգենտինայում: Կազմավորվում է Պելոտաս և Կանոաս գետերի միախառնումից և հոսելով արևմտյան, ապա հարավային ուղղությամբ՝ թափվում **Լա Պլատա** ծոցը: Վտակներն են՝ Իբիկուի, Նեգրո, Իժուի, Շապեկո, Դայման և այլ գետեր: Երկարությունը՝ 1 779 կմ (2 340 կմ՝ Կանոասի հետ): Ջրի ծախսը՝ 4 900 մ^3/վրկ: Ջրահավաք ավազանը՝ 370 000 կմ^2:
Անվանումը կազմված է նրա ափերին ապրող urú *ուրու* փոքր թռչնի անվան և agua *ջուր* բառի միացումից:
Մեկ այլ վարկածի համաձայն անվանումը կազմված է հնդկացիական գուարանի լեզվի քաղցրահամ ջրերի urugua՝ խխունջի տեսակի անվան և y *ջուր* բառերի միացումից:

Ք

ՔՈԿԲՅՈՌՆ - իսպաներեն Canal Cockburn. նեղուց Չիլիի հարավում՝ չիլիական Անտարկտիկայում: Իրարից բաժանում է **Մեծ Հրո երկիր** կղզու արևմուտքում գտնվող Բրեքնոք թերակղզին **Կլարենս**, **Կապիտան Արասենա** և այլ կղզիներից:
Նախկինում հայտնի էր *Լա Մագդալենա* անվամբ:
1828 թ-ին Ֆիլիպ Պարկեր Քինգի և Ռոբերտ Ֆից Ռոյի ղեկավարած արշավախմբի կողմից անվանվել է անգլիացի զինվորական և պետական գործիչ *Ջորջ Քոկբյոռնի* պատվին:

ՔՈԿՐԵՅՆ / ՊՈՒԵՅՌԵԴՈՆ - իսպաներեն Lago Cochrane / Pueyrredón. սառցադաշտային լիճ Չիլիում և Արգենտինայում՝ Պատագոնյան Անդերում: Երկարությունը՝ մինչև 83 կմ, լայնությունը՝ 1-8 կմ: Մակերեսը՝ 325 կմ^2: Առավելագույն խորությունը՝ 460 մ: Հայելու մակերեսի բարձրությունը՝ 152 մ: Ջրահավաք ավազանը՝ 2 300 կմ^2: Լճի սնուցումը հիմնականում կատարվում է հարավային **Անդերի** արևելյան եզրին գտնվող սառցադաշտերից, արտահոսքը՝ Բեյքեր գետի համակարգի միջոցով:
Չիլիում հայտնի է Քոկրեյն, Արգենտինայում՝ Պուեյռեդոն անվամբ: Լճի չիլիական մասը անվանվել է բրիտանացի ծովակալ և Չիլիի ռազմածովային ուժերի հրամանատար *Թոմաս Քոկրեյնի* պատվին, արգենտինական մասը անվանվել է զինվորական և քաղաքական գործիչ *Խուան Մարտին դե Պուեյռեդոն ի Օ՛Դոգանի* պատվին:

Օ

Օ՛ՀԻԳԻՆՍ / ՍԱՆ ՄԱՐՏԻՆ - իսպաներեն Lago O'Higgins / San Martín. ֆիորդատիպ լիճ Չիլիում և Արգենտինայում՝ Պատագոնյան Անդերում: Երկարությունը՝ մինչև 130 կմ, լայնությունը՝ 2-8 կմ: Մակերեսը՝ 1 013 կմ^2: Առավելագույն խորությունը՝ 836 մ: Հայելու մակերեսի բարձրությունը՝ 252 մ: Ափագծի երկարությունը՝ շուրջ 525 կմ: Ջրահավաք ավազանը՝ 14 020 կմ^2: Լճի սնուցումը հիմնականում կատարվում է Օ՛Հիգինս և Չիկո սառցադաշտերի, Մայեր գետի և բազմաթիվ մանր առվակների միջոցով,արտահոսումը՝ Պասկուա գետով:
Չիլիում հայտնի է Օ՛Հիգինս, Արգենտինայում՝ Սան Մարտին անվամբ: Լճի չիլիական մասը անվանվել է Չիլիի ազգային հերոս և անկախության պայքարի ղեկավարներից մեկի, Պերուի Մեծ մարշալ *Բեռնարդո Օ՛Հիգինս Ռիկելմեի* պատվին, արգենտինական մասն անվանվել է Արգենտինայի ազգային հերոս և անկախության պայքարի ղեկավարներից մեկի *Խոսե Ֆրանսիսկո դե Սան Մարտին ի Մատորասի* պատվին:

ՕԽՈՍ ԴԵԼ ՍԱԼԱԴՈ - իսպաներեն Nevado Ojos del Salado. երկրագնդի ամենաբարձր հրաբուխը և Հարավային Ամերիկայի բարձրությամբ 2-րդ գագաթը **Ակոնկագուա** լեռից հետո, Արգենտինայի և Չիլիի սահմանագլխին՝ գագաթը Արգենտինայում է: Հրաբխի Արգենտինյան կողմում 6 390 մ բարձրության վրա է գտնվում հավանաբար երկրագնդի ամենաբարձրադիր լիճը: Բացարձակ բարձությունը՝ 6 891,3 մ, հարաբերականը՝ 3 688 մ:
Իսպաներեն Nevado Ojos del Salado անվանումը թարգմանաբար նշանակում է *Ձյունե Սալադո(-յի)* գետի *ակ* :

ՕՆԴԱ - իսպաներեն Bahía Honda. Կարիբյան ծովի ծոց Կոլումբիայում՝ **Լա Գուախիրա** թերակղզու հյուսիսարևմտյան մասում: Երկարությունը՝ մինչև 19 կմ, լայնությունը՝ մինչև 11 կմ: Մակերեսը՝ մոտ 95 կմ^2:
Անվանումն իսպաներենից թարգմանաբար նշանակում է *Խորք*, որով արծարծվում է ծոցի խորը լինելու հանգամանքը:

ՕՍՏԵ - իսպաներեն Isla Hoste. լեռնոտ կղզի **Հրո երկիր** կղզեխմբի հարավային մասում: Երկարությունը՝ 139 կմ, լայնությունը՝ 92 կմ: Մակերեսը՝ 4 117 կմ^2: Բարձր կետը՝ 1 402 մ:
Անվանվել է բրիտանացի նավապետ *սըր Ուիլյամ Հոստի* պատվին:

ՕՐԻՆՈԿՈ - իսպաներեն Río Orinoco, պորտուգալերեն Rio Orinoco. գետ Վենեսուելայում և Կոլումբիայում: Կազմավորվում է **Գվիանական** սարահարթի հարավարևմտյան մասից սկիզբ առնող Վենեսուելա և Ուգետո գետերի միախառնումից և հիմնականում հոսելով հյուսիսարևմտյան ուղղությամբ ու կազմելով ընդարձակ դելտա՝ թափվում Ատլանտյան օվկիանոս: Վտակներն են՝ **Գուավյարե**, Մետա, Ապուրե, Արաուկա, Կարոնի, Կաուրա և այլ գետեր: Երկարությունը՝ 2 140 կմ: Ջրի ծախսը՝ 33 000 մ^3/վրկ: Ջրահավաք ավազանը՝ 989 000 կմ^2:
Անվանումն առաջացել է գետի հնդկացիական օտոմակո ցեղի Orinucu *Մեծ գետ* անունից:

Ֆ

ՖԱՆՅԱՆՈ - իսպաներեն Lago Fagnano. խոշոր լիճ Արգենտինայում և Չիլիում՝ **Մեծ Հրո երկիր** կղզում: Երկարությունը՝ մինչև 101 կմ, լայնությունը՝ 2-10 կմ: Մակերեսը՝ 590,3 կմ^2: Միջին խորությունը՝ 200 մ, առավելագույնը՝ 400 մ: Ծավալը՝ 118 կմ^3: Հայելու մակերեսի բարձրությունը՝ 28 մ: Ափագծի երկարությունը՝ շուրջ 194 կմ: Լիճն են թափվում Բետբեդեր, Պալասյոս, Բոմբիլյա, Միլնա, Տուերտո և այլ գետեր, իսկ արտահոսում՝ Ասոպարդո գետը:
Անվանվել է իտալացի կաթոլիկ քարոզիչ *Ջուզեպե (Խոսե) Ֆանյանոյի* պատվին:
Հայտնի է նաև *Կամի (Խամի)* անվամբ:

ՖՈԼԿԼԵՆԴՅԱՆ ԿՂԶԻՆԵՐ - անգլերեն Falkland Islands, իսպաներեն Islas Malvinas. կղզեխումբ Ատլանտյան օվկիանոսի հարավարևմտյան մասում: Մակերեսը՝ 12 173 կմ^2: Ափագծի երկարությունը՝ մոտ 1 300 կմ: Կազմված է 2 խոշոր՝ Արևելյան ու Արևմտյան և 776 մանր կղզիներից ու ժայռերից: Բարձր կետը Օսբոռն/Ալբերդի գագաթն է 705 մ, (**Արևելյան Ֆոլկլենդ**):
Կղզիները վարչականորեն պատկանում են Միացյալ Թագավորությանը, որը սակայն վիճարկվում է Արգենտինայի կողմից:
Արգենտինայում կղզիները հայտնի են Մալվինյան անվամբ:
Կղզիները Ֆոլկլենդյան անվանումը ստացել են կղզեխմբի 2 գլխավոր կղզիների միջև գտնվող **Ֆոլկլենդյան նեղուցից**, որն իր հերթին 1690 թ-ին անգլիացի ծովագնաց Ջոն Ստրոնգի կողմից ստացել է իր ղեկավար *Էնտոնի Քերի, Ֆոլկլենդ 5-րդ վիկոնտի* պատվին:
Կղզիների իսպաներեն՝ Մալվինյան անվան հիմքում ընկած է ֆրանսերեն Îles Malouines անվանումը, որը նրանք ստացել են 1764 թ-ին ֆրանսիացի ծովագնաց Լուի Անտուան

դը Բուգենվիլի կողմից, ի պատիվ կղզիների առաջին վերաբնակիչների, որոնք այստեղ են բնակություն հաստատել ֆրանսիական Saint-Malo *Սեն Մալո* նավահանգստից:

ՖՈԼԿԼԵՆԴՅԱՆ ՆԵՂՈՒՑ - անգլերեն Falkland Sound, իսպաներեն Estrecho de San Carlos. **Ֆոլկլենդյան կղզեխմբի** գլխավոր **Արևմտյան Ֆոլկլենդ** և **Արևելյան Ֆոլկլենդ** կղզիները իրարից բաժանող նեղուց: Երկարությունը՝ 90 կմ, նվազագույն լայնությունը՝ 4,6 կմ:
Անվանվել է 1690 թ-ին անգլիացի ծովագնաց Ջոն Ստրոնգի կողմից, իր ղեկավար *Էնտոնի Քերի, Ֆոլկլենդ 5-րդ վիկոնտի* պատվին:
Հայտնի է նաև *Սան Կառլոս* անվամբ:

ՖՐՈՈՒԱՐԴ - իսպաներեն Cabo Froward. հրվանդան Չիլիում, **Մագելանի նեղուցի** ափին, **Բրանսուիկ** թերակղզում, Հարավային Ամերիկայի հարավային մայրցամաքային ծայրակետը 53′ 53′ 34.63″ S, 71′ 18′ 23.1″ W կոորդինատներով:
1587 թ-ի հունվարին անվանվել է անգլիացի ծովահեն Թոմաս Քևենդիշի կողմից: Անունն անգլերենից թարգմանաբար նշանակում է *Քմահաճ, անբարենպաստ*:

ՖՈՒՄԱՍԱ - պորտուգալերեն Cachoeira da Fumaça. ջրվեժ Բրազիլիայում: Անկման բարձրությունը՝ 381 մ:
Անվանումը պորտուգալերենից թարգմանաբար նշանակում է *Ծուխ,* այդպես է անվանվել ջրի սակավության պատճառով, որը մինչ գետնին հասնելը փոշիանում է:

Հարավային Ամերիկայի
խոշոր ֆիզաշխարհագրական օբյեկտների
տեղեկատու-բառարան

Տեղեկատու-բառարանը կազմվել է

Հայաստանի Հանրապետության

Կադաստրի կոմիտեի

Գեոմատիկայի կենտրոնի կողմից

Գլխավոր խմբագիր՝ Յու. Վարյան

Խմբագիր՝ Վ. Թովմասյան